




Արդյունահանող ճյուղերի
թափանցիկության նախաձեռնություն


ԱՃԹՆ-Ի ՍՏԱՆԴԱՐՏ 2019 ԹՎԱԿԱՆ

Նավթի, գազի և պինդ օգտակար
հանածոների պաշարների
արդյունավետ կառավարման
գլոբալ ստանդարտ

15 հոկտեմբերի, 2019թ.



ԱՃԹՆ-ի ստանդարտի ամբողջական հրատարակություն, որը բովանդակում է առաջին գլուխը՝ «ԱՃԹՆ-ի ստանդարտի իրականացումը», և երկրորդ գլուխը՝ «Ղեկավարումը և կառավարումը»:



ԱՃԹՆ-ի ստանդարտի համառոտ հրատարակություն, որը բովանդակում է առաջին գլուխը՝ «ԱՃԹՆ-ի ստանդարտի իրականացումը»:



ԱՃԹՆ-ի վեբ կայքը, որը բովանդակում է ամբողջական ԱՃԹՆ-ի ստանդարտը, ուղղորդիչ փաստաթղթեր և օրինակներ:

eiti.org/guide

ԱՃԹՆ-ի Ստանդարտ 2019

2-րդ հրատարակություն, 15-ը հոկտեմբերի, 2019թ.

ԱՃԹՆ-ի 2019թ. Ստանդարտի առաջին խմբագրույթը մշակվել է 2019թ. գլոբալ համաժողովի համար: Սույն երկրորդ խմբագրույթը ներառում է Կանոնադրությունը՝ այն տեսքով, ինչպիսի հաստատվել է Անդամների հունիսի 17-ի ժողովի ժամանակ:

ԱՃԹՆ-ի Միջազգային քարտուղարություն

Սույն հրատարակությունը (բացառությամբ պատկերանշանի) կարող է անվճար վերատպագրվել ցանկացած ձևաչափով կամ եղանակով՝ պայմանով, որ վերատպագրվի ճշգրտորեն և չօգտագործվի ապակոդմնորոշիչ համատեքստում:

Նյութը պետք է ճանաչվի որպես ԱՃԹՆ-ի հեղինակային իրավունքի օբյեկտ՝ նշելով հրատարակության վերնագիրը և սկզբնաղբյուրը:

Տպագրական ձևավորման և դիզայնի հեղինակային իրավունքը պատկանում է ԱՃԹՆ-ին:

Դիզայնը՝ Սյու Մաքրոնալդի

ԱՃԹՆ-ի Միջազգային քարտուղարություն

Նորվեգիա, Օսլո 0151, Ռոդիուսկաթա 26

Հեռ.՝ +47 222 00 800 Վեբ կայք՝ www.eiti.org E-mail: secretariat@eiti.org

ԱՃԹՆ-Ի ՍՏԱՆԴԱՐՏ 2019 ԹՎԱԿԱՆ

Նավթի, գազի և պինդ
օգտակար հանածոների
պաշարների արդյունավետ
կառավարման գլոբալ
ստանդարտ

ԻՆՉՊԵՍ Է ԳՈՐԾՈՒՄ ԱՃԹՆ-Ն ԵՎ ԻՆՉՊԵՍ Է ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԹՈՂՆՈՒՄ



ԲՆԱԿԱՆ
ՊԱՇՏԱՐՆԵՐ



ԱՃԹՆ-Ի ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԾԱԾԿՈՒՅԹԸ



ՊԱՅՄԱՆԱ-
ԳՐԵՐ ԵՎ
ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ



ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ



ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ



ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ՀԱՏԿԱՑՈՒՄ



ՍՈՑԻԱԼ-
ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԾԱԽՆԵՐ



ՀԱՆՐԱՅԻՆ
ՇԱՀ



Ազգային
բազմաշահառու
խմբերը վերահսկում
են տվյալների
հրապարակումը ...



... վերհանում են
կառավարության
ոփսկերը և խթանում
բանավեճը և
բարեփոխումների
իրականացումը
հիմնվելով հանրության
համար հասանելի
տվյալների վրա:



... Վստահելի և բաց
տվյալները հիմք են
ապահովում առավել
արդյունավետ
կառավարման, նոր
ներդրումների և
զարգացման համար:

Բովանդակություն

Նախաբան	4
Ներածություն	5
ԳԼՈՒԽ I	6
ԱՃԹՆ-ի ստանդարտի իրականացումը	6
1. ԱՃԹՆ-ի սկզբունքները	6
2. ԱՃԹՆ-ն իրականացնող երկիր դառնալը	8
3. ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները	10
Բազմաշահառու խմբի կողմից իրականացվող վերահսկողությունը	12
Իրավական և ինստիտուցիոնալ շրջանակը, ներառյալ՝ պայմանագրերի և լիցենզիաների տրամադրումը	18
Հետախուզումը և արդյունահանումը	27
Եկամուտների հավաքումը	28
Եկամուտների բաշխումը	35
Սոցիալական և տնտեսական ծախսերը	38
Արդյունքները և ազդեցությունը	41
4. ԱՃԹՆ-ի իրականացման նկատմամբ ԱՃԹՆ-ի խորհրդի վերահսկողությունը	45
5. Վավերացման գործընթացի ամփոփ նկարագիրը	56
6. Արձանագրություն. Քաղաքացիական հասարակության մասնակցությունը	59
7. Ակնկալիքները ԱՃԹՆ-ին աջակցող ընկերություններից	65
8. Բաց տվյալների քաղաքականությունը	66
ԳԼՈՒԽ II	71
Ղեկավարումը և կառավարումը	71
9. Ասոցիացիայի Կանոնադրություն	73
10. ԱՃԹՆ-ի հրապարակայնության քաղաքականությունը	86
11. ԱՃԹՆ-ի խմբակցությունների ուղեցույցները	88
12. ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի վարքի կանոնները	89

Նախաբան



Արդյունահանող ճյուղերը առանցքային տեղ են գրառեցնում համաշխարհային տնտեսության մեջ: Այսօր աշխարհի 7,5 միլիարդ բնակիչների կենս ապրում է բնական պաշարներով հարուստ երկրներում,

մյուսները կենսապահովման համար ապավինում են այդ երկրների պաշարներին: Նավթի, գազի և պինդ օգտակար հանածոների արդյունահանման ծրագրերը խթանել են տնտեսական աճը, էներգիայի հասանելիությունը և ենթակառուցվածքների զարգացումը: Նման օգուտները լիարժեք կերպով իրականացնելու համար ոլորտին անհրաժեշտ է թափանցիկ և հաշվետու կառավարում:

ԱՀԹՆ-ի ստանդարտը սրամադրում է մի շրջանակ և գործընթաց՝ նավթի, գազի և պինդ օգտակար հանածոների արդյունահանման ոլորտներում թափանցիկությունը և հաշվետվողականությունը խթանելու համար: Դա եզակի, կենդանի փաստաթուղթ է, որը ձևավորվել է 52 իրականացնող երկրների կողմից: Ստանդարտի յուրաքանչյուր մշակում հիմնված է ազգային և միջազգային մակարդակներում նորահայտ գործելակերպի վրա՝ ոլորտի ինչպես անթափանցելի հատվածներին, այնպես էլ կոռուպցիայի գնալով ավելի բարդացող ձևերին անորոշադրանալու նպատակով:

2019-ի ԱՀԹՆ-ի ստանդարտը նորարարական է՝ առաջին անգամ ներառում է ակնկալիքների մի շարք ԱՀԹՆ-ին աջակցող ընկերություններից, ինչպես նաև դրույթներ բնապահպանական, սոցիալական և գենդերային ազդեցությունների վերաբերյալ: Նշված հիմնահարցերը գլոբալ օրակարգի առաջնահերթ կետերից են, և ստանդարտում դրանց հղումներ կատարելը կնպաստի ԱՀԹՆ-ի շարունակվող նշանակալիությանը փոփոխվող աշխարհում: Ինչ վերաբերում է ֆիսկալ և իրավական հիմնահարցերին, ապրանքների իրացման վերաբերյալ նախկինում չիրապարակված տվյալները այժմ կբացահայտվեն, իսկ նոր պայմանագրերը կիրապարակվեն 2021 թվականից սկսած: Ստանդարտը նաև կիրարկում է լայնորեն տարածվող՝ ըստ առանձին ծրագրերի վճարումները

հաղորդելու նորմը՝ պահանջելով ավելի մանրամասն բացահայտումներ, քան՝ երբևէ: Այս նոր պահանջները կշարունակեն ԱՀԹՆ-ի ստանդարտը դարձնել բարեփոխումների օգտակար գործիք:

Ստանդարտն աճել-ծավալվել է այն հավակնությանը զուգահեռ, որ կառավարությունները և ընկերությունները պետք է համակարգված կերպով բացահայտեն տեղեկատվություններ՝ առցանց, բաց տվյալների ձևաչափերով: Դա տվյալները կդարձնի ավելի պատեհաժամ, օգտակար և ծախսարդյունավետ, ինչը հնարավորություն կտա օգտագործողներին և քաղաքացիներին թերևս ուշադրությունը կենտրոնացնել տեղեկությունները վերլուծելու և դրանց արծազանքելու, քան՝ հավաքելու և ճշտելու վրա: Նման համակարգային բացահայտումներին միջոցով կառավարությունները և ընկերություններն ի վիճակի կլինեն ցույց տալ, որ ոչինչ չունեն թաքցնելու՝ դրանով իսկ նպաստելով շահագրգիռ կողմերի միջև վստահության կերտմանը:

2019 թվականի ստանդարտը բարձրացնում է նավթի, գազի և պինդ օգտակար հանածոների արդյունահանման ոլորտներում արդյունավետ կառավարման նշանոցը: Այնուամենայնիվ, մի բան է՝ համաձայնել ստանդարտի շուրջ, մեկ այլ բան՝ գործունեությունը համապատասխանեցնել դրան: Այժմ ուշադրության կենտրոնում պետք է լինի ԱՀԹՆ-ի անդամ երկրներին օժանդակելը՝ արդիականացված ստանդարտն իրականացնելու, ինչպես նաև տվյալների բացահայտման, երկխոսության դյուրացման և վստահության կերտման միջոցով ազդեցություն ստեղծելու գործում: Սա կպահանջի ներդրումներ գիտելիքների ձևավորման, կարողությունների հզորացման և տեղական համայնքներին նոր պահանջներին վերաբերյալ տեղեկություններ հասցնելու գործում:

Helen Clack

Պատվարժան Հելեն Բլաք,

2019-2022 թթ. ԱՀԹՆ-ի հստորիքի Նախագահ
17-ը հունիսի, 2019 թ.

Ներածություն

Սույն ԱՃԹՆ-ի ստանդարտը բաղկացած է երկու գլուխներից. առաջին գլուխ՝ «ԱՃԹՆ-ի ստանդարտի իրականացումը», և երկրորդ գլուխ՝ «Ղեկավարումը և կառավարումը»:

Առաջին գլուխը՝ «ԱՃԹՆ-ի ստանդարտի իրականացումը», ներառում է.

- **ԱՃԹՆ-ի սկզբունքները,** որոնք 2003 թվականին համաձայնեցրել են բոլոր շահագրգիռ կողմերը: Այս սկզբունքներով սահմանվում են ընդհանուր նպատակները և բոլոր շահագրգիռ կողմերի ստանձնած հանձնառությունները:
- **ԱՃԹՆ-ի պահանջները,** որոնք պետք է պահպանվեն ԱՃԹՆ-ն իրականացնող երկրների կողմից:
- **«ԱՃԹՆ-ի իրականացման նկատմամբ ԱՃԹՆ-ի հստիքի վերահսկողությունը»,** բաժինը, որտեղ ներկայացված են այն ժամկետները, որոնք պետք է պահպանվեն իրականացնող երկրների կողմից, և ԱՃԹՆ-ի պահանջները բավարարելու առաջընթացի բացակայության դեպքում առաջացող հետևանքները:
- **Վավերացման գործընթացի ամփոփ նկարագիրը:** Վավերացումը շահագրգիռ կողմերին տրամադրում է ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջների բավարարման ուղղությամբ ԱՃԹՆ-ի իրականացման առաջընթացի անկողմնակալ գնահատական:
- **«Քաղաքացիական հասարակության մասնակցությունը» արձանագրությունը,** որում շարադրված են ԱՃԹՆ-ի իրականացման գործում քաղաքացիական հասարակության մասնակցությանը վերաբերող պահանջները և ակնկալիքները:
- **Ակնկալիքները ԱՃԹՆ-ին աջակցող ընկերություններից:**
- **Բաց տվյալների քաղաքականությունը:**

ԱՃԹՆ-ի ստանդարտի առաջին մասի վերաբերյալ **ուղղորդումները** հասանելի են eiti.org/guide հասցեով:

Երկրորդ գլուխն անդրադառնում է ԱՃԹՆ-ի «Ղեկավարմանը և կառավարմանը»: Ներառում է «Ասոցիացիայի Կանոնադրությունը», որն անդրադառնում է այն հարցին, թե ինչպես է ղեկավարվում ԱՃԹՆ-ի անդամների Ասոցիացիան, ինչպես նաև «ԱՃԹՆ-ի հրապարակայնության քաղաքականությունը», որն անդրադառնում է այն հարցին, որ իր՝ ԱՃԹՆ-ի, գործունեությունը պետք է լինի թափանցիկ: Ասոցիացիայի յուրաքանչյուր խմբակցություն համաձայնության է եկել «**խմբակցությունների ուղեցույցների**» շուրջ: Երկրորդ գլուխը ներառում է նաև «ԱՃԹՆ-ի ասոցիացիայի վարքի կանոնները», որոնցով սահմանվում են ակնկալիքները ԱՃԹՆ-ի հստիքի բոլոր անդամների, նրանց փոխարինողների (այլընտրանքային անդամների), ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի անդամների, ազգային և Միջազգային քարտուղարության աշխատակազմի անդամների և բազմաշահառու խմբերի անդամների վարքից:

ԳԼՈՒԽ I

ԱՃԹՆ-Ի ստանդարտի իրականացումը

1. ԱՃԹՆ-ի սկզբունքները

Պետությունների, ընկերությունների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների տարբեր խմբեր ներկա գտնվեցին Միացյալ Թագավորության կառավարության կողմից Լոնդոնի Լանքասթեր Հաուսում կազմակերպված Համաժողովին (2003 թվական): Նրանք համաձայնության եկան սկզբունքների մասին հայտարարության շուրջ՝ արդյունահանող ոլորտի վճարումների և եկամուտների թափանցիկությունը բարձրացնելու նպատակով: Այդ սկզբունքները հայտնի են որպես ԱՃԹՆ-ի սկզբունքներ, որոնք հանդիսանում են ԱՃԹՆ-ի անկյունաքարը:

Ներդիր 1. ԱՃԹՆ-ի սկզբունքները

1. Մենք կիսում ենք այն համոզմունքը, որ բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործումը պետք է լինի կայուն տնտեսական աճի կարևոր շարժիչ ուժ, որը նպաստում է կայուն զարգացմանը և աղքատության կրճատմանը, իսկ դրա ոչ պատշաճ կառավարումը կարող է հանգեցնել բացասական տնտեսական և սոցիալական հետևանքների:
2. Մենք հաստատում ենք, որ բնական ռեսուրսների կառավարումն՝ ի նպաստ երկրի քաղաքացիների, ինքնիշխան կառավարությունների տիրույթում է, որը պետք է իրականացվի՝ ելնելով տվյալ երկրի ազգային զարգացման շահերից:
3. Մենք ընդունում ենք, որ ռեսուրսների արդյունահանման օգուտներն արտահայտվում են բազմամյա եկամտային հոսքերով և կարող են մեծապես կախված լինել գներից:
4. Մենք ընդունում ենք, որ կառավարության եկամուտների և ծախսերի մասին հանրային ընկալումը ժամանակի ընթացքում կարող է նպաստել հանրային

2. ԱՃԹՆ-Ն իրականացնող երկիր դառնալը

երկխոսությանը և կայուն զարգացմանն ուղղված առավել նպատակահարմար և իրատեսական տարբերակների իրազեկ ընտրությանը:

5. Մենք ընդգծում ենք կառավարությունների և արդյունահանող ճյուղերում գործունեություն ծավալող ընկերությունների կողմից թափանցիկության ապահովման կարևորությունը և հանրային ֆինանսների կառավարման ու հաշվետվողականության բարելավման անհրաժեշտությունը:
6. Մենք ընդունում ենք, որ ավելի մեծ թափանցիկության ապահովումը պետք է իրականացվի պայմանագրային իրավունքի և օրենքների պահպանման համատեքստում:
7. Մենք գիտակցում ենք, որ ֆինանսական թափանցիկության բարելավումը կարող է հանգեցնել ներքին և արտաքին ուղղակի ներդրումների ավելացմանը:
8. Մենք հավատում ենք կառավարության կողմից եկամուտների հոսքի և հանրային ծախսերի կառավարման հարցում բոլոր քաղաքացիների առջև հաշվետվողականության ապահովման սկզբունքին և դրա գործնական կիրառությանը:
9. Մենք հանձնառու ենք հասարակական կյանքում, կառավարության գործառնություններում և բիզնեսում թափանցիկության ու հաշվետվողականության բարձր ստանդարտների խրախուսմանը:
10. Մենք հավատացած ենք, որ վճարումների և եկամուտների բացահայտման հարցում հարկավոր է որդեգրել հետևողական և իրագործելի մոտեցում, որը հեշտ կլինի ստանձնել և կիրառել:
11. Մենք հավատացած ենք, որ տվյալ երկրում վճարումների բացահայտման գործընթացը պետք է ընդգրկի այդ երկրի արդյունահանող ճյուղերում գործունեություն ծավալող բոլոր ընկերությունները:
12. Ձգտելով գտնել լուծումներ՝ մենք հավատացած ենք, որ բոլոր շահագրգիռ կողմերը, ներառյալ՝ կառավարությունները և պետական գործակալությունները, արդյունահանող ճյուղերում գործունեություն ծավալող ընկերությունները, ծառայություններ տրամադրող ընկերությունները, բազմակողմ կազմակերպությունները, ֆինանսական կազմակերպությունները, ներդրողները և հասարակական կազմակերպությունները, այս գործում պետք է ունենան իրենց կարևոր և պատշաճ ներդրումը:

2. ԱՃԹՆ-Ն ԻՐԱԿԱՆԱԳՆՈՂ ԵՐԿԻՐ ԴԱՌՆԱԼՈՒ

2. ԱՃԹՆ-Ն ԻՐԱԿԱՆԱԳՆՈՂ ԵՐԿԻՐ ԴԱՌՆԱԼՈՒ

Նախքան ԱՃԹՆ անդամ երկիր դառնալու համար հայտ ներկայացնելը ԱՃԹՆ-ի իրականացում նախատեսող երկիրը պարտավոր է ձեռնարկել մի շարք քայլեր: Այդ քայլերն առնչվում են՝ կառավարության ստանձնած հանձնառությանը (1.1), ընկերությունների ներգրավվածությանը (1.2), քաղաքացիական հասարակության ներգրավվածությանը (1.3), բազմաշահառու խմբի ստեղծմանը (1.4) և ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի համաձայնեցմանը (1.5): 10-14-րդ էջերում մանրամասնորեն սահմանված են նշված քայլերի վերաբերյալ դրույթները: Եթե ցանկանում է ճանաչվել որպես ԱՃԹՆ-ն իրականացնող երկիր, վերոնշյալ քայլերի իրականացումից հետո կառավարությունը պետք է ԱՃԹՆ-ի հստակորդ ներկայացնի ԱՃԹՆ-ի հայտը (տես Ներդիր 2-ը):

Խրախուսվում է, որ այն երկրները, որոնք նախապատրաստվում են միանալ ԱՃԹՆ-ին, ի սկզբանե վերհանեն համակարգային բացահայտումների հնարավոր խոչընդոտները, օրինակ, անցկացնելով համակարգային բացահայտումների իրագործելիության ուսումնասիրություն կամ անդրադառնալով համակարգային բացահայտումների հնարավորություններին՝ որպես ԱՃԹՆ-ն իրականացնող երկիր դառնալու նախապատրաստությունների մաս:

Ներդիր 2. Ինչպես դառնալ ԱՃԹՆ-ն իրականացնող երկիր

Երբ երկիրն ավարտել է ԱՃԹՆ-ին միանալու քայլերի իրականացումը և ցանկանում է ճանաչվել որպես ԱՃԹՆ-ն իրականացնող երկիր, կառավարությունը պետք է ներկայացնի բազմաշահառու խմբի կողմից հաստատված ԱՃԹՆ-ի հայտ:¹ Հայտում պետք է նկարագրվեն մինչև տվյալ պահը ձեռնարկված գործողությունները և ներկայացվեն ԱՃԹՆ-ին միանալու յուրաքանչյուր քայլի իրականացման ապացույցներ: Հայտը պետք է ներառի ԱՃԹՆ-ի գործընթացում ներգրավված կառավարության, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի շահագրգիռ կողմերի կոնտակտային տվյալները:

Ներկայացվելուց հետո հայտը հասանելի կդարձվի հանրությանը ԱՃԹՆ-ի կայքում: ԱՃԹՆ-ի հստակորդը կուսումնասիրի հայտը և կգնահատի ԱՃԹՆ-ին միանալու քայլերի իրականացումը: Միջազգային քարտուղարությունը ցանկացած խնդրահարույց հարցի հստակեցման նպատակով սերտորեն կհամագործակցի կառավարության կողմից նշանակված՝ ԱՃԹՆ-ի իրականացումը ղեկավարող բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ: Այս և առկա այլ տեղեկությունների հիման վրա ԱՃԹՆ-ի հստակորդի Իրազեկման և թեկնածության հարցերով կոմիտեն ողջամիտ ժամանակահատվածում ԱՃԹՆ-ի հստակորդ կներկայացնի իր առաջարկությունը երկրի հայտը ընդունելու վերաբերյալ: Վերջնական որոշումը

¹ Հայտի տիպայնացված ձևը կարելի է ստանալ Միջազգային քարտուղարությունից:

2. ԱՃԹՆ-Ն ԻՐԱԿԱՆԱԳՆՈՂ ԵՐԿԻՐ ԴԱՌՆԱԼՆ

Կկայացնի ԱՃԹՆ-ի Խորհուրդը:

ԱՃԹՆ-ի Խորհուրդը նախատեսում է հայտերին ընթացք տալ հայտն ստանալուց հետո ութ շաբաթվա ընթացքում: ԱՃԹՆ-ի Խորհուրդը նախընտրում է ԱՃԹՆ-ի թեկնածու երկրին ընդունելու մասին որոշումը կայացնել ԱՃԹՆ-ի Խորհրդի նիստերի ժամանակ: Համապատասխան դեպքերում ԱՃԹՆ-ի Խորհուրդը կարող է որոշման կայացումը քննարկել Խորհրդի շրջաբերականի միջոցով՝ նիստերի միջև ընկած ժամանակահատվածում:

Երբ ԱՃԹՆ-ի Խորհուրդն ընդունում է ԱՃԹՆ-ի թեկնածու երկրին, նաև վերջնաժամկետներ է սահմանում ԱՃԹՆ-ի առաջին զեկույցը հրապարակելու և վավերացման գործընթացն իրականացնելու համար: Իրականացնող երկրի առաջին ԱՃԹՆ-ի զեկույցը պետք է հրապարակվի երկրի՝ ԱՃԹՆ-ի թեկնածու երկիր դառնալուց հետո 18 ամսվա ընթացքում: Վավերացումը կսկսվի ԱՃԹՆ-ն իրականացնող երկիր դառնալուց հետո երկուսուկես տարվա ընթացքում: Հաշվետվությունների ներկայացման և վավերացման վերջնաժամկետների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ տրամադրված են ԱՃԹՆ-ի իրականացման նկատմամբ ԱՃԹՆ-ի Խորհրդի վերահսկողությանն առնչվող 4-րդ բաժնում:

3. ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

3. ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

Այս բաժնում սահմանվում են այն պահանջները, որոնց պետք է համապատասխանեն ԱՃԹՆ-ն իրականացնող երկրները:

ԱՃԹՆ-ի պահանջները նվազագույն պահանջներ են, և խորհուրդ է տրվում, որ իրականացնող երկրները դրանք գերազանցեն այն դեպքերում, երբ շահագրգիռ կողմերը համաձայնության են գալիս դրա նպատակահարմարության շուրջ: Խորհուրդ է տրվում, որ շահագրգիռ կողմերը պահանջների կատարումը լավագույնս ապահովելու համար ուսումնասիրեն eiti.org/guide կայքում հասանելի՝ ցուցումներ պարունակող լրացուցիչ նյութերը:

Եզրաբանություն

ԱՃԹՆ-ի ստանդարտում **«պետք է»**, **«հարկավոր է»**, **«պարտավոր է»** (**«պահանջվում է»**) եզրերի գործածումը նշանակում է, որ տվյալ դրույթը **պարտադիր** է և հաշվի կառնվի ԱՃԹՆ-ի ստանդարտին համապատասխանության ապահովման առաջընթացը գնահատելիս:

ԱՃԹՆ-ի ստանդարտում **«ակնկալվում է»** եզրի գործածումը նշանակում է, որ բազմաշահառու խումբը պետք է **քննարկի տվյալ հարցը** և արձանագրի իրենց քննարկումները, ներկայացնի այդ տեղեկությունները բացահայտելու/ չբացահայտելու հիմնավորումը և բացահայտելու հետ կապված խոչընդոտները: Վավերացման գործընթացում կքննարկվեն և կարձանագրվեն բազմաշահառու խմբի կողմից անցկացված քննարկումները:

ԱՃԹՆ-ի ստանդարտում **«առաջարկվում է»**, **«խրախուսվում է»**, **«կարող է ցանկություն հայտնել»** և **«կարող էր»** եզրերի գործածումը նշանակում է, որ տվյալ դրույթը **կամընտրական** է: Վավերացման գործընթացում կարձանագրվեն բազմաշահառու խմբի կողմից գործադրված ջանքերը, սակայն դրանք հաշվի չեն առնվի ԱՃԹՆ-ի ստանդարտին համապատասխանության ապահովման առաջընթացի ընդհանուր գնահատման ժամանակ:

«Համակարգված բացահայտում» և **«մեյնսթրիմինգ»** եզրերն օգտագործված են նույն իմաստով: Դրանք վերաբերում են ցանկալի վերջնական իրավիճակին, երբ ԱՃԹՆ-ի՝ բացահայտմանը վերաբերող պահանջները բավարարվում են **ընկերությունների և պետական մարմինների պլանային և հանրությանը մատչելի հաշվետվությունների** միջոցով: Սա կարող է ներառել պետական (հանրային հատվածի կազմակերպությունների) ֆինանսական հաշվետվություններ, տարեկան հաշվետվություններ, տեղեկատվական պորտալներ և բաց տվյալների այլ նախաձեռնություններ: Ակնկալիքը համակարգային բացահայտումն է, երբ ԱՃԹՆ-ի ձեկույցներն օգտագործվում են՝ լրացուցիչ համատեքստ

3. ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

ստեղծելու, համադրելու այն աղբյուրները, որտեղ կարելի է գտնել համակարգային բացահայտումներ, և անդրադառնալու տվյալների որակի վերաբերյալ ցանկացած բացերի և մտահոգությունների: ԱՃԹՆ-ի բացահայտումների պահանջները կարող են բավարարվել՝ հղում կատարելով հանրության համար հասանելի այնպիսի տեղեկությունների և (կամ) և տվյալների, որոնք հավաքվել են որպես ԱՃԹՆ-ի իրականացման մաս:

3. ԱԾԹ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

ԱԾԹ-Ի 1-ԻՆ ՊԱՀԱՆՋ.

Բազմաշահառու խմբի կողմից իրականացվող վերահսկողությունը

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ. ԱԾԹ-ն պահանջում է արդյունավետ բազմաշահառու վերահսկողության իրականացում, այդ թվում՝ գործուն բազմաշահառու խմբի կողմից, որում ներգրավված են կառավարությունը, ընկերությունները, ինչպես նաև ապահովված է քաղաքացիական հասարակության լիարժեք, անկախ, ակտիվ և արդյունավետ մասնակցությունը: Բազմաշահառու վերահսկողության հետ կապված հիմնական պահանջները ներառում են՝ (1.1) կառավարության հանձնառությունը, (1.2) ընկերությունների ներգրավվածությունը, (1.3) քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը, (1.4) բազմաշահառու խմբի ստեղծումը և գործունեության ապահովումը և (1.5) համաձայնեցված աշխատանքային ծրագիրը՝ ԱԾԹ-ի իրականացման հստակ նպատակներով և ԱԾԹ-ի հստիքի կողմից սահմանված վերջնաժամկետներին համապատասխան ժամանակացույցով:

1.1 Կառավարության հանձնառությունը

ա) Կառավարությունը պարտավոր է կատարել աներկբա հրապարակային հայտարարություն ԱԾԹ-ի իրականացման իր մտադրության մասին: Հայտարարությունը պետք է կատարվի պետության կամ կառավարության ղեկավարի կամ կառավարության՝ պատշաճ կերպով պատվիրակված ներկայացուցչի կողմից:

բ) Կառավարությունը պարտավոր է նշանակել ԱԾԹ-ի իրականացումը ղեկավարող բարձրաստիճան պաշտոնատար անձ: Նշանակված անձը պետք է վայելի բոլոր շահագրգիռ կողմերի վստահությունը, ունենա բոլոր համապատասխան նախարարությունների և գործակալությունների հետ ԱԾԹ-ի հետ կապված գործողությունները համակարգելու իրավասություն ու ազատություն և կարողանա կենտրոնացնել ԱԾԹ-ի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները:

գ) Կառավարությունը պետք է լիարժեք կերպով, ակտիվորեն և արդյունավետորեն ներգրավված լինի ԱԾԹ-ի գործընթացում:

դ) Կառավարությունը պետք է ապահովի բարձրաստիճան պետական պաշտոնյաների ներկայացվածությունը բազմաշահառու խմբում:

1.2 Ընկերությունների ներգրավվածությունը

ա) Ընկերությունները պետք է լիարժեք կերպով, ակտիվորեն և արդյունավետորեն ներգրավված լինեն ԱԾԹ-ի գործընթացում:

բ) Կառավարությունը պետք է ընկերությունների մասնակցության համար

3. ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

բարենպաստ միջավայր ստեղծի ԱՃԹՆ-ի փաստացի իրականացման, համապատասխան օրենքների, կանոնակարգերի և վարչական կանոնների առումով: Պետք է պահպանվեն ԱՃԹՆ-ի գործընթացում զգալիորեն ներգրավված ընկերությունների ներկայացուցիչների (ներառելով, սակայն չսահմանափակվելով բազմաշահառու խմբի անդամներով) հիմնարար իրավունքները:

գ) Կառավարությունը պետք է ապահովի ԱՃԹՆ-ի գործընթացում ընկերությունների մասնակցության հարցում խոչընդոտների բացակայությունը:

1.3 Քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը

Քաղաքացիական հասարակության արձանագրության համաձայն²

ա) Քաղաքացիական հասարակությունը պետք է լիարժեք կերպով, ակտիվորեն և արդյունավետորեն ներգրավված լինի ԱՃԹՆ-ի գործընթացում:

բ) Կառավարությունը պետք է քաղաքացիական հասարակության մասնակցության համար բարենպաստ միջավայր ստեղծի ԱՃԹՆ-ի փաստացի իրականացման, համապատասխան օրենքների, կանոնակարգերի և վարչական կանոնների առումով: Պետք է պահպանվեն ԱՃԹՆ-ի գործընթացում զգալիորեն ներգրավված քաղաքացիական հասարակության (ներառելով, սակայն չսահմանափակվելով բազմաշահառու խմբի անդամներով) հիմնարար իրավունքները:

գ) Կառավարությունը պետք է ապահովի ԱՃԹՆ-ի գործընթացում քաղաքացիական հասարակության մասնակցության հարցում խոչընդոտների բացակայությունը:

դ) Կառավարությունը պետք է ձեռնպահ մնա այնպիսի գործողություններից, որոնք կարող են հանգեցնել ԱՃԹՆ-ի իրականացման շուրջ հանրային քննարկման նվազեցմանը կամ սահմանափակմանը:

ե) Շահագրգիռ կողմերը (ներառելով սակայն չսահմանափակվելով բազմաշահառու խմբի անդամներով) պետք է.

- i. կարողանան ազատորեն խոսել թափանցիկությանն ու բնական ռեսուրսների կառավարմանն առնչվող հարցերի մասին,
- ii. զգալիորեն ներգրավված լինեն ԱՃԹՆ-ի գործընթացի նախագծման, իրականացման, մոնիտորինգի ու գնահատման աշխատանքներում և ապահովեն, որ դա նպաստի հանրային քննարկմանը,
- iii. ունենան միմյանց հետ հաղորդակցվելու և համագործակցելու իրավունք,
- iv. կարողանան գործել ազատորեն և ԱՃԹՆ-ի վերաբերյալ կարծիքներ արտահայտել՝ առանց որևէ սահմանափակման, հարկադրանքի կամ ճնշման:

² Քաղաքացիական հասարակության արձանագրությունը ներառված է ԱՃԹՆ-ի ստանդարտի 6-րդ բաժնում:

3. ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

1.4 Բազմաշահառու խումբը

ա) Կառավարությունը պարտավոր է ստանձնել քաղաքացիական հասարակության և ընկերությունների հետ աշխատելու հանձնառություն և ստեղծել բազմաշահառու խումբ՝ ԱՃԹՆ-ի իրականացման վերահսկողությունն իրականացնելու նպատակով: Բազմաշահառու խումբ ստեղծելիս կառավարությունը պետք է.

- i. ապահովի, որ խմբի աշխատանքներին մասնակցելու հրավերը լինի բաց և թափանցիկ:
- ii. ապահովի շահագրգիռ կողմերի պատշաճ կերպով ներկայացվածությունը: Սա չի նշանակում, որ նրանք պետք է ներկայացված լինեն քանակապես հավասար չափով: Բազմաշահառու խումբը պետք է բաղկացած լինի համապատասխան շահագրգիռ կողմերից՝ ներառելով, սակայն ոչ անպայմանորեն սահմանափակվելով, մասնավոր հատվածը, քաղաքացիական հասարակության, այդ թվում՝ անկախ քաղաքացիական հասարակության խմբերը և քաղաքացիական հասարակության այնպիսի ներկայացուցիչներին, ինչպիսիք են՝ լրատվամիջոցները և միությունները, համապատասխան պետական կազմակերպությունները, որոնց թվում կարող են լինել նաև խորհրդարանականներ: Յուրաքանչյուր շահագրգիռ խումբ պետք է ունենա իր ներկայացուցիչներին նշանակելու իրավունք՝ հաշվի առնելով բազմակարծիք և բազմազան ներկայացուցչության ցանկալիությունը: Նշանակման գործընթացը պետք է լինի անկախ և զերծ հարկադրանքի որևէ ակնարկից: ԱՃԹՆ-ի գործընթացում որպես բազմաշահառու խմբի անդամներ ներգրավված քաղաքացիական հասարակության խմբերն իրենց գործողություններում և քաղաքականությանն առնչվող հարցերում պետք է անկախ լինեն կառավարությունից և (կամ) ընկերություններից: Բազմաշահառու խումբը և յուրաքանչյուր խմբակցություն պետք է իրենց ներկայացուցչություններում հաշվի առնեն գենդերային հավասարակշռությունը՝ գենդերային հավասարության հասնելու հարցում առաջընթաց արձանագրելու նպատակով:
- iii. քննարկի խմբի իրավական հիմքերի սահմանումը:

բ) Բազմաշահառու խումբը պարտավոր է համաձայնեցնել իր աշխատանքներին իրականացման հստակ և հրապարակային աշխատակարգը: Աշխատակարգը պետք է առնվազն ներառի դրույթներ հետևյալի մասին՝

Բազմաշահառու խմբի դերը, պարտականությունները և իրավունքները.

- i. Բազմաշահառու խմբի անդամները պետք է ունենան իրենց պարտականություններն իրականացնելու համար անհրաժեշտ կարողություններ:
- ii. Բազմաշահառու խումբը պետք է նախաձեռնի քաղաքացիական

3. ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

հասարակության խմբերի և ընկերությունների հետ արդյունավետ հանրային իրազեկման գործողություններ, այդ թվում՝ հաղորդակցության այնպիսի միջոցներով, ինչպիսիք են լրատվամիջոցները, վեբ կայքերը և նամակները՝ շահագրգիռ կողմերին տեղեկացնելով ԱՃԹՆ-ն իրականացնելու կառավարության ստանձնած հանձնառության և ընկերությունների ու քաղաքացիական հասարակության առանցքային դերի մասին: Բազմաշահառու խումբը պետք է նաև ապահովի ԱՃԹՆ-ի գործընթացի իրականացման արդյունքների վերաբերյալ հանրային տեղեկատվության լայն տարածումը:

- iii. Բազմաշահառու խմբի անդամները պետք է կապ պահպանեն իրենց խմբակցությունների հետ:
- iv. Բազմաշահառու խմբի անդամներից ակնկալվում է ենթարկվել ԱՃԹՆ-ի ի ասոցիացիայի վարքի կանոններին:

Աշխատանքային ծրագրերի հաստատումը և իրականացման նկատմամբ վերահսկողությունը.

- v. Բազմաշահառու խումբը պարտավոր է հաստատել աշխատանքային ծրագրերը համաձայն պահանջ 1.5-ի:
- vi. Բազմաշահառու խումբը պետք է վերահսկի ԱՃԹՆ-ի զեկույցի կազմման և ներկայացման գործընթացը և ներգրավվի վավերացման գործընթացում:

Ներքին ղեկավարման կանոնները և ընթացակարգերը.

- vii. Իրականացման ամբողջ ընթացքում պահանջվում է որոշումների կայացման ներառական գործընթաց, որտեղ յուրաքանչյուր խմբակցության նկատմամբ դրսևորվում է գործընկերային վերաբերմունք: Բազմաշահառու խմբի ցանկացած անդամ ունի քննարկման համար հարց առաջադրելու իրավունք: Բազմաշահառու խումբը պետք է համաձայնության գա բազմաշահառու խմբի ներկայացուցիչներ նշանակելու և նրանց փոխելու, որոշումներ կայացնելու, մանդատի տևողության ու նիստերի հաճախականության ընթացակարգերի շուրջ և հրապարակի դրանք: Դրանցով պետք է ապահովվի խմբի անդամներին փոխելու այնպիսի գործընթաց, որը կիրականացվի 1.4.ա պահանջով սահմանված սկզբունքների պահպանմամբ: Այն դեպքում, երբ ԱՃԹՆ-ի նիստերին ներկա լինելու համար բազմաշահառու խումբը նախատեսում է օրապահիկի տրամադրում կամ բազմաշահառու խմբի անդամներին կատարվող այլ վճարումներ, այդ գործընթացը պետք է լինի թափանցիկ և չպետք է առաջացնի շահերի բախում:

- viii. Նիստերի անցկացման մասին ծանուցումը պետք է կատարվի բավականաչափ շուտ, իսկ փաստաթղթերի շրջանառությունը՝ ժամանակին՝ նախքան դրանց

3. ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

շուրջ քննարկման անցկացումը և ընդունումը:

- ix. Բազմաշահառու խումբը պետք է վարի իր քննարկումների և որոշումների գրավոր արձանագրությունները:

1.5 Աշխատանքային ծրագիրը

Բազմաշահառու խումբը պարտավոր է ունենալ ամբողջությամբ ծախսային գնահատական պարունակող և ԱՃԹՆ-ի խորհրդի կողմից սահմանված՝ հաշվետվությունների ներկայացման և վավերացման վերջնաժամկետներին համահունչ կազմված ընթացիկ աշխատանքային ծրագիր: Աշխատանքային ծրագիրը պետք է՝

ա) սահմանի ԱՃԹՆ-ի իրականացման նպատակները, որոնք կապակցված են ԱՃԹՆ-ի սկզբունքների հետ և արտացոլում են արդյունահանող ճյուղերի ոլորտում ազգային առաջնահերթությունները: Բազմաշահառու խումբը պետք է անդրադառնա այն քայլերին, որոնք անհրաժեշտ են ԱՃԹՆ-ի իրականացումը ընկերությունների և պետական համակարգերում գործունեության բնականոն և տարածված մաս դարձնելու նպատակով: Խրախուսվում է բազմաշահառու խմբերի կողմից ԱՃԹՆ-ի իրականացումն ընդլայնելու նորարարական մոտեցումների ուսումնասիրումը՝ բնական պաշարների կառավարման վերաբերյալ հանրային բանավեճն իրազեկելու, ինչպես նաև հասարակական կյանքում, կառավարության գործառնություններում և բիզնեսում թափանցիկության ու հաշվետվողականության բարձր ստանդարտները խրախուսելու նպատակով:

բ) արտացոլի հիմնական շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների արդյունքները և հաստատվի բազմաշահառու խմբի կողմից:

գ) պարունակի համաձայնեցված նպատակներին հասնելու համար նախատեսված չափելի և սահմանված ժամկետներով գործողությունները: ԱՃԹՆ-ի իրականացման շրջանակը պետք է հարմարեցվի այնպես, որ նպաստի խորհրդակցությունների գործընթացում նախանշված ցանկալի նպատակների իրականացմանը: Աշխատանքային ծրագրում պետք է՝

- i. գնահատվեն և ներկայացվեն այն ծրագրերը, որոնք նպատակաուղղված են պետական մարմիններում, ընկերություններում և քաղաքացիական հասարակությունում կարողությունների հնարավոր սահմանափակումների վերացմանը, որոնք կարող են խոչընդոտ հանդիսանալ ԱՃԹՆ-ի արդյունավետ իրականացման համար,
- ii. քննարկվի ԱՃԹՆ-ի իրականացման շրջանակը, ներառյալ՝ համակարգային բացահայտումներն ուժեղացնելու և հաշվետվությունների ներկայացման այնպիսի տեխնիկական ասպեկտներին անդրադարձող ծրագրերը, ինչպիսիք են՝ համակողմանիությունը և տվյալների հուսալիությունը (4.1 և 4.9),

3. ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

- iii. նախանշվեն և ներկայացվեն այն ծրագրերը, որոնք նպատակաուղղված են ԱՃԹՆ-ի իրականացման ընթացքում իրավական կամ կանոնակարգող դաշտում ցանկացած հավանական խոչընդոտների վերացմանը, այդ թվում (կիրառելիության դեպքում) ԱՃԹՆ-ի պահանջներն ազգային օրենքներում կամ կանոնակարգերում ընդգրկելուն ուղղված ծրագրերը,
- iv. ներկայացվեն բազմաշահառու խմբի ծրագրերը՝ ուղղված ԱՃԹՆ-ի իրականացման և վավերացման գործընթացի արդյունքում ստացված առաջարկների իրականացմանը,
- v. ներկայացվեն պայմանագրերի բացահայտման ծրագրերը՝ համաձայն 2.4 պահանջի (բ) կետի, ինչպես նաև իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկությունների բացահայտման ծրագրերը՝ համաձայն 2.5 պահանջի (գ)-(զ) կետերի, ներառյալ նշանակետերը և վերջնաժամկետները:

դ) անհրաժեշտության դեպքում բացահայտի ֆինանսավորման և տեխնիկական աջակցության ներքին ու արտաքին աղբյուրները՝ համաձայնեցված աշխատանքային ծրագիրը ժամանակին իրականացնելու նպատակով:

ե) լայնորեն հասանելի լինի հանրությանը, օրինակ՝ հրապարակվի տվյալ երկրի ԱՃԹՆ-ի վեբ կայքում և (կամ) այլ՝ համապատասխան նախարարության կամ գործակալության վեբ կայքերում, տպագիր մամուլում կամ հանրության համար հեշտ հասանելի վայրերում:

զ) վերանայվի և թարմացվի տարեկան կտրվածքով: Աշխատանքային ծրագիրը վերանայելիս բազմաշահառու խումբը պետք է քննարկի ԱՃԹՆ-ի իրականացման մանրամասներն ու շրջանակը: 1.4.բ պահանջի համաձայն՝ բազմաշահառու խումբը պետք է փաստաթղթավորի իր քննարկումների և որոշումների արձանագրությունները:

է) ներառի իրականացման ժամանակացույցը, որը համահունչ է ԱՃԹՆ-ի Խորհրդի կողմից սահմանված վերջնաժամկետներին (4-րդ բաժին՝ «ԱՃԹՆ-ի իրականացման նկատմամբ ԱՃԹՆ-ի Խորհրդի վերահսկողությունը»), և որում հաշվի են առնված այնպիսի վարչական պահանջներ, ինչպիսիք են՝ գնումների գործընթացները և ֆինանսավորումը:

3. ԱԾԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

ԱԾԹՆ-Ի 2-ՐԴ ՊԱՇՏԱՆՋ

Իրավական և ինստիտուցիոնալ շրջանակը, ներառյալ՝ պայմանագրերի և լիցենզիաների տրամադրումը

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ. ԱԾԹՆ-ն պահանջում է արդյունահանող ոլորտի կառավարման կանոնների վերաբերյալ տեղեկությունների բացահայտում՝ շահագրգիռ կողմերին հնարավորություն ընձեռելով հասկանալու հետախուզման և արդյունահանման իրավունքների շնորհման օրենքներն ու ընթացակարգերը, արդյունահանող հատվածին վերաբերող իրավական, կարգավորիչ և պայմանագրային շրջանակները և պետության՝ ոլորտի կառավարման գործում ունեցած ինստիտուցիոնալ պարտականությունները: Իրավական շրջանակի և ընդերքօգտագործման իրավունքների շնորհման թափանցիկության վերաբերյալ ԱԾԹՆ-ի պահանջները ներառում են (2.1) իրավական դաշտը և ֆիսկալ ռեժիմը, (2.2) պայմանագրերի և լիցենզիաների տրամադրումը, (2.3) լիցենզիաների գրանցամատյանը, (2.4) պայմանագրերը, (2.5) իրական սեփականությունը և (2.6) արդյունահանող ոլորտում պետության մասնակցությունը:

2.1 Իրավական դաշտը և ֆիսկալ ռեժիմը

ա) ԱԾԹՆ-ն իրականացնող պետությունները պետք է բացահայտեն արդյունահանող ճյուղերի ոլորտը կարգավորող իրավական դաշտի և ֆիսկալ ռեժիմի նկարագրությունը: Այս տեղեկությունները պետք է ներառեն ֆիսկալ ռեժիմի համառոտ նկարագրությունը, այդ թվում՝ ֆիսկալ ապակենտրոնացման աստիճանը, համապատասխան օրենքների ու կանոնակարգերի ընդհանուր նկարագրությունը, տարբեր տեսակի պայմանագրերի և լիցենզիաների նկարագրությունը, որոնցով կարգավորվում են նավթի, գազի և օգտակար հանածոների հետախուզումը և շահագործումը, ինչպես նաև տեղեկություններ կառավարության համապատասխան գործակալությունների դերերի ու պարտականությունների վերաբերյալ:

բ) Այն դեպքում, երբ կառավարությունը նախաձեռնել է բարեփոխումներ, խրախուսվում է բազմաշահառու խմբի կողմից այդ բարեփոխումների փաստաթղթավորման ապահովումը:

2.2 Պայմանագրերի և լիցենզիաների տրամադրումը

ա) ԱԾԹՆ-ն իրականացնող պետությունները պարտավոր են բացահայտել ԱԾԹՆ-ի ամենավերջին բացահայտումների ընդգրկած հաշվետու ժամանակաշրջանում տրամադրվող և փոխանցվող բոլոր պայմանագրերի և լիցենզիաների վերաբերյալ հետևյալ տեղեկությունները, այդ թվում՝ այն ընկերությունների առնչությամբ, որոնց

3. ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

կատարած վճարումները համաձայնեցված էականության շեմից ցածր են.

- i. լիցենզիայի փոխանցման կամ շնորհման գործընթացի նկարագրությունը,
- ii. կիրառվող տեխնիկական և ֆինանսական չափանիշները,
- iii. փոխանցված կամ շնորհված լիցենզիա ստացած անձի (անձանց), այդ թվում՝ կոնսորցիումի անդամների (կիրառելիության դեպքում) մասին տեղեկություններ, և
- iv. լիցենզիաների փոխանցումը կամ շնորհումը կարգավորող իրավական և կանոնակարգող դաշտից կատարված բոլոր էական շեղումները:

Այն դեպքերում, երբ կառավարությունները կարող են ընտրել պայմանագիր կամ լիցենզիա շնորհելու տարբեր մեթոդներ (օրինակ՝ մրցակցային հայտեր կամ ուղղակի բանակցություններ), լիցենզիա շնորհելու կամ փոխանցելու գործընթացի նկարագրությունը կարող է ներառել այն կանոնների բացատրությունը, որոնցով որոշվում է, թե ո՞ր ընթացակարգը պետք է օգտագործվի, և ինչու է ընտրվել որոշակի ընթացակարգ:

Այն դեպքում, երբ հանրայնորեն առկա տեղեկատվության մեջ կան բացեր, դրանք պետք է հստակորեն նշված լինեն: Վերոնշյալ տեղեկությունների համակողմանի բացահայտմանը խանգարող բոլոր էական իրավական կամ գործնական խոչընդոտները պետք է արձանագրվեն և բացատրվեն՝ ներառելով տեղեկատվություն այդպիսի խոչընդոտները հաղթահարելուն ուղղված կառավարության ծրագրերի և ցանկալի արդյունքներին հասնելու կանխատեսվող ժամանակացույցի մասին:

բ) Այն դեպքում, երբ ընկերություններն ունեն ԱՃԹՆ-ի իրականացման ժամանակաշրջանից առաջ տրամադրված լիցենզիաներ, խրախուսվում է իրականացնող պետությունների կողմից այս լիցենզիաների վերաբերյալ 2.2(ա) ենթակետում ամրագրված տեղեկությունների բացահայտումը:

գ) Այն դեպքում, երբ լիցենզիաները շնորհվել են մրցութային ընթացակարգով, կառավարությունը պարտավոր է բացահայտել հայտատուների ցանկը և հայտերին ներկայացվող չափանիշները:

ե) Բազմաշահառու խումբը կարող է ցանկություն հայտնել ներառելու լրացուցիչ տեղեկություններ լիցենզիաների տրամադրման վերաբերյալ՝ որպես ԱՃԹՆ-ի բացահայտումների մաս: Դրանց թվում կարող են լինել մեկնաբանություններ լիցենզավորման ընթացակարգերի գործուն և արդյունավետ լինելու մասին, ինչպես նաև ընթացակարգերի, իրական գործելակերպերի և պայմանագրի կամ լիցենզիայի

3. ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

նորացման, կասեցման կամ դադարեցման հիմքերի նկարագրություն:

2.3 Լիցենզիաների գրանցամատյանը

ա) «Լիցենզիա» եզրն այս համատեքստում նշանակում է ցանկացած լիցենզիա, լիզինգ, իրավական հիմք, թույլտվություն, պայմանագիր կամ կոնցեսիա, որով կառավարությունը ընկերությանը (ընկերություններին) կամ անհատին (անհատներին) տալիս է նավթի, գազի և (կամ) պինդ օգտակար հանածոների պաշարներ հետախուզելու կամ շահագործելու իրավունք:

բ) ԱՃԹՆ-ն իրականացնող պետությունները պարտավոր են վարել հանրությանը հասանելի գրանցամատյան կամ կադաստրի համակարգ (համակարգեր), որը (որոնք) կպարունակի (կպարունակեն) հետևյալ արդիական և համակողմանի տեղեկությունները՝ ԱՃԹՆ-ի իրականացման համաձայնեցված շրջանակում ընկերություններին տրամադրված լիցենզիաներից յուրաքանչյուրի վերաբերյալ.

- i. լիցենզառուն (լիցենզառուները):
- ii. որոշված լինելու դեպքում՝ լիցենզավորված տարածքի կոորդինատները: Այն դեպքում, երբ կոորդինատները որոշված չեն, կառավարությունը պարտավոր է ապահովել, որ լիցենզիայի տարածքի չափերի և տեղադիրքի մասին տվյալները բացահայտվեն լիցենզիաների գրանցամատյանում, և կոորդինատները կառավարության համապատասխան գործակալությունից հանրության համար հասանելի լինեն առանց անհիմն վճարների և սահմանափակումների: Բացահայտումները պետք է պարունակեն ցուցում այն մասին, թե ինչպես կարող են այդ կոորդինատները հասանելի դառնալ, ինչպես նաև, առկայության դեպքում, դրանք ձեռք բերելու արժեքը: Կառավարությունը պետք է նաև արձանագրի այն ծրագրերը և ժամանակացույցը, որոնց համաձայն այս տեղեկատվությունը կարող է ազատ և էլեկտրոնային եղանակով հասանելի դառնալ լիցենզիաների գրանցամատյանի միջոցով:
- iii. հայտի ներկայացման ամսաթիվը, լիցենզիայի շնորհման ամսաթիվը և տևողությունը:
- iv. արդյունահանման լիցենզիաների դեպքում՝ արդյունահանվող ապրանքատեսակը:

Ակնկալվում է, որ լիցենզիաների գրանցամատյանը կամ կադաստրը կպարունակի տեղեկություններ բոլոր տրված լիցենզիաների մասին, այդ թվում՝ ԱՃԹՆ-ի իրականացման համաձայնեցված շրջանակից դուրս գտնվող ընկերություններին և անհատներին կամ խմբերին, ում վճարումները համաձայնեցված էականության շեմից ցածր են: Նման համակողմանի

3. ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

բացահայտմանը խանգարող բոլոր էական իրավական կամ գործնական խոչընդոտները պետք է արձանագրվեն և բացատրվեն՝ ներառելով տեղեկատվություն այդպիսի խոչընդոտները հաղթահարելուն ուղղված կառավարության ծրագրերի և ցանկալի արդյունքներին հասնելու կանխատեսվող ժամանակացույցի մասին:

գ) Եթե այդպիսի գրանցամատյաններ կամ կադաստրներ գոյություն չունեն կամ դրանք ամբողջական չեն, ապա ԱՃԹՆ-ի զեկույցում պետք է բացահայտվեն հանրության համար հասանելի տեղեկատվության բոլոր բացերը և արձանագրվեն այդ համակարգերը հզորացնելուն ուղղված բոլոր ջանքերը:

2.4 Պայմանագրերը

ա) Իրականացնող երկրներից պահանջվում է բացահայտել ցանկացած պայմանագրեր և լիցենզիաներ, որոնք կշնորհվեն, կկնքվեն կամ կվերանայվեն 2021 թ. հունվարի 1-ից սկսած: Խրախուսվում է ԱՃԹՆ-ն իրականացնող երկրների կողմից ցանկացած պայմանագրերի և լիցենզիաների մասին տեղեկատվության հրապարակային բացահատումը, որոնցով սահմանվում են նավթի, գազի և պինդ օգտակար հանածոների շահագործմանն առնչվող պայմանները:

բ) Ակնկալվում է, որ բազմաշահառու խումբ կհամաձայնեցնի և կհրապարակի պայմանագրերը բացահայտելու ծրագիր՝ իրականացման հստակ ժամկետով, որը կանդրադառնա համակողմանի բացահայտման ցանկացած խոչընդոտի: Ծրագիրը կներառվի աշխատանքային ծրագրերում, որոնք ընդգրկում են 2020 թ.-ից հետո ընկած ժամանակահատված:

գ) Պահանջվում է արձանագրել կառավարության քաղաքականությունը նավթի, գազի և պինդ օգտակար հանածոների հետախուզումը և շահագործումը կառավարող պայմանագրերի ու լիցենզիաների բացահայտման վերաբերյալ: Այդ տեղեկությունները պետք է ներառեն.

- i. Նկարագրություն, թե օրենսդրությունը կամ կառավարության քաղաքականությունը անդրադառնո՞ւմ են պայմանագրերի և լիցենզիաների բացահայտման խնդրին, այդ թվում՝ դրանք արդյո՞ք պահանջում կամ արգելում են պայմանագրերի և լիցենզիաների բացահայտումը: Եթե չկա գործող օրենսդրություն, ապա պետք է ներառվի բացատրություն, թե որտեղ է մարմնավորված կառավարության քաղաքականությունը, և բազմաշահառու խումբը պետք է փաստաթղթավորի իր քննարկումը այն մասին, թե ինչու է կայանում կառավարության քաղաքականությունը պայմանագրերի բացահայտման հարցում: Նախատեսվող կամ ընթացքի մեջ գտնվող պայմանագրերի և լիցենզիաներ բացահայտմանը վերաբերող ցանկացած

3. ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

քարեփոխումներ պետք է փաստագրված լինի:

- ii. Ամփոփ նկարագրություն, թե ո՞ր պայմանագրերը և լիցենզիաներն են մատչելի հանրությանը: Իրականացնող երկրները պետք է տրամադրեն բոլոր գործող պետք է պայմանագրերի և լիցենզիաների ցանկ, նշելով, թե որոնք են հանրությանը մատչելի, որոնք՝ ոչ: Նկարագրությունը պետք է հրապարակված բոլոր պայմանագրերի և լիցենզիաների առնչությամբ ներառի այն վայրի մասին վկայակոչումը կամ հղումը, որտեղ դրանք հրապարակված են: Եթե որևէ պայմանագիր կամ լիցենզիա չի հրապարակվել, ապա իրավական կամ գործնական արգելքները պետք է փաստաթղթավորվեն և բացատրվեն:
- iii. Եթե բացահայտման գործելակերպը շեղվում է օրենսդրական կամ կառավարության քաղաքականության պահանջներից, որոնք վերաբերում են պայմանագրերի և լիցենզիաների բացահայտմանը, ապա պետք է ներկայացվի բացատրություն շեղման համար:

դ) 2.4(ա) ենթակետում «պայմանագիր» եզրը նշանակում է.

- i. ցանկացած պայմանագրի, կոնցեսիայի, արտադրանքի բաշխման համաձայնագրի կամ որևէ այլ համաձայնագրի ամբողջական տեքստը, որը շնորհվել է կառավարության կողմից կամ որին միացել է կառավարությունը, որով սահմանվում են նավթի, գազի և պինդ օգտակար հանածոների պաշարների շահագործմանն առնչվող պայմանները,
- ii. ցանկացած կից նյութի, հավելվածի, կամ լրացման ամբողջական տեքստը, որով սահմանվում են 2.4(դ)(i) ենթակետում նկարագրված շահագործման իրավունքների վերաբերյալ մանրամասները կամ դրանց իրացումը,
- iii. 2.4(դ)(i) և 2.4(դ)(ii) ենթակետերում նկարագրված փաստաթղթերում կատարված ցանկացած ձևափոխության կամ փոփոխության ամբողջական տեքստը:

ե) 2.4(ա) ենթակետում «լիցենզիա» եզրը նշանակում է.

- i. ցանկացած լիցենզիայի, լիզինգի, իրավական հիմքի կամ թույլտվության ամբողջական տեքստը, որով կառավարությունը ընկերությանը (ընկերություններին) կամ անհատին (անհատներին) տալիս է նավթի, գազի և (կամ) պինդ օգտակար հանածոների շահագործման իրավունք:
- ii. ցանկացած կից նյութի, հավելվածի, կամ լրացման ամբողջական տեքստը, որով սահմանվում են 2.4(ե)(i) ենթակետում նկարագրված շահագործման իրավունքների վերաբերյալ մանրամասները կամ դրանց իրացումը,

3. ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

- iii. 2.4(ե)(i) և 2.4(ե)(ii) ենթակետերում նկարագրված փաստաթղթերում կատարված ցանկացած ձևափոխության կամ փոփոխության ամբողջական տեքստը:

2.5 Իրական սեփականատերերը

ա) Խորհուրդ է տրվում, որ ԱՃԹՆ-ն իրականացնող երկրները վարեն հանրությանը հասանելի՝ մասնակցային շահի համար դիմող կամ նավթի, գազի կամ հանքարդյունահանման լիցենզիայում կամ պայմանագրում մասնակցային շահ ունեցող իրավաբանական անձի (անձանց) իրական սեփականատերերի ռեգիստր, ներառյալ իրենց իրական սեփականատիրոջ (սեփականատերերի) ինքնությունը (ինքնությունները), սեփականության պատկանելության աստիճանը և մանրամասներ այն մասին, թե ինչպես է իրացվում սեփականության իրավունքը կամ իրականացվում հսկողությունը: Հնարավորության դեպքում ընկերությունների կողմից իրական սեփականության վերաբերյալ տեղեկությունները պետք է ընդգրկվեն ընկերությունների կողմից՝ արդյունահանող ճյուղերը կանոնակարգող մարմիններին, ֆոնդային բորսաներին և լիցենզավորման գործընթացի լիազոր գործակալություններին ներկայացվող փաստաթղթերում: Այն դեպքերում, երբ այս տեղեկությունները հանրությանը հասանելի են, ԱՃԹՆ-ի գեկույցում պետք է ներառվի ցուցում այն մասին, թե ինչպես գտնել այդ տեղեկությունները:

բ) Իրականացնող երկրներից պահանջվում է փաստաթղթավորել իրական սեփականության բացահայտման վերաբերյալ կառավարության քաղաքականությունը և բազմաշահառու խմբի քննարկումները: Այստեղ պետք է ներառվեն համապատասխան իրավական դրույթների մանրամասները, բացահայտման առկա գործելակերպերը և իրական սեփականության բացահայտման առնչվող ծրագրված կամ իրականացման փուլում գտնվող բոլոր բարեփոխումները:

գ) 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ պահանջվում է, որ իրականացնող պետությունները հարցում անեն, իսկ ընկերությունները հրապարակայնորեն բացահայտեն իրական սեփականության մասին տեղեկությունները: Սա վերաբերում է իրավաբանական անձին (անձանց, որոնք դիմում են մասնակցային շահի համար կամ ունեն մասնակցային շահ նավթի, գազի կամ հանքարդյունահանման լիցենզիայում կամ պայմանագրում, և պետք է ներառեն իրենց իրական սեփականատիրոջ (սեփականատերերի) ինքնությունը (ինքնությունները), սեփականության պատկանելության աստիճանը և մանրամասներ այն մասին, թե ինչպես է իրացվում սեփականության իրավունքը կամ իրականացվում հսկողությունը: Պետք է բացահայտվեն իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկությունների հաղորդման մեջ տեղ գտած ցանկացած բաց կամ թույլ կողմեր, այդ թվում՝ նշելով այն իրավաբանական անձանց անունները, որոնք չեն ներկայացրել իրական

3. ԱԾԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

սեփականատերերի վերաբերյալ ամբողջական տեղեկություններ կամ կան ներկայացրել են մասամբ: Այն դեպքում, երբ երկիրը, սահմանադրական կամ կիրարկման էական խոչընդոտների պատճառով չի կարողանում ապահովել այս պահանջի իրականացումը մինչև 2020 թվականի հունվարի 1-ը, կարող է ընտրել հարմարեցված իրականացման տարբերակը՝ համաձայն ԱԾԹՆ-ի իրականացման նկատմամբ ԱԾԹՆ-ի Խորհրդի վերահսկողության ընթացակարգերի 1-ին հոդվածի (4-րդ բաժին):

դ) Իրական սեփականատիրոջ ինքնության մասին տեղեկություններում պետք է ներառվեն իրական սեփականատիրոջ անունը, քաղաքացիությունը և բնակության երկիրը, ինչպես նաև նշվեն քաղաքական ազդեցություն ունեցող անձանց անունները: Նաև խորհուրդ է տրվում, որ բացահայտվեն հանրային ծառայությունների համարանիշը, ծննդյան ամսաթիվը, բնակության կամ ծառայողական հասցեն և նրա հետ կապի միջոցները:

ե) Բազմաշահառու խումբը պետք է ձևավորի գնահատի գործող ցանկացած մեխանիզմ՝ ապահովելու իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկությունների հուսալիությունը և համաձայնության գա իրավաբանական անձանց նկատմամբ մոտեցման շուրջ՝ 2.5(գ) կետի շրջանակում՝ ապահովելու իրական սեփականատերերի վերաբերյալ նրանց տրամադրած տեղեկությունների ճշգրտությունը: Կազմակերպություններից կարող է պահանջվել՝ իրական սեփականության հայտարարագիրը հավաստել իրենց բարձրաստիճան պաշտոնյայի կամ ավագ իրավախորհրդատուի կողմից դա ստորագրելու կամ հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու միջոցով:

զ) Իրական սեփականատիրոջ սահմանումը.

- i. Ընկերության իրական սեփականատերն այն ֆիզիկական անձն (անձինք) է (են), ում փաստացի ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում կամ ում հսկողության ներքո է գտնվում է տվյալ իրավաբանական անձը:
- ii. Բազմաշահառու խումբը պետք է համաձայնության գա «իրական սեփականատեր» եզրի պատշաճ սահմանման հարցում: Սահմանումը պետք է համահունչ լինի վերոնշյալ «գ)» կետի «(i)» ենթակետին, ներառի սեփականության շեմը (շեմերը), ինչպես նաև սահմանման մեջ պետք է հաշվի առնվեն միջազգային նորմերը և համապատասխան ազգային օրենսդրությունը: Սահմանման մեջ պետք է նշվեն նաև քաղաքական ազդեցություն ունեցող անձանց կողմից հաշվետվողականության պարտավորությունները:
- iii. Բորսայում գրանցված ընկերությունները, ներառյալ՝ մայր ձեռնարկությանն

3. ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

ամբողջությամբ պատկանող դուստր ձեռնարկությունները, պետք է բացահայտեն ֆոնդային բորսայի անվանումը և ներկայացնեն համապատասխան բորսաներում (որտեղ դրանք գրանցված են) առկա փաստաթղթերի հղումները՝ ոչնչացնելու հանրության հասանելիությունը նրանց իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններին:

- iv. Համատեղ ձեռնարկությունների դեպքում տվյալ համատեղ ձեռնարկության յուրաքանչյուր կազմակերպություն պետք է բացահայտի իր իրական սեփականատիրոջը (սեփականատերերին), եթե այդ կազմակերպությունը չի հանդիսանում բորսայում գրանցված ընկերություն կամ բորսայում գրանցված ընկերությանն ամբողջությամբ պատկանող դուստր ձեռնարկություն: Յուրաքանչյուր կազմակերպություն պատասխանատու է իր կողմից տրամադրվող տեղեկությունների ճշգրտության համար:

է) Իրականացնող երկրները և բազմաշահառու խմբերը պետք է նաև անդրադառնան այդպիսի ընկերությունների իրավական սեփականատերերին և սեփականության մասնաբաժնին:

2.6 Պետության մասնակցությունը

ա) Այն դեպքում, երբ արդյունահանող ճյուղերում պետության մասնակցությունը հանգեցնում է էական եկամուտների վճարումների, իրականացնող պետությունները պետք է ներկայացնեն.

- i. բացատրություն ոլորտում պետական ձեռնարկությունների (ՊՁ-ների) դերի և կառավարության և ՊՁ-ների միջև ֆինանսական հարաբերություններին առնչվող կանոնների և գործելակերպերի մասին, այսինքն՝ ՊՁ-ի (ՊՁ-ների) և պետության միջև ֆինանսական միջոցների փոխանցումը, չբաշխված շահույթը, վերաներդրումները և երրորդ կողմի ֆինանսավորումը կարգավորող կանոնների և գործելակերպերի վերաբերյալ: Սա պետք է ներառի ՊՁ-ների համատեղ ձեռնարկությունների և դուստր ձեռնարկությունների հետ կապված փոխանցումների, չբաշխված շահույթի, վերաներդրումների և երրորդ կողմի ֆինանսավորման բացահայտումները:

ԱՃԹՆ-ի իրականացման իմաստով՝ ՊՁ-ն ամբողջովին կամ մեծ մասամբ կառավարության սեփականությունը հանդիսացող ընկերություն է, որն զբաղվում է արդյունահանման գործունեությամբ կառավարության անունից: Հիմք ընդունելով վերոնշյալը՝ խրախուսվում է, որ բազմաշահառու խումբը քննարկի և փաստաթղթավորի ՊՁ-ների իր սահմանում՝ հաշվի առնելով ազգային օրենսդրությունը և կառավարության կառուցվածքը:

- ii. բացահայտումներ կառավարության և ՊՁ-ի (ՊՁ-ների) կողմից երկրի նավթի,

3. ԱԾԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

գազի արդյունահանման ու հանքարդյունաբերության ոլորտում գործող՝ հանքարդյունահանման, նավթի և գազի արդյունահանման ընկերություններում, այդ թվում՝ ՊՁ-ների դուստր ձեռնարկություններին և համատեղ ձեռնարկություններին պատկանող ընկերություններում սեփականության պատկանելության աստիճանի, ինչպես նաև հաշվետու ժամանակահատվածում սեփականության պատկանելության աստիճանի ցանկացած փոփոխության մասին:

Այս տեղեկությունները պետք է ներառեն մանրամասներ՝ կապված նրանց բաժնեմասին առնչվող պայմանների հետ, ներառյալ՝ ծրագրի իրականացման շրջափուլի տարբեր փուլերում ծախսերը ծածկելու նրանց պատասխանատվության աստիճանը, օրինակ, լրիվ վճարվող բաժնեմասը, ազատ կապիտալը կամ եկամտաբերությունը: Այն դեպքում, երբ ԱԾԹՆ-ի զեկույցի ներկայացման ժամանակահատվածում փոխվել է կառավարության և ՊՁ-ի (ՊՁ-ների) սեփականության պատկանելության աստիճանը, ակնկալվում է կառավարության և ՊՁ-ի (ՊՁ-ների) կողմից գործարքի պայմանների, ներառյալ՝ գնահատման և եկամուտների վերաբերյալ մանրամասների բացահայտում: Եթե կառավարությունը և ՊՁ-ն (ՊՁ-ները) երկրի ներսում գործող հանքարդյունահանման, նավթի և գազի արդյունահանման ընկերություններին տրամադրել են վարկեր կամ վարկային երաշխիքներ, պետք է բացահայտվեն այդ գործարքների վերաբերյալ մանրամասները, այդ թվում՝ վարկի մարման ժամկետը և պայմանները (այսինքն՝ մարման ժամանակացույցը և տոկոսադրույքը): Առաջարկվում է, որ բազմաշահառու խմբերը մտածեն վարկերի պայմանները առևտրային փոխատվության պայմանների հետ համեմատելու մասին:

բ) ՊՁ-ներից ակնկալվում է հրապարակայնորեն բացահայտել աուդիտի ենթարկված իրենց ֆինանսական հաշվետվությունները կամ ֆինանսական գլխավոր տարրերը (այսինքն, հաշվեկշիռները, շահույթի/վնասի մասին հաշվետվությունը, կանխիկ դրամական միջոցների հոսքերը), եթե ֆինանսական հաշվետվություններն առկա չեն:

գ) Խրախուսվում է, որ իրականացող երկրները նկարագրեն ՊՁ-ների գործառնական և կապիտալ ծախսերին, գնումներին, ենթապայմանագրերի կնքմանը և կորպորատիվ կառավարմանն առնչվող կանոնները և գործելակերպերը, օրինակ. Տնօրենների խորհրդի կազմը և նշանակումը, Խորհրդի մանդատը և վարքի կանոնները:

3. ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

ԱՃԹՆ-Ի 3-ՐԴ ՊԱՀԱՆՋ

Հետախուզումը և արդյունահանումը

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ. ԱՃԹՆ-ն պահանջում է հետախուզման և արդյունահանման հետ կապված տեղեկությունների բացահայտում, ինչը հնարավորություն կտա շահագրգիռ կողմերին հասկանալ ոլորտի ներուժը: Հետախուզման և արդյունահանման թափանցիկությանն առնչվող ԱՃԹՆ-ի պահանջները ներառում են՝ (3.1) հետախուզման աշխատանքների մասին տեղեկությունները, (3.2) արդյունահանման մասին տվյալները և (3.3) արտահանման մասին տվյալները:

3.1 Հետախուզում

ԱՃԹՆ-ն իրականացնող պետությունները պետք է բացահայտեն արդյունահանող ճյուղերի ամփոփ նկարագիրը, այդ թվում՝ իրականացվող ցանկացած կարևոր հետախուզական աշխատանքները:

3.2 Արդյունահանում

ԱՃԹՆ-ն իրականացնող պետությունները պետք է բացահայտեն արդյունահանման վերաբերյալ արդիական տվյալները, այդ թվում՝ արդյունահանման ծավալները և արժեքները՝ ըստ ապրանքի: Այս տվյալները կարող են լրացուցիչ կերպով ապագրեգացվել ըստ տարածաշրջանի, ընկերության կամ նախագծի, և ներառել արդյունահանման ծավալների և արժեքների հաշվարկման աղբյուրները և մեթոդները:

3.3 Արտահանումներ

ԱՃԹՆ-ն իրականացնող պետությունները պետք է բացահայտեն արտահանումների վերաբերյալ արդիական տվյալները, այդ թվում՝ արտահանումների ծավալները և արժեքը՝ ըստ ապրանքի: Այս տվյալները կարող են լրացուցիչ կերպով ապագրեգացվել ըստ տարածաշրջանի, ընկերության կամ նախագծի, և ներառել արտահանումների ծավալների և արժեքների հաշվարկման աղբյուրները և մեթոդները:

3. ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

ԱՃԹՆ-Ի 4-ՐԴ ՊԱՇՏԱՆՁ

Եկամուտների հավաքումը

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ. Ընկերությունների վճարումների և կառավարության եկամուտների ըմբռնումը կարող է իրազեկել արդյունահանող ճյուղերի կառավարման վերաբերյալ հանրային երկխոսությունը: ԱՃԹՆ-ն պահանջում է ընկերությունների վճարումների և արդյունահանող ճյուղերից ստացված կառավարության եկամուտների համակողմանի բացահայտում: Եկամուտների հավաքմանն առնչվող ԱՃԹՆ-ի պահանջները ներառում են՝ (4.1) հարկերի և եկամուտների համակողմանի բացահայտումը, (4.2) պետության՝ արդյունահանման մասնաբաժնի կամ բնաիրային տեսքով հավաքագրված այլ եկամուտների իրացումը (վաճառքը), (4.3) ենթակառուցվածքների համար մատակարարումները և ապրանքափոխանակության պայմանավորվածությունները, (4.4) փոխադրումներից ստացվող եկամուտները, (4.5) ՊԶ-ի գործարքները, (4.6) տեղական կառավարման մարմիններին կատարվող վճարումները, (4.7) ապագաբեգացման աստիճանը, (4.8) տվյալների արդիականությունը և (4.9) բացահայտումների տվյալների որակը:

4.1 Հարկերի և եկամուտների համակողմանի բացահայտում

ա) ԱՃԹՆ-ը պահանջում է լայն լսարանի համար, հրապարակայնորեն հասանելի, համակողմանի և հասկանալի ձևով հրապարակել նավթի և գազի արդյունահանման ու հանքարդյունահանող ընկերությունների կողմից կառավարություններին կատարած բոլոր էական վճարումները («վճարումներ»), ինչպես նաև կառավարությունների կողմից նավթի և գազի արդյունահանման ու հանքարդյունահանող ընկերություններից ստացված բոլոր էական եկամուտները («եկամուտներ»): Ակնկալիքն այն է, որ իրականացնող երկրները կբացահայտեն անհրաժեշտ տեղեկություններ՝ կառավարության և ընկերությունների կողմից սահմանված կարգով հաշվետվությունների կազմման և ներկայացման միջոցով (վեբ կայքեր, տարեկան հաշվետվություններ և այլն): Ընդ որում, ԱՃԹՆ-ի Ձեկույցները կօգտագործվեն այդ տեղեկությունները համադրելու, տվյալների որակի վերաբերյալ ցանկացած բացերի և մտահոգությունների անդրադառնալու համար:

բ) Բազմաշահառու խմբից պահանջվում է համաձայնության գալ այն հարցերի շուրջ, թե ո՞ր վճարումները և եկամուտներն են համարվում էական, ուստիև պետք է բացահայտվեն, այդ թվում՝ համաձայնեցնել, թե որոնք են էականության պատշաճ սահմանումները և շեմերը: Վճարումները և եկամուտները համարվում են էական, եթե դրանց մասին տեղեկատվության բացթողումը կամ սխալ տեղեկության հաղորդումը

3. ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

կարող է զգալիորեն ազդել բացահայտումների համակողմանիության վրա: Պետք է նկարագրվի յուրաքանչյուր եկամտային հոսքը՝ համապատասխան էականության սահմանումներով և շեմերով: Էականության սահմանումները և շեմերը հաստատելիս բազմաշահառու խումբը պետք է հաշվի առնի եկամտային հոսքերի չափը՝ ընդհանուր եկամուտների համեմատությամբ: Բազմաշահառու խումբը պետք է փաստաթղթավորի քննության առնված տարբերակները և այդ սահմանումներն ու շեմերը հաստատելու հիմնավորումները:

գ) Պետք է ներառվեն հետևյալ եկամտային հոսքերը՝

- i. կառավարության՝ արդյունահանումից հասանելիք մասնաբաժինը,
- ii. տվյալ երկրի ՊՁ-ի՝ արդյունահանումից հասանելիք մասնաբաժինը,
- iii. շահութահարկերը,
- iv. ոռոյալթիները,
- v. շահաբաժինները,
- vi. հավելավճարները, օրինակ՝ ստորագրման, հայտնաբերման և արդյունահանման հավելավճարները,
- vii. լիցենզիայի տրամադրման տուրքերը, վարձակալության վճարները, մուտքի վճարները և լիցենզիաների և (կամ) կոնցեսիաների համար կատարվող այլ վճարները,
- viii. կառավարությանը կատարվող ցանկացած այլ կարևոր վճարումները և կառավարության էական օգուտը:

Եկամտային հոսքերը կամ շահույթները պետք է չներառվեն միայն այն դեպքերում, երբ դրանք կիրառելի չեն կամ բազմաշահառու խումբը համաձայնության է գալիս, որ դրանց մասին տեղեկատվության բացթողումը էական ազդեցություն չի ունենա կառավարության և ընկերությունների բացահայտումների համակողմանիության վրա:

դ) ԱՃԹՆ-ն իրականացնող պետությունները պետք է ապահովեն, որ նավթային, գազային և հանքարդյունահանող ընկերություններից էական եկամուտներ բոլոր ստացող պետական մարմիններից և ընկերություններից պահանջվի համակողմանիորեն բացահայտել այդ եկամուտները՝ ըստ համաձայնեցված շրջանակի: Պետական մարմինները պետք է ազատվեն բացահայտումների պարտականությունից միայն այն դեպքում, եթե հնարավոր է ապացուցել, որ դրանց եկամուտներն էական չեն: Եթե գործնականում չկան զգալի խոչընդոտներ, կառավարությունից լրացուցիչ կերպով պահանջվում է տրամադրել ընդհանրացված տեղեկություններ ԱՃԹՆ-ի իրականացման շրջանակներում համաձայնեցված տարբեր հոսքերից յուրաքանչյուրից ստացված ընդհանուր եկամուտների չափի

3. ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

վերաբերյալ, այդ թվում՝ համաձայնեցված էականության շեմերից ցածր եկամուտները: Եթե այս տվյալներն առկա չեն, Անկախ Ադմինիստրատորը պետք է որպես հիմք ընդունի համապատասխան տվյալները և այլ աղբյուրներից ստացված գնահատականները՝ կառավարության ընդհանուր եկամուտների մասին համակողմանի տեղեկատվություն ներկայացնելու նպատակով:

Կառավարությանը էական վճարումներ կատարող բոլոր նախնային, գազային և հանքարդյունահանող ընկերություններից պահանջվում է համակողմանիորեն բացահայտել այդ վճարումները՝ ըստ համաձայնեցված շրջանակի: Ընկերությունը պետք է ազատվի բացահայտումների պարտականությունից միայն այն դեպքում, եթե հնարավոր է ապացուցել, որ դրա եկամուտներն էական չեն:

ե) Ընկերություններից ակնկալվում է հրապարակայնորեն բացահայտել աուդիտի ենթարկված իրենց ֆինանսական հաշվետվությունները կամ գլխավոր տարրերը (այսինքն, հաշվեկշիռները, շահույթի/վնասի մասին հաշվետվությունը, կանխիկ դրամական միջոցների հոսքերը), եթե ֆինանսական հաշվետվություններն առկա չեն:

4.2 Պետության՝ արդյունահանման մասնաբաժնի վաճառքը կամ բնափրային տեսքով հավաքագրված այլ եկամուտները

ա) Այն դեպքերում, երբ նախօրոք, գազի և (կամ) պինդ օգտակար հանածոների արդյունահանման պետության մասնաբաժնի վաճառքը կամ բնափրային տեսքով հավաքված այլ եկամուտները համարվում են էական, կառավարությունից, այդ թվում՝ ՊՁ-ներից, պահանջվում է բացահայտել պետության (կամ պետության կողմից՝ իր անունից վաճառելու նպատակով նշանակված երրորդ կողմերի) կողմից ստացված և վաճառված ծավալները, վաճառքից ստացված եկամուտները և վաճառված նախօրոք, գազի և պինդ օգտակար հանածոների հասույթներից պետությանը փոխանցված եկամուտները: Կիրառելիության դեպքում պետք է ներառվեն փոխանակման համաձայնագրերին և ռեսուրսներով ապահովված վարկերին առնչվող վճարումները (կանխիկ կամ բնափրային տեսքով):

Հրապարակված տվյալները պետք է ապագրեգացվեն՝ ըստ առանձին գնորդ ընկերությունների և այնպես, որ ապահովվի դրանց համապատասխանությունը մյուս վճարումների ու եկամտային հոսքերի վերաբերյալ հաշվետվողականությանը (4.7): Բազմաշահառու խմբերից ակնկալվում է, խորհրդակցելով գնորդ ընկերությունների հետ, քննության առնել այն հարցը, թե բացահայտումները պետք է արդյոք առանձնացվեն ըստ առանձին վաճառքի, արտադրանքի տեսակի և գնի:

Բացահայտումները կարող են ներառել վաճառված արտադրանքի սեփականությունը և պայմանագրի բնույթը (օրինակ, կնքման օրվանից հետո սովորաբար երկօրյա ժամկետով, կամ ամրագրված ժամկետով պայմանագիր):

բ) Խրախուսվում է, որ իրականացնող երկրները, ներառյալ պետական

3. ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

ձեռնարկությունները, հրապարակեն գնորդ ընկերությունների ընտրության գործընթացի նկարագրությունը, ընտրությունը կատարելու համար օգտագործված տեխնիկական և ֆինանսական չափանիշները, ընտրված գնորդ ընկերությունների ցուցակը, ցանկացած էական շեղումներ գնորդ ընկերությունների ընտրությունը կառավարող կիրառելի օրենսդրական և կարգավորող դաշտից, ինչպես նաև առնչվող վաճառքի պայմանագրերը:

գ) Խրախուսվում է, որ պետությունից նավթ, գազ և (կամ) պինդ օգտակար հանածոներ գնող ընկերությունները, ներառյալ պետական ձեռնարկությունները (կամ պետության կողմից՝ իր անունից վաճառելու համար նշանակված երրորդ անձինք) բացահայտեն պետությունից կամ պետական ձեռնարկությունից ստացած ծավալները և նավթի, գազի և (կամ) պինդ օգտակար հանածոների գնման համար կատարած վճարումները: Կարող են ներառվել փոխանակման համաձայնագրերին և ռեսուրսներով ապահովված վարկերին առնչվող վճարումները (կանխիկ կամ բնաիրային տեսքով):

Հրապարակված տվյալները կարող են ապագաբեկացվել ըստ առանձին վաճառողների, պայմանագրի կամ վաճառքի:

Բացահայտումները կարող են յուրաքանչյուր վաճառքի համար ներառել տեղեկություններ պայմանագրի բնույթի (օրինակ, կնքման օրվանից հետո սովորաբար երկօրյա ժամկետով, կամ ամրագրված ժամկետով պայմանագիր) և բեռնման վայրի մասին:

դ) Եթե առկա են տվյալների հուսալիության հետ կապված մտահոգություններ և եթե դա գործնականում իրագործելի է, բազմաշահառու խումբը պետք է նախատեսի լրացուցիչ ջանքեր՝ անդրադառնալու բացահայտված տեղեկություններում տեղ գտած ցանկացած բացերի, անհամապատասխանությունների կամ անկանոնությունների:

4.3 Ենթակառուցվածքների համար մատակարարումները և ապրանքափոխանակության պայմանավորվածությունները

Բազմաշահառու խմբից պահանջվում է քննարկել, թե կա՞ն արդյոք համաձայնագրեր կամ համաձայնությունների փաթեթներ (այդ թվում՝ փոխառություններ, դրամաշնորհներ և ենթակառուցվածքների աշխատանքներ), որոնք ներառում են ապրանքների և ծառայությունների տրամադրում՝ որպես լրիվ կամ մասնակի փոխանակում նավթի, գազի կամ երկրաբանական հետախուզման կամ արդյունահանման կոնցեսիաների կամ նման ապրանքների ֆիզիկական մատակարարման դիմաց: Դրա համար բազմաշահառու խումբը պետք է լիարժեք պատկերացում կազմի հետևյալի մասին. համապատասխան համաձայնագրերի և պայմանագրերի պայմանները, ներգրավված կողմերը, պետության հանձն առած ռեսուրսները, հավասարակշռող տարբեր հոսքերի արժեքը (օրինակ՝ ենթակառուցվածքների աշխատանքները) և այդ համաձայնագրերի էականությունը՝

3. ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

տիպային պայմանագրերի համեմատ:

Այն դեպքերում, երբ բազմաշահառու խմբի եզրակացությամբ այդ համաձայնագրերը համարվում են էական, բազմաշահառու խմբից պահանջվում է ապահովել, որ ԱՃԹՆ-ի իրականացումն անդրադառնա այդ համաձայնագրերին, և բացահայտումներն ապահովեն մանրամասնությունների և ապագաբեգացման այնպիսի մակարդակ, որը համապատասխանում է այլ վճարումներին և եկամտային հոսքերին: Բազմաշահառու խմբից պահանջվում է համաձայնության գալ որևէ ընթացակարգի շուրջ՝ անդրադառնալու տվյալների որակին և վերոշարադրյալ տեղեկությունների ապահովմանը՝ համաձայն պահանջ 4.9-ի:

4.4 Փոխադրումներից ստացվող եկամուտները

Այն դեպքում, երբ նավթի, գազի և պինդ օգտակար հանածոների փոխադրումից ստացված եկամուտներն էական են, ակնկալվում է կառավարության և պետական ձեռնարկությունների (ՊՁ-ների) կողմից ստացված եկամուտների բացահայտում: Հրապարակված տվյալները պետք է ապահովեն մանրամասնությունների և ապագաբեգացման այնպիսի մակարդակ, որը համապատասխանում է այլ վճարումներին և եկամտային հոսքերին (4.7): Խրախուսվում է, որ բազմաշահառու խումբը համաձայնության գա որևէ ընթացակարգի շուրջ՝ անդրադառնալու տվյալների որակին և փոխադրումներից ստացվող եկամուտների վերաբերյալ տեղեկությունների ապահովմանը՝ համաձայն պահանջ 4.9-ի:

Իրականացնող երկրները կարող են բացահայտել.

- i. փոխադրման պայմանավորվածությունների նկարագրությունը, ներառյալ՝ արտադրանքը, փոխադրման ուղին (ուղիները) և փոխադրման գործընթացում ներգրավված համապատասխան ընկերությունները և պետական կազմակերպությունները, այդ թվում՝ ՊՁ-ն (ՊՁ-ները),
- ii. փոխադրման համապատասխան հարկերի, սակագների կամ այլ համապատասխան վճարումների սահմանումները, ինչպես նաև դրանք հաշվարկելու համար օգտագործված մեթոդաբանությունները,
- iii. սակագների դրույքաչափերի և փոխադրված ապրանքների ծավալի բացահայտումը,
- iv. պետական կազմակերպությունների և ՊՁ-ի (ՊՁ-ների) կողմից նավթի, գազի և պինդ օգտակար հանածոների փոխադրումից ստացված եկամուտների բացահայտումը:

4.5 Պետական ձեռնարկություններին (ՊՁ-ներին) առնչվող գործարքները

Բազմաշահառու խումբը պետք է ապահովի, որ հաշվետվությունների ներկայացման գործընթացում համակողմանի անդրադարձ կատարվի ՊՁ-ների դերին, այդ թվում՝

3. ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

ընկերություններից ՊՁ-ներին կատարվող էական վճարումների համակողմանի և հուսալի բացահայտումներին, ՊՁ-ներից պետական մարմիններին կատարվող փոխանցումներին և պետությունից ՊՁ-ներին կատարվող փոխանցումներին:

4.6 Տեղական կառավարման մարմիններին կատարվող վճարումները

Բազմաշահառու խմբից պահանջվում է հաստատել, թե էական են արդյոք համաձայնեցված տարբեր հոսքերի շրջանակներում ընկերություններից տեղական կառավարման մարմիններ կատարվող ուղղակի վճարումները: Այն դեպքում, երբ դրանք էական են, բազմաշահառու խումբը պարտավոր է ապահովել, որ ընկերությունների կողմից տեղական կառավարման մարմիններ կատարվող վճարումները և այդ վճարումների ստացումը բացահայտված լինեն: Բազմաշահառու խմբից պահանջվում է համաձայնության գալ որևէ ընթացակարգի շուրջ՝ անդրադառնալու տվյալների որակին և տեղական կառավարման մարմիններին կատարվող վճարումների վերաբերյալ տեղեկությունների ապահովմանը՝ համաձայն պահանջ 4.9-ի:

4.7 Ապագրեզացման աստիճանը

Պահանջվում է, որ ԱՃԹՆ-ի տվյալները ապագրեզացվեն՝ ըստ առանձին նախագծի, ընկերության, պետական կազմակերպության և եկամտային հոսքի:

Ծրագիրը սահմանվում է որպես գործառնական գործողություններ, որոնք ղեկավարվում են մեկ պայմանագրով, լիցենզիայով, վարձակալության, կոնցեսիոն կամ նույնպիսի իրավական համաձայնագրով և հիմք են հանդիսանում կառավարության հանդեպ վճարման պարտավորությունների համար: Այդուհանդերձ, եթե մեկից ավելի նման պայմանագրեր էապես փոխկապակցված են, ապա բազմաշահառու խումբը պետք է հստակորեն որոշի և փաստաթղթավորի, թե ո՞ր դեպքերն են համարվում մեկ նախագիծ:

Էականորեն փոխկապակցված համաձայնագրերը գործառնական և աշխարհագրական առումներով ինտեգրված պայմանագրերի, լիցենզիաների, վարձակալության կամ կոնցեսիոն կամ առնչվող պայմանագրերի հավաքակազմ են՝ էականորեն նման պայմաններով, որոնք ստորագրվում են կառավարության հետ, ինչը հանգեցնում է վճարման պարտավորությունների: Նման պայմանագրերը կարող են կառավարվել մեկ պայմանագրով, համատեղ ձեռնարկությամբ, արդյունահանումը համատեղ իրականացնելու պայմանագրով կամ այլ համընդգրկուն իրավական համաձայնագրով:

Եթե ԱՃԹՆ-ի բացահայտումների շրջանակներում ընդգրկված վճարումը գանձվում է կազմակերպության մակարդակում, այլ ոչ թե ծրագրի մակարդակում, ապա ընկերությունը կարող է վճարումը բացահայտել կազմակերպության մակարդակում:

3. ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

4.8 Տվյալների արդիականությունը

ա) ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներից պահանջվում է կանոնավոր կերպով հրապարակել արդիական տեղեկություններ՝ համաձայն ԱՃԹՆ-ի ստանդարտի և համաձայնեցված աշխատանքային ծրագրի (1.5)³ տարեկան կտրվածքով: Բազմաշահառու խումբը պետք է համաձայնեցնի ԱՃԹՆ-ի բացահայտումների ընդգրկած հաշվարկային ժամանակահատվածը:

բ) Տվյալները պետք է լինեն ոչ ավելի հին, քան նախավերջին ամբողջական հաշվարկային ժամանակահատվածից, օրինակ, 2018 ֆինանսական տարվան վերաբերող տեղեկությունները պետք է հրապարակվեն ամենաուշը մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը:

4.9 Տվյալների որակը և որակի ապահովումը

ա) ԱՃԹՆ-ը պահանջում է գնահատել, թե արդյոք վճարումները և եկամուտները ենթարկվում են արժանահավատ, անկախ աուդիտի՝ աուդիտի իրականացման միջազգային ստանդարտների կիրառմամբ: Ակնկալիքն այն է, որ կառավարության և ընկերությունների բացահայտումները, համաձայն պահանջ 4 -ի, ենթակա են արժանահավատ, անկախ աուդիտի՝ աուդիտի իրականացման միջազգային ստանդարտների կիրառմամբ: Ակնկալիքն այն է, որ բացահայտումները, համաձայն պահանջ 4 -ի, պետք է ներառեն բացատրություն հիմքում ընկած աուդիտների անցկացման և որակի ապահովման ընթացակարգերի վերաբերյալ, որոնց ենթարկվել են տվյալները, և հիմնավորող փաստաթղթերը պետք է մատչելի լինեն հանրությանը:

բ) Բազմաշահառու խմբից պահանջվում է համաձայնության գալ որևէ ընթացակարգի շուրջ՝ անդրադառնալու տվյալների որակին և ապահովմանը՝ հիմնվելով ԱՃԹՆ-ի Խորհրդի հաստատած տիպային ընթացակարգի վրա³: Բազմաշահառու խմբից պահանջվում է կիրառել տիպային ընթացակարգը՝ առանց էական շեղումների: Եթե բազմաշահառու խումբը ցանկանա շեղում կատարել տիպային ընթացակարգերից, պետք է նախապես հայցի ԱՃԹՆ-ի Խորհրդի հավանությունը: Բազմաշահառու խմբի հայցը պետք է անդրադառնա հետևյալներին. (i) տիպային ընթացակարգից շեղում կատարելու հիմնավորումը, (ii) առկա՞ է արդյոք ԱՃԹՆ-ի ստանդարտով պահանջվող տվյալների սահմանված կարգով բացահայտում՝ ներառելով անհրաժեշտ մանրամասները, (iii) ֆինանսական տվյալները ենթարկվե՞լ են արդյոք արժանահավատ, անկախ աուդիտի՝ միջազգային ստանդարտների կիրառմամբ, և (iv) առկա՞ է արդյոք պատմական տվյալների բավարար չափով պահպանում:

³ Հասանելի է միջազգային քարտուղարությունից և eiti.org կայքից:

3. ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

ԱՃԹՆ-Ի 5-ՐԴ ՊԱՀԱՆՋ.

Եկամուտների բաշխումը

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ. ԱՃԹՆ-ը պահանջում է եկամուտների բաշխումների հետ կապված տեղեկությունների բացահայտումներ, որոնք շահագրգիռ կողմերին հնարավորություն կտան հասկանալու, թե ինչպես են եկամուտները մուտքագրվում պետական և, կիրառելիության դեպքում, տեղական կառավարման մարմինների բյուջեներ, ինչպես նաև հետևելու ընկերությունների սոցիալական ծախսումներին: Եկամուտների բաշխմանն առնչվող ԱՃԹՆ-ի պահանջները ներառում են՝ (5.1) եկամուտների բաշխումը, (5.2) տեղական կառավարման մարմիններին կատարվող փոխանցումները և (5.3) եկամուտների կառավարումը և ծախսումները:

5.1 Արդյունահանող ոլորտի եկամուտների բաշխումը

Իրականացնող երկրները պետք է բացահայտեն արդյունահանող ոլորտից ստացված եկամուտների բաշխման նկարագրությունը:

ա) Իրականացնող երկրները պետք է նշեն, թե արդյունահանող ոլորտի ո՞ր եկամուտներն են կանխիկ և բնափրային տեսքով մուտքագրվում պետական բյուջե: Այն դեպքերում, երբ եկամուտները չեն մուտքագրվում պետական բյուջե, այդ եկամուտների հատկացումները պետք է պարզաբանվեն՝ կիրառելիության դեպքում ներառելով հղումներ համապատասխան ֆինանսական հաշվետվություններին՝ նշելով, օրինակ, ազգային բարեկեցության և զարգացման հիմնադրամները, տեղական կառավարման մարմինները, պետական ձեռնարկությունները և այլ արտաբյուջետային կառույցները:

բ) Խրախուսվում է բազմաշահառու խմբերի կողմից պետական եկամուտների դասակարգման համակարգերին և այնպիսի միջազգային ստանդարտներին հղում կատարելը, ինչպիսին է, օրինակ՝ Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) «Կառավարության ֆինանսական վիճակագրության ձեռնարկը»:

5.2 Տեղական կառավարման մարմիններին կատարվող փոխանցումները

ա) Այն դեպքերում, երբ պետական և տեղական կառավարման մարմինների միջև կատարվող փոխանցումները կապված են արդյունահանող ճյուղերից գոյացած եկամուտների հետ և սահմանված են տվյալ երկրի սահմանադրությամբ, օրենքներով կամ եկամտի բաշխման այլ մեխանիզմներով, բազմաշահառու խումբը պարտավոր է ապահովել էական փոխանցումների բացահայտումը: ԱՃԹՆ-ն իրականացնող պետություններն առկայության դեպքում պետք է բացահայտեն եկամտի բաշխման

3. ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

բանաձևը, ինչպես նաև այն բոլոր անհամապատասխանությունները, որոնք առկա են եկամտի բաշխման համատառասխան բանաձևի համաձայն հաշվարկված փոխանցման գումարի և կենտրոնական կառավարության ու յուրաքանչյուր համապատասխան տեղական կառավարման մարմնին կատարված փոխանցված փաստացի գումարի միջև: Խրախուսվում է, որ բազմաշահառու խումբը համաձայնության գա որևէ ընթացակարգի շուրջ՝ անդրադառնալու տվյալների որակին և տեղական կառավարման մարմիններին կատարվող փոխանցումների վերաբերյալ տեղեկությունների ապահովմանը՝ համաձայն պահանջ 4.9-ի: Այն դեպքում, երբ տեղական կառավարման պետական մարմինների մասնակցության համար առկա են սահմանադրական կամ կիրարկման էական խոչընդոտներ, բազմաշահառու խումբը կարող է ընտրել հարմարեցված իրականացման տարբերակը՝ համաձայն ԱՃԹՆ-ի իրականացման նկատմամբ ԱՃԹՆ-ի Խորհրդի վերահսկողության ընթացակարգերի 1-ին հոդվածի (4-րդ բաժին):

բ) Խրախուսվում է, որ բազմաշահառու խումբն ապահովի նաև բոլոր էական հայեցողական կամ հատուկ (ad hoc) փոխանցումների բացահայտումը և համաձայնության գա որևէ ընթացակարգի շուրջ՝ անդրադառնալու տվյալների որակին և նման փոխանցումների վերաբերյալ տեղեկությունների ապահովմանը՝ համաձայն պահանջ 4.9-ի:

գ) Առաջարկվում է, որ բազմաշահառու խումբը այնուհետև հաղորդին, թե արդյունահանող ոլորտից ստացվող՝ տարածքային մակարդակում հատուկ ծրագրերի կամ ներդրումների համար նախատեսված եկամուտներն ինչպես են կառավարվում, և ներկայացնի իրական մասհանումները:

5.3 Եկամուտների կառավարումը և ծախսերը

Խրախուսվում է, որ բազմաշահառու խումբը բացահայտի եկամուտների կառավարման և ծախսերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ, այդ թվում.

ա) արդյունահանող ոլորտից ստացվող՝ հատուկ ծրագրերի կամ աշխարհագրական շրջանների համար նախատեսված բոլոր եկամուտների նկարագրությունը: Դա պետք է ներառի դրանց օգտագործման գործընթացում հաշվետվողականության և արդյունավետության ապահովման մեթոդների նկարագրությունը:

բ) երկրի բյուջեի և աուդիտի գործընթացների նկարագրությունը և բյուջետավորման, ծախսերի և աուդիտի հաշվետվությունների վերաբերյալ հանրության համար հասանելի տեղեկատվության հղումները:

գ) կառավարությունից ստացված պատեհաժամ տեղեկությունները, որոնք կխթանեն եկամուտների կայունության և ռեսուրսներից կախվածության հետ կապված հարցերի վերաբերյալ հանրային ընկալումը և դրանց շուրջ հանրային երկխոսությունը: Դա

3. ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

կարող է ներառել ենթադրություններ՝ հիմնվելով բյուջետային ցիկլում ընդգրկված առաջիկա տարիների վրա և կապված արդյունահանող ոլորտից կանխատեսվող արդյունահանման, ապրանքների գների ու եկամուտների կանխատեսումների, ինչպես նաև արդյունահանող ոլորտից ակնկալվող ապագա ֆիսկալ եկամուտների համամասնության հետ:

3. ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

ԱՃԹՆ-Ի 6-ՐԴ ՊԱՀԱՆՋ.

Սոցիալական և տնտեսական ծախսերը

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ. ԱՃԹՆ-ն խրախուսում է սոցիալական ծախսերի և եկամուտների կառավարման և ծախսումների վերաբերյալ տեղեկությունների բացահայտումներ, ինչը շահագրգիռ կողմերին կօգնի գնահատել, թե արդյունահանող ոլորտում գործունեությունը հանգեցնո՞ւմ է արդյոք սոցիալական և տնտեսական ցանկալի հետևանքների և արդյունքների: Եկամուտների բաշխմանն առնչվող ԱՃԹՆ-ի պահանջները ներառում են՝ (6.1) ընկերությունների կողմից կատարվող սոցիալական և բնապահպանական ծախսումները, (6.2) ՊԶ-ի քվադի-ֆիսկալ ծախսումները, (6.3) տնտեսության մեջ արդյունահանող ոլորտի մասնաբաժնի ամփոփ նկարագիրը և (6.4) արդյունահանման գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

6.1 Ընկերությունների կողմից կատարվող սոցիալական և բնապահպանական ծախսումները

ա) Այն դեպքերում, երբ ընկերությունների կողմից կատարվող էական սոցիալական ծախսերը պահանջվում են օրենսդրությամբ կամ կառավարության հետ կնքված այնպիսի պայմանագրով, որով կարգավորվում են արդյունահանող ոլորտում ներդրումները, իրականացնող երկրները պետք է բացահայտեն այդ գործարքները: Այն դեպքում, երբ այդ օգուտները տրամադրվում են բնափրային տեսքով, ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներից պահանջվում է այդ բնափրային գործարքի բնույթի և ենթադրյալ արժեքի բացահայտում: Այն դեպքում, երբ սահմանված սոցիալական ծախսի շահառուները երրորդ կողմ է, այսինքն՝ կառավարության գործակալություն չէ, պահանջվում է շահառուի անվանման և գործառույթների բացահայտում: Եթե հնարավոր չէ իրականացնել համադրում, ապա երկրները պետք է տրամադրեն ընկերության և (կամ) կառավարության միակողմ բացահայտումներն այդ գործարքների վերաբերյալ:

բ) Եթե ընկերությունների կողմից կառավարությանը կատարվող էական բնապահպանական վճարումները պահանջվում են օրենսդրությամբ, կանոնակարգով կամ այնպիսի պայմանագրով, որով կարգավորվում են արդյունահանող ոլորտում ներդրումները, նման վճարումները պետք է բացահայտվեն:

գ) Բազմաշահառու խմբից պահանջվում է համաձայնության գալ որևէ ընթացակարգի շուրջ՝ անդրադառնալով տվյալների որակին և սոցիալական ու բնապահպանական ծախսումների վերաբերյալ տեղեկությունների ապահովմանը՝ համաձայն պահանջ 4.9-ի:

3. ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

դ) Այն դեպքերում, երբ բազմաշահառու խումբը համաձայնում է, որ հայեցողական սոցիալական և բնապահպանական ծախսումներն ու փոխանցումներն էական են, խրախուսվում է նրա կողմից հաշվետվությունների ներկայացման գործընթացի մշակումը՝ այլ վճարումների և եկամուտների բացահայտմանը համապատասխան թափանցիկությունն ապահովելու նպատակով: Խրախուսվում է, որ բազմաշահառու խումբը համաձայնության գա որևէ ընթացակարգի շուրջ՝ անդրադառնալու տվյալների որակին և վերոշարադրյալ տեղեկությունների ապահովմանը՝ համաձայն պահանջ 4.9-ի:

6.2 Քվազի-ֆիսկալ ծախսումները

Այն դեպքում, երբ արդյունահանող ճյուղերում պետության մասնակցությունը հանգեցնում է էական եկամուտների վճարումների, իրականացնող պետությունները պետք է ներառեն ՊՁ-ներից ստացված՝ իրենց քվազի-ֆիսկալ ծախսերի վերաբերյալ բացահայտումները: Բազմաշահառու խմբից պահանջվում է մշակել հաշվետվությունների ներկայացման գործընթաց՝ նպատակ ունենալով հասնել թափանցիկության այնպիսի մակարդակի, որը կապահովի համապատասխանությունը մյուս վճարումների և եկամուտների հոսքերի հետ, ինչպես նաև պետք է ներառի ՊՁ-ի դուստր ձեռնարկությունները և համատեղ ձեռնարկությունները:

Քվազի-ֆիսկալ ծախսերը ներառում են պայմանավորվածություններ, որոնց համաձայն ՊՁ-ները կատարում են հանրային սոցիալական այնպիսի ծախսումներ, ինչպիսիք են սոցիալական ծառայությունների, հանրային ենթակառուցվածքների, վառելիքի սուբսիդիաների ու պետական պարտքի մարման և այլ նպատակներով կատարվող վճարումները, որոնք ներառված չեն պետական բյուջետավորման գործընթացում: Առաջարկվում է, որ իրականացնող երկրները և բազմաշահառու խմբերը նկատի ունենան քվազի-ֆիսկալ ծախսերի ԱՄՀ-ի սահմանումը՝ այն հարցը քննության առնելիս, թե ծախսերը համարվո՞ւ են արդյոք քվազի-ֆիսկալ:

6.3 Արդյունահանող ոլորտի ներդրումը տնտեսության մեջ

ԱՃԹՆ-ն իրականացնող պետությունները հասանելիության դեպքում պետք է բացահայտեն տեղեկություններ ԱՃԹՆ-ի իրականացման մեջ ընդգրկված ֆիսկալ տարվա համար տնտեսության մեջ արդյունահանող ճյուղերի կատարած ներդրման մասին: Պահանջվում է, որ այդ տեղեկությունները ներառեն հետևյալը.

ա) արդյունահանող ճյուղերի չափը՝ բացարձակ մեծություններով և որպես ՀՆԱ-ի տոկոս, ինչպես նաև ոլորտի ոչ ֆորմալ գործունեության գնահատումը՝ ներառելով արտիզանային և փոքրամասշտաբ արդյունահանումը (artisanal and small-scale mining), սակայն ոչ անպայմանորեն սահմանափակվելով դրանով,

3. ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

բ) արդյունահանող ճյուղերից գոյացած կառավարության ընդհանուր եկամուտները (ներառյալ՝ հարկերը, ռոյալթիները, հավելավճարները, վճարները և այլ վճարումները)՝ բացարձակ մեծություններով և որպես կառավարության ընդհանուր եկամուտների տոկոս,

գ) արդյունահանող ճյուղերից կատարվող արտահանման ծավալը՝ բացարձակ մեծություններով և որպես արտահանման ընդհանուր ծավալի տոկոս,

դ) զբաղվածության մակարդակն արդյունահանող ճյուղերում՝ բացարձակ մեծություններով և որպես ընդհանուր զբաղվածության տոկոս: Տեղեկությունները պետք է ապագրեգացվեն ըստ գեոդերի, և, առկայության դեպքում, լրացուցիչ կերպով ապագրեգացվեն ըստ ընկերությունների և մասնագիտական մակարդակի:

ե) այն հիմնական շրջանները (վայրերը), որտեղ կենտրոնացված է արդյունահանումը:

6.4 Արդյունահանման գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա

Խրախուսվում է, որ իրականացնող երկրները բացահայտեն տեղեկություններ արդյունահանող ճյուղերի՝ շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության կառավարման և մոնիտորինգի վերաբերյալ: Դրանք կարող են ներառել.

ա) համապատասխան իրավական դրույթների և վարչական կանոնների, ինչպես նաև երկրում շրջակա միջավայրի կառավարման և արդյունահանման ներդրումների մոնիտորինգի վերաբերյալ իրական գործելակերպի ընդհանուր ակնարկ: Սա կարող է ներառել տեղեկություններ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, սերտիֆիկացման սխեմաների, նավթ, գազ և պինդ օգտակար հանածոներ արդյունահանող ընկերություններին տրված լիցենզիաների և իրավունքների, ինչպես նաև կանոնների և կանոնակարգերի կատարման գործում պետական պատկան մարմինների դերերի և պատասխանատվությունների մասին: Հետագայում կարող են ներառվել նաև տեղեկություններ ծրագրված կամ ընթացքի մեջ գտնվող բարեփոխումների վերաբերյալ:

բ) տեղեկություններ շրջակա միջավայրի կանոնավոր մոնիտորինգի ընթացակարգերի, կառավարությունների վարչական և պատժամիջոցների կիրառման գործընթացների, ինչպես նաև բնապահպանական պարտավորությունների, շրջակա միջավայրի վերականգնման և աղտոտիչներից մաքրման ծրագրերի մասին:

3. ԱԾԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

ԱԾԹՆ-Ի 7-ՐԴ ՊԱՀԱՆՋ

Արդյունքները և ազդեցությունը

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ. Արդյունահանող ոլորտի վերաբերյալ տվյալների կանոնավոր բացահայտումը գործնական փոքր նշանակություն ունի առանց հանրային իրազեկվածության, առանց հասկանալու, թե ինչ են նշանակում այդ թվերը, առանց հանրային բանավեճի այն հարցի շուրջ, թե ինչպես կարելի է արդյունավետ կերպով օգտագործել ռեսուրսներից ստացվող եկամուտները: Արդյունքներին և ազդեցությանն առնչվող ԱԾԹՆ-ի պահանջները նպատակաուղղված են բնական ռեսուրսներից ստացվող եկամուտների կառավարման վերաբերյալ հանրային բանավեճում շահագրգիռ կողմերի ներգրավվածության ապահովմանը: ԱԾԹՆ-ի բացահայտումները հանգեցնում են ԱԾԹՆ-ի սկզբունքների իրականացմանը՝ նպաստելով հանրային երկխոսության առավել լայն ընդգրկմանը: Էական նշանակություն ունի նաև այն, որ գործողություններ կատարվեն իրականացման ընթացքում քաղված դասերի հիման վրա, ԱԾԹՆ-ի իրականացումներից բխող առաջարկները քննության առնվեն և հարկ եղած դեպքում իրագործվեն, և ԱԾԹՆ-ի իրականացումը դրվի հաստատուն և կայուն հիմքերի վրա:

7.1 Հանրային բանավեճը

Բազմաշահառու խումբը պետք է ապահովի, որ կառավարության և ընկերությունների բացահայտումները լինեն համակողմանի, ակտիվորեն խթանվի դրանց հրապարակայնությունը, հասանելի լինեն հանրության համար և նպաստեն հանրային երկխոսությանը: Հիմնական լսարանը պետք է ներառի կառավարությանը, խորհրդարանականներին, քաղաքացիական հասարակությանը, ընկերություններին և լրատվամիջոցներին:

ա) Բազմաշահառու խմբից պահանջվում է՝

- i. ապահովել, որ տեղեկությունները լինեն լայնորեն հասանելի և տարածված: Խրախուսվում է, որ բազմաշահառու խումբը այդ տեղեկությունները բաժանի թեմատիկ հաշվետվությունների և ապահովի դրանց առցանց հասանելիությունը:
- ii. ապահովել, որ տեղեկությունները լինեն համակողմանի՝ այդ թվում՝ ապահովելով որ դրանց պարզ, ընկալելի ոճով և լեզվի պատշաճ գործածությամբ շարադրանքը, ինչպես նաև հաշվի առնի հասանելիության մարտահրավերները տարբեր գենդերների ու ենթախմբերի քաղաքացիների համար և նրանց տեղեկատվական կարիքները:
- iii. ապահովել, որ թե՛ կառավարության, թե՛ քաղաքացիական հասարակության և

3. ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

Թե՛ ընկերությունների կողմից կազմակերպված իրազեկման միջոցառումներն իրականացվեն՝ արդյունահանվող պաշարների կառավարման վերաբերյալ իրազեկվածության շրջանակն ընդլայնելու և դրա շուրջ հանրային երկխոսությունը խթանելու նպատակով՝ հիմնվելով ողջ երկրում ԱՃԹՆ-ի սոցիալապես ներառական եղանակով բացահայտումների վրա:

բ) Խրախուսվում է, որ բազմաշահառու խումբը.

- i. կազմի տեղեկությունների հստակ և հավասարակշռված վերլուծություն պարունակող համառոտ ամփոփ հաշվետվություններ՝ ապահովելով տվյալների աղբյուրների և հեղինակների հստակ հիշատակումը,
- ii. ամփոփի և համեմատի յուրաքանչյուր եկամտային հոսքի մասնաբաժինը կառավարության՝ համապատասխան մակարդակում կուտակված եկամուտների ընդհանուր գումարի մեջ,
- iii. գործադրի կարողությունների ամրապնդմանն ուղղված ջանքեր, հատկապես քաղաքացիական հասարակության հետ և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջոցով՝ հաշվետվություններում և առցանց բացահայտումներում ներառված տեղեկությունների ու տվյալների ընկալումը բարելավելու, քաղաքացիների, լրատվամիջոցների և այլոց կողմից տեղեկությունների օգտագործումը խրախուսելու նպատակով:

7.2 Տվյալների հասանելիությունը և բաց տվյալները

Իրականացնող երկրները պետք է ապահովեն, որ ԱՃԹՆ-ի բացահայտումները հրապարակայնորեն հասանելի դարձվեն: Բազմաշահառու խումբը պետք է.

ա) համաձայնության գա ԱՃԹՆ-ի տվյալների հասանելիության, հրապարակման և վերաօգտագործման հստակ, բաց տվյալների քաղաքականության վերաբերյալ: Պետական մարմիններից և ընկերություններից ակնկալվում է հրապարակել ԱՃԹՆ-ի տվյալները բաց լիցենզիայով և օգտագործողներին իրազեկել այն մասին, որ տեղեկությունները կարող են վերաօգտագործվել առանց նախնական համաձայնության:

բ) ապահովի տվյալների հասանելիությունը բաց տվյալների ձևաչափով՝ առցանց և հանրայնացնի դրանց հասանելիությունը: «Բաց տվյալների ձևաչափ» նշանակում է, որ տվյալները կարող են հասանելի դարձվել CSV կամ Excel ձևաչափով և կարող են բովանդակել ԱՃԹՆ-ի հաշվետվություններում տեղ գտած բոլոր աղյուսակները, դիագրամները և գծապատկերները:

գ) լրացնի տվյալների ամփոփ ֆայլերը ԱՃԹՆ-ում ընդգրկված յուրաքանչյուր ֆիսկալ

3. ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

տարվա համար՝ համաձայն ԱՃԹՆ-ի հտորհրդի հաստատած ձևանմուշի,

դ) Բազմաշահառու խմբին խրախուսվում է ապահովել համակարգված կերպով բացահայտված տվյալների մեքենայալընթեռնելիությունը և փոխգործելիությունը, ԱՃԹՆ-ի բացահայտումների ու տվյալների ֆայլերի կողմնորոշումը կամ նշումն այնպես, որ հնարավոր լինի տեղեկությունները համեմատել հանրության համար հասանելի այլ տվյալների հետ:

7.3 ԱՃԹՆ-ի իրականացման արդյունքում ստացված առաջարկները

Բնական ռեսուրսների կառավարման բնագավառում ԱՃԹՆ-ի իրականացման ազդեցությունը մեծացնելու նպատակով բազմաշահառու խմբից պահանջվում է քայլեր ձեռնարկել քաղված դասերի հիման վրա գործողություններ կատարելու ուղղությամբ, հայտնաբերել, ուսումնասիրել և վերացնել ցանկացած տեղեկատվական բացերի և անհամապատասխանությունների պատճառները, ինչպես նաև քննարկել ԱՃԹՆ-ի իրականացման արդյունքում ստացված առաջարկները: Բազմաշահառու խումբը կարող է հաշվի առնել պետական համակարգերի ամրապնդման և բնական ռեսուրսների կառավարման վերաբերյալ առաջարկները համաձայնեցնելու հարցը: Խրախուսվում է, որ, անհրաժեշտության դեպքում, իրականացնող երկրները հետևեն նման առաջարկների իրագործմանը:

7.4 ԱՃԹՆ-ի իրականացման արդյունքների և ազդեցության ուսումնասիրությունը

Բազմաշահառու խմբից պահանջվում է ուսումնասիրել ԱՃԹՆ-ի իրականացման արդյունքները և ազդեցությունը բնական ռեսուրսների կառավարման բնագավառում:

ա) Բազմաշահառու խմբից պահանջվում է փաստաթղթավորել ԱՃԹՆ-ի իրականացման արդյունքների և ազդեցության իր ամենամյա ուսումնասիրությունը տարեկան առաջընթացի հաշվետվության մեջ կամ բազմաշահառու խմբի համաձայնեցրած այլ միջոցներով: Դա պետք է ներառի ցանկացած գործողություններ, որոնք ձեռնարկվել են բազմաշահառու խմբի կողմից ԱՃԹՆ-ի իրականացման համար որպես առաջնահերթություններ նշված հարցերին անդրադառնալու նպատակով⁴: Արդյունքների և ազդեցության ամենամյա ուսումնասիրությունը պետք է ներառի՝

- նախորդ տարվա ընթացքում ԱՃԹՆ-ի իրականացման շրջանակներում ձեռնարկված գործողությունների ամփոփ նկարագրությունը և այդ գործողությունների արդյունքների շարադրանքը,
- ԱՃԹՆ-ի յուրաքանչյուր պահանջը բավարարելու առումով արձանագրված առաջընթացի գնահատումը, ինչպես նաև պահանջները գերազանցելուն

⁴ Տիպային ձևանմուշը կարելի է ստանալ միջազգային ջարտողարկությունից:

3. ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներին ներկայացվող պահանջները

ուղղված ձեռնարկված բոլոր քայլերը: Դա պետք է ներառի ցանկացած գործողություններ, որոնք ձեռնարկվել են բազմաշահառու խմբի կողմից ԱՃԹՆ-ի իրականացման համար որպես առաջնահերթություններ նշված հարցերին անդրադառնալու նպատակով:

- 7.3 պահանջի համապատասխան իրականացված համադրման և վավերացման արդյունքում ստացված առաջարկներին բազմաշահառու խմբի կողմից տրված պատասխանների և այդ առաջարկների հետ կապված լուծումներ տրամադրելու հարցում գրանցված առաջընթացի ամփոփ նկարագրությունը: Բազմաշահառու խմբից պահանջվում է թվարկել բոլոր առաջարկները և դրանցից յուրաքանչյուրի կատարման համար ձեռնարկված համապատասխան գործողությունները, ինչպես նաև յուրաքանչյուր առաջարկի իրականացման հարցում գրանցված առաջընթացի աստիճանը: Այն դեպքերում, երբ կառավարությունը կամ բազմաշահառու խումբը որոշել է չիրականացնել որևէ առաջարկ, ապա պահանջվում է, որ բազմաշահառու խումբը փաստաթղթավորի դրա հիմնավորումը:
- Իր աշխատանքային ծրագրում սահմանված նպատակներին հասնելու առումով գրանցված առաջընթացի գնահատումը (1.5 պահանջ), ներառյալ՝ ամրագրված նպատակների ազդեցությունը և արդյունքները:
- Նկարագրական բնույթի տեղեկություններ բնական ռեսուրսների կառավարման բնագավառում ԱՃԹՆ-ի իրականացման ազդեցությունն ուժեղացնելու ուղղությամբ գործադրված ջանքերի վերաբերյալ, ներառյալ՝ ԱՃԹՆ-ի զեկույցի կազմման և ներկայացման գործընթացում առավել մանրամասն տեղեկություններ ներկայացնելուն և այդ գործընթացի շրջանակներն ընդլայնելուն կամ շահագրգիռ կողմերի ներգրավվածության մակարդակը բարձրացնելուն ուղղված բոլոր գործողությունները:

Հավելումն, խրախուսվում է, որ բազմաշահառու խումբը ներկայացնի, թե ինչպես է հաշվի առել գենդերային նկատառումները և ներառականությունը:

բ) Բոլոր շահագրգիռ կողմերը պետք է կարողանան մասնակցել ԱՃԹՆ-ի իրականացման ազդեցության ուսումնասիրության աշխատանքներին: Մասնավորապես, ԱՃԹՆ-ի գործընթացում ներգրավված քաղաքացիական հասարակության խմբերը և արդյունահանողները, չսահմանափակվելով բազմաշահառու խմբի անդամներով, պետք է կարողանան կարծիք տրամադրել ԱՃԹՆ-ի իրականացման վերաբերյալ և ապահովել իրենց տեսակետների արտացոլումը ազդեցության և արդյունքների ամենամյա ուսումնասիրության մեջ:

4. ԱՃԹՆ-ի իրականացման նկատմամբ ԱՃԹՆ-ի Խորհրդի վերահսկողությունը

4. ԱՃԹՆ-ի իրականացման նկատմամբ ԱՃԹՆ-ի Խորհրդի վերահսկողությունը

Այս բաժնում ներկայացված են ընթացակարգերը և չափանիշները, որոնք ԱՃԹՆ-ի Խորհուրդը կիրառում է ԱՃԹՆ-ի իրականացումը վերահսկելիս և վավերացնելիս: Դրանք ներառում են ԱՃԹՆ-ի Խորհրդի կողմից՝ ԱՃԹՆ-ի տվյալների հրապարակման և վավերացման գործընթացի վերահսկողության համար սահմանված ժամկետները:

Հոդված 1. Հարմարեցված իրականացումը

Այն դեպքում, երբ բազմաշահառու խումբը եզրակացնում է, որ առկա են բացառիկ հանգամանքներ, որոնք առաջացնում են իրականացման պահանջներից շեղում կատարելու անհրաժեշտություն, այն պետք է հարմարեցված իրականացման համար հայցի ԱՃԹՆ-ի Խորհրդի նախնական հաստատումը: Հայցը պետք է հաստատվի բազմաշահառու խմբի կողմից և արտացոլվի աշխատանքային ծրագրում: Հայցում պետք է բացատրվի հարմարեցված իրականացման հիմնավորումը:

ԱՃԹՆ-ի Խորհուրդը կքննարկի հարմարեցումների համար թույլտվություն տրամադրելու հնարավորությունը միայն բացառիկ հանգամանքներում: Նման հայցերը քննարկելիս ԱՃԹՆ-ի Խորհուրդը առաջնահերթությունը կտա երկրների նկատմամբ համեմատելի մոտեցում ցուցաբերելու և ԱՃԹՆ-ի սկզբունքների պահպանումն ապահովելու անհրաժեշտությանը, այդ թվում՝ ապահովելով, որ ԱՃԹՆ-ի գործընթացը լինի բավականաչափ ներառական, իսկ ԱՃԹՆ-ի բացահայտումները լինեն համակողմանի, հուսալի և նպաստեն հանրային բանավեճին:

Հոդված 2. Բացահայտումների և գեկույցների ներկայացման վերջնաժամկետները

Իրականացնող երկրներից պահանջվում է հրապարակել արդիական տեղեկություններ (պահանջ 4.8): Իրականացնող երկրներից պահանջվում է հրապարակել հայցված տեղեկությունները (սովորաբար՝ ԱՃԹՆ-ի Ձեկույցի միջոցով) որպես ԱՃԹՆ-ի երկիր ընդունվելու օրվանից հետո 18 ամսվա ընթացքում: Դրանից հետո, հրապարակված տվյալները պետք է լինեն ոչ ավելի հին, քան նախավերջին ամբողջական հաշվարկային ժամանակահատվածից, օրինակ, 2018 թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող ֆինանսական տարվան վերաբերող տեղեկությունները պետք է հրապարակվեն ամենաուշը մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը:

4. ԱՃԹՆ-Ի Իրականացման նկատմամբ ԱՃԹՆ-ի Խորհրդի վերահսկողությունը

Եթե տվյալները չեն հրապարակվել մինչև պահանջվող վերջնաժամկետի լրանալը, ապա երկրի անդամակցությունը կկասեցվի: Երկրի անդամակցության կասեցումը կհանվի, եթե ԱՃԹՆ-ի Խորհրդին բավարարի այն, որ չհրապարակված տվյալները հրապարակվեն վերջնաժամկետը լրանալուց հետո վեց ամսվա ընթացքում: Եթե չհրապարակված տվյալները չհրապարակվեն վերջնաժամկետը լրանալուց հետո վեց ամսվա ընթացքում, ապա երկրի անդամակցության կասեցումը կմնա ուժի մեջ, մինչև ԱՃԹՆ-ի Խորհուրդը բավարարված լինի, որ երկիրը հրապարակել է ԱՃԹՆ-ի տվյալները համաձայն 4.8 պահանջի: Եթե կասեցումը ուժի մեջ մնա մեկ տարուց ավելի, ապա ԱՃԹՆ-ի Խորհուրդը երկրին կգրկի ԱՃԹՆ-ի անդամակցությունից:

Հոդված 3. Վավերացման նախնական վերջնաժամկետը

Երբ ԱՃԹՆ-ի Խորհուրդն ընդունում է իրականացնող երկրներ, սահմանում է վավերացումը երկուսուկես տարվա ընթացքում սկսելու վերջնաժամկետ: Ստացված արդյունքները քննության առնելուց հետո Խորհուրդը կսահմանի վերջնաժամկետ հետագա վավերացումների համար (Հոդված 5):

Հոդված 4. ԱՃԹՆ-ի վավերացման գործընթացը

ա) ԱՃԹՆ-ի յուրաքանչյուր պահանջի կատարման գնահատում

Վավերացման գործընթացի միջոցով կգնահատվի երկրի արձանագրած առաջընթացը ԱՃԹՆ-ի պահանջներից յուրաքանչյուրին համապատասխանության ապահովման առումով: Առանձին պահանջների գնահատում կատարելու համար ապացույցների տեսակների վերաբերյալ մանրամասն ցուցումները սահմանված են «Վավերացման ուղեցույց»-ում: ԱՃԹՆ-ի յուրաքանչյուր առանձին պահանջի կատարման առումով արձանագրված առաջընթացի և դրան համապատասխանության աստիճանը նշվում է՝ կիրառելով ստորև ներկայացված կատեգորիաներից որևէ մեկը.

Ակնառու առաջընթաց: Որպեսզի ԱՃԹՆ-ի Խորհուրդը եզրահանգի, որ երկիրն արձանագրել է ակնառու առաջընթաց, վավերացումը պետք է ցույց տա, որ կատարվել են տվյալ պահանջի բոլոր՝ այդ թվում՝ «ակնկալվող», «խրախուսվող» և «խորհուրդ տրվող» ասպեկտները, և իրականացվել է պահանջի առավել լայն նպատակը՝ կառավարության և ընկերությունների համակարգերում համակարգային բացահայտումների միջոցով:

Բավարար առաջընթաց: Որպեսզի ԱՃԹՆ-ի Խորհուրդը եզրահանգի, որ երկիրն արձանագրել է բավարար առաջընթաց, վավերացումը պետք է ցույց տա, որ կատարվել են տվյալ պահանջի բոլոր ասպեկտները, և իրականացվել է պահանջի առավել լայն նպատակը:

4. ԱՃԹՆ-Ի իրականացման նկատմամբ ԱՃԹՆ-ի հստիսողի վերահսկողությունը

Նշանակալի առաջընթաց: Որպեսզի ԱՃԹՆ-ի հստիսողը եզրահանգի, որ երկիրն արձանագրել է նշանակալի առաջընթաց, վավերացումը պետք է ցույց տա, որ իրականացվել են տվյալ պահանջի կարևորագույն ասպեկտները, և պահանջի առավել լայն նպատակը գտնվում է կատարման փուլում:

Ոչ համարժեք առաջընթաց: Որպեսզի ԱՃԹՆ-ի հստիսողը եզրահանգի, որ երկիրն արձանագրել է ոչ համարժեք առաջընթաց, վավերացումը պետք է ցույց տա, որ տվյալ պահանջի կարևորագույն ասպեկտները չեն իրականացվել, և պահանջի առավել լայն նպատակը հեռու է կատարված լինելուց:

Առաջընթացի բացակայություն: Որպեսզի ԱՃԹՆ-ի հստիսողը եզրահանգի, որ երկիրը չի արձանագրել որևէ առաջընթաց, վավերացումը պետք է ցույց տա, որ տվյալ պահանջի բոլոր կամ գրեթե բոլոր ասպեկտները չեն իրականացվել, և պահանջի առավել լայն նպատակը կատարված չէ:

բ) Ընդհանուր գնահատումներ

ԱՃԹՆ-ի հստիսողը կկատարի ԱՃԹՆ-ի ստանդարտում ներառված բոլոր պահանջներին համապատասխանության ապահովման առաջընթացի ընդհանուր գնահատում: Երկրի ընդհանուր գնահատականը որոշելիս ԱՃԹՆ-ի հստիսողը կկիրառի վերոբերյալ Հոդված 4-ի (ա) կետում ամփոփ ներկայացված՝ առանձին պահանջների կատարումը գնահատելու համար օգտագործվող նույն սանդղակը: Կատարողը նաև հաշվի կառնի հետևյալ գործոնները.

- Առանձին պահանջների գնահատման արդյունքները և այն, թե այդ բոլոր արդյունքները միասին վերցրած հստակորեն մատնանշում են արդյոք «բավարար առաջընթաց», «նշանակալի առաջընթաց», «ոչ համարժեք առաջընթաց» կամ «առաջընթացի բացակայություն» ընդհանուր գնահատում:
- Վավերացնողների և Վավերացման հանձնաժողովի խորհուրդները և առաջարկները,
- չիրականացված պահանջների բնույթը և այն հանգամանքը, թե որքանով են այդ պահանջները մոտ իրականացված լինելուն,
- տվյալ երկրի արդյունահանող ոլորտի կարևորությունը և բարդությունը,
- պահանջները բավարարելու հարցում առկա այլ խոչընդոտները, որոնք ներառում են, սակայն չեն սահմանափակվում դրանցով, պետության անկայունությունը և վերջին շրջանում տեղի ունեցած կամ ընթացիկ քաղաքական փոփոխությունները, ինչպես նաև խոչընդոտները հաղթահարելու ուղղությամբ բազմաշահառու խմբի ձեռնարկած գործողությունների ծավալը,

4. ԱՃԹՆ-ի իրականացման նկատմամբ ԱՃԹՆ-ի Խորհրդի վերահսկողությունը

- պահանջներին համապատասխանությունն ապահովելու նպատակով բազմաշահառու խմբի գործադրած բարեխիղճ ջանքերը,
- պահանջներին չհամապատասխանելու պատճառները և հիմնավորումները,
- բազմաշահառու խմբի կողմից համաձայնեցված այն բոլոր ծրագրերը, որոնք ուղղված են հետագայում պահանջների կատարման ուղղությամբ քայլեր ձեռնարկելուն:

Հավելումն պահանջների կատարումը գնահատելուն, վավերացման գործընթացը կարճանագրի.

- **ԱՃԹՆ-ի պահանջներից դուրս գործադրված ջանքեր:** Սա կներառի բազմաշահառու խմբի կողմից ԱՃԹՆ-ի ստանդարտի «խրախուսվում է» կամ «առաջարկվում է» ձևակերպմամբ կետերի իրականացման ուղղությամբ գործադրված ջանքերը: Դրանք նաև կներառեն բազմաշահառու խմբի կողմից իրականացվող նախաձեռնությունները, որոնք նպատակաուղղված են աշխատանքային ծրագրի այն բոլոր նպատակների բարեհաջող իրականացմանը, որոնք ընդգրկված չեն ԱՃԹՆ-ի ստանդարտի շրջանակներում, սակայն բազմաշահառու խմբի կողմից սահմանվել են որպես արդյունահանող ոլորտի համար ազգային առաջնահերթություններին արձագանքելու հարցում ԱՃԹՆ-ի անհրաժեշտ նպատակներ: Այդ ջանքերը կարճանագրվեն վավերացման գործընթացում, սակայն հաշվի չեն առնվի ԱՃԹՆ-ի ստանդարտին համապատասխանության ապահովման առաջընթացը գնահատելիս: Այն դեպքերում, երբ վավերացման արդյունքում կատարվում է եզրահանգում, որ բազմաշահառու խումբը համակողմանիորեն իրականացրել է ԱՃԹՆ-ի ստանդարտի «խրախուսվում է» կամ «առաջարկվում է» ձևակերպմամբ կետերը և (կամ) աշխատանքային ծրագրի նպատակները, ԱՃԹՆ-ի Խորհուրդն այդ ջանքերին կանդրադառնա գնահատման թերթիկում:
- ԱՃԹՆ-ի յուրաքանչյուր պահանջի բավարարման առաջընթացի ուղղությունը երկրի նախորդ վավերացման (վավերացումների) համեմատությամբ՝ նշելով, թե իրականացումը ժամանակի ընթացքում բարելավվո՞ւմ է, թե՛ վատթարանո՞ւմ:

Վավերացման տիպային տեխնիկական առաջադրանքի համաձայն՝ գնահատման արդյունքները կարճանագրվեն գնահատման թերթիկում և նկարագրական հաշվետվության մեջ՝ ներկայացնելով ապացույցները, շահագրգիռ կողմերի տեսակետները, հղումները և եզրակացությունները:

4. ԱՃԹՆ-Ի իրականացման նկատմամբ ԱՃԹՆ-ի հստիստի վերահսկողությունը

Հոդված 5: Երաշխիքներ

Եթե երկիրն արձանագրել է ոչ համարժեք կամ ավելի ցածր առաջընթաց շահագրգիռ կողմերի ներգրավման հետ կապված պահանջներից որևէ մեկի հարցում (պահանջներ 1.1, 1.2 և 1.3), ապա հստիստի կկատարվեն երկրի անդամակցությունը՝ համաձայն 8-րդ հոդվածի:

Եթե առաջին վավերացման արդյունքում պարզվում է, որ երկիրն արձանագրել է նշանակալի առաջընթաց քաղաքացիական հասարակությանը վերաբերող պահանջ 1.3-ի կատարման հարցում՝ քաղաքացիական հասարակության վերաբերյալ արձանագրության որևէ թերության պատճառով, ապա երկրի անդամակցությունը չի կասեցվի, և տվյալ երկրից կակնկալվի առաջընթաց ցուցադրել հստիստի կողմից սահմանված ուղղիչ գործողությունների իրականացման գործում: Հետագա վավերացումներում ուղղիչ գործողությունների իրականացման գործում առաջընթաց չարձանագրելը կհանգեցնի երկրի անդամակցության կասեցման՝ համաձայն 8-րդ հոդվածի:

Հոդված 6: Վավերացումների արդյունքները

Եթե վավերացումը հավաստում է, որ երկիրն արձանագրել է բավարար առաջընթաց բոլոր պահանջների կատարման առումով, ԱՃԹՆ-ի հստիստի տվյալ երկիրն անվանում է «ընդհանուր առմամբ բավարար առաջընթաց արձանագրած»: Այս կարգավիճակը պահպանելու համար իրականացնող երկրները պետք է շարունակեն ապահովել ԱՃԹՆ-ի սկզբունքների և պահանջների Կատարումը: Այն դեպքում, երբ մտահոգություններ են ծագել այն հարցի շուրջ, թե արդյոք ԱՃԹՆ-ի իրականացման ցուցանիշները հետագայում նվազել են՝ անկում գրանցելով պահանջվող չափորոշիչից, ԱՃԹՆ-ի հստիստի իրեն իրավունք է վերապահում պահանջել, որ երկիրն անցնի վավերացման նոր գործընթաց: Շահագրգիռ կողմերը կարող են միջնորդություն ներկայացնել ԱՃԹՆ-ի հստիստի, եթե գտնում են, որ երկրի կարգավիճակը պետք է վերանայվի: Այս հայցի ներկայացման համար որպես միջնորդ կարող է հանդես գալ ԱՃԹՆ-ի հստիստի շահագրգիռ կողմի խմբակցությունների ներկայացուցիչը (ներկայացուցիչները): ԱՃԹՆ-ի հստիստի կուսումնասիրի իրավիճակը և իր հայեցողությամբ կկայացնի որոշում, թե անհրաժեշտ է արդյոք պահանջել վավերացման ավելի վաղ իրականացում: Գնահատման արդյունքների հիման վրա ԱՃԹՆ-ի հստիստի որոշում կկայացնի երկրի կարգավիճակի վերաբերյալ:

Բավարար առաջընթաց չգրանցելու հետևանքները կախված են հստիստի ընդհանուր գնահատումից.

- i. **Առաջընթացի բացակայություն:** Երկիրը զրկվում է անդամակցությունից:
- ii. **Ոչ համարժեք առաջընթաց:** Երկրի անդամակցությունը ժամանակավորապես կասեցվում է, և նրանից պահանջվում է մինչև երկրորդ վավերացման իրականացումը ձեռնարկել ուղղիչ գործողություններ: Երկրի անդամակցության

4. ԱՃԹՆ-Ի իրականացման նկատմամբ ԱՃԹՆ-ի հստիսիդի վերահսկողությունը

կասեցման սահմանափակումը հանելու համար տվյալ երկիրը իր երկրորդ վավերացման գործընթացի ժամանակ պետք է ցուցադրի առնվազն նշանակալի առաջընթաց:

Եթե երկրորդ վավերացման արդյունքում երկիրն արձանագրում է նշանակալի առաջընթաց, ապա կիրառվում է ստորև բերված (iii)(2) դրույթում ամրագրված ընթացակարգը: Եթե երկրորդ վավերացման արդյունքում երկիրն արձանագրում է ոչ համարժեք առաջընթաց, ապա կիրառվում է (i) դրույթում ամրագրված ընթացակարգը:

- iii. **Նշանակալի առաջընթաց:** Երկիրը կհամարվի ԱՃԹՆ-ի անդամ երկիր, և նրանից կպահանջվի ձեռնարկել ուղղիչ գործողություններ մինչև Երկրորդ վավերացման իրականացումը:

(1) Եթե երկրորդ վավերացման արդյունքում երկիրն արձանագրում է ընդհանուր առմամբ նշանակալի առաջընթաց, **սակայն առանձին պահանջների կատարման առումով չի գրանցում որևէ բարելավում**, ապա երկրի անդամակցությունը ժամանակավորապես կկասեցվի, և նրանից կպահանջվի ձեռնարկել ուղղիչ գործողություններ մինչև երրորդ վավերացման իրականացումը: Եթե երրորդ վավերացման արդյունքում երկիրն արձանագրում է ընդհանուր առմամբ նշանակալի առաջընթաց, սակայն առանձին պահանջների կատարման առումով չի գրանցում որևէ բարելավում, երկիրը կգրկվի անդամակցությունից: Եթե երկիրը երրորդ վավերացման արդյունքում արձանագրում է ընդհանուր առմամբ նշանակալի առաջընթաց, սակայն գրանցում է զգալի բարելավումներ մի շարք առանձին պահանջների կատարման առումով (այսինքն, բավարարվել են նախկինում չկատարված մի քանի, բայց ոչ բոլոր պահանջները), երկրի անդամակցությունը կշարունակի մնալ կասեցված: Խորհուրդը կսահմանի նոր ուղղիչ գործողություններ: Չորրորդ վավերացման արդյունքում բոլոր պահանջները չբավարարելու (այսինքն, բոլոր չկատարված ուղղիչ գործողություններին չանդադառնալու) դեպքում երկիրը կգրկվի անդամակցությունից:

(2) Եթե երկիրը երկրորդ վավերացման արդյունքում արձանագրում է ընդհանուր առմամբ նշանակալի առաջընթաց և գրանցում է զգալի բարելավումներ մի շարք առանձին պահանջների կատարման առումով (այսինքն, բավարարվել են նախկինում չկատարված մի քանի, բայց ոչ բոլոր պահանջները), երկրի անդամակցությունը կշարունակվի, քանի դեռ ձեռնարկում են ուղղիչ գործողություններ: Եթե երրորդ վավերացման արդյունքում երկիրն արձանագրում է ընդհանուր առմամբ նշանակալի առաջընթաց, երկրի անդամակցությունը ժամանակավորապես կկասեցվի: Խորհուրդը կսահմանի նոր ուղղիչ

4. ԱՃԹՆ-Ի իրականացման նկատմամբ ԱՃԹՆ-ի հորհրդի վերահսկողությունը

գործողություններ: Չորրորդ վավերացման արդյունքում բոլոր պահանջները չբավարարելու (այսինքն, բոլոր չկատարված ուղղիչ գործողություններին չանդադառնալու) դեպքում երկիրը կգրկվի անդամակցությունից:

(3) Եթե երկրորդ կամ հաջորդ վավերացումների արդյունքում երկիրն արձանագրում է ոչ համարժեք առաջընթաց, ապա կիրառվում է (i) կետում ամրագրված ընթացակարգը:

Այն դեպքերում, երբ վավերացման արդյունքում հաստատվում է, որ երկիրը չի ապահովել բավարար առաջընթաց, ԱՃԹՆ-ի հորհուրդը սահմանում է երկրի կողմից ձեռնարկվելիք ուղղիչ գործողությունները և 3-18 ամսվա ժամկետ՝ հաջորդ վավերացման գործընթացն իրականացնելու համար, որի ընթացքում կգնահատվի ուղղիչ գործողությունների կատարման առումով գրանցված առաջընթացը: Ուղղիչ գործողությունների կատարման համար ժամկետները սահմանելիս ԱՃԹՆ-ի հորհուրդը հաշվի կառնի դրանց բնույթը և տվյալ երկրում առկա հանգամանքները: Խորհրդին վերապահված է ավելի կարճ կամ ավելի երկար ժամկետներ սահմանելու իրավունքը:

Իրականացնող երկիրը կարող է հայցել այս ժամկետի երկարաձգում՝ Հոդված 7-ի համաձայն: Երկիրը կարող է նաև հայցել վավերացման գործընթացը սկսել ԱՃԹՆ-ի հորհրդի կողմից նախատեսված ժամկետից ավելի վաղ:

Իրականացնող երկիրը կարող է պահպանել ընդհանուր առաջընթացի՝ բավարարից ցածր մակարդակ ԱՃԹՆ-ի անդամ երկրի ճանաչվելու օրվանից հետո առավելագույնը 7 տարի:

Հոդված 7: Երկարաձգումները

Իրականացնող երկիրը կարող է դիմել երկարաձգման համար, եթե չի կարողանում պահպանել վերը նշված վերջնաժամկետները: Երկարաձգման հայցերը գնահատելիս՝ ԱՃԹՆ-ի հորհուրդը կկիրառի հետևյալ ստուգումները.

1. Հայցը պետք է ներկայացվի մինչև վերջնաժամկետի լրանալը և հաստատված լինի բազմաշահառու խմբի կողմից:
2. Բազմաշահառու խումբը պետք է ապացուցի, որ երկիրը շարունակական առաջընթաց է գրանցել վերջնաժամկետի պահպանման առումով, և ուշացումը պայմանավորված է բացառիկ հանգամանքների առկայությամբ: Շարունակական առաջընթացը գնահատելիս ԱՃԹՆ-ի հորհուրդը հաշվի կառնի.
 - i. ԱՃԹՆ-ի գործընթացը, հատկապես՝ բազմաշահառու խմբի աշխատանքը և կառավարության հստակ, վճռական հանձնառությունը,

4. ԱՃԹՆ-ի իրականացման նկատմամբ ԱՃԹՆ-ի Խորհրդի վերահսկողությունը

- ii. ԱՃԹՆ-ի զեկույցի կազմման և ներկայացման կարգավիճակը և որակը, այդ թվում՝ արձանագրված նշանակալի առաջընթացը 4.8 պահանջին համապատասխան հաշվետվությունների ժամանակին ներկայացման պահանջները բավարարելու ուղղությամբ, ինչպես նաև ԱՃԹՆ-ի զեկույցի կազմման և ներկայացման գործընթացը բարելավելու նպատակով ներկայացված առաջարկներին անդրադառնալու առումով գործադրված ջանքերը:
3. Բազմաշահառու խմբի կողմից ներկայացված հայցում պետք է պարզաբանվի (պարզաբանվեն) բացառիկ հանգամանքը (հանգամանքները):
4. Երկարաձգումներ չեն տրամադրվի այն դեպքերում, երբ դրանք կարող են ավելացնել թեկնածության համար սահմանված առավելագույն ժամանակահատվածը:

Հոդված 8: Երկրի անդամակցության կասեցումը

ա) Երկրի անդամակցության կասեցում ԱՃԹՆ-ի սկզբունքները և պահանջները խախտելու պատճառով

Այն դեպքում, երբ ակնհայտ է, որ իրականացնող երկրի կողմից չեն պահպանվել ԱՃԹՆ-ի սկզբունքների և պահանջների զգալի մասը, ԱՃԹՆ-ի Խորհուրդը կկասեցնի տվյալ երկրի անդամակցությունը կամ կգրկի անդամակցությունից: Սա ներառում է երկրի կողմից այն պահանջները չբավարարելու դեպքերը, որոնք սահմանված են ԱՃԹՆ-ի զեկույցի ժամանակին կազմման և ներկայացման և (կամ) մինչև ԱՃԹՆ-ի Խորհրդի կողմից հաստատված վերջնաժամկետները ԱՃԹՆ-ի պահանջների բավարարումն ապահովելու համար: Այն դեպքում, երբ ԱՃԹՆ-ի Խորհուրդը մտահոգություն է հայտնում այն մասին, որ ԱՃԹՆ-ի սկզբունքների և պահանջների պահպանումը հարցականի տակ է, կարող է Միջազգային քարտուղարությանը հանձնարարել տեղեկություններ հավաքագրել իրավիճակի վերաբերյալ և հաշվետվություն ներկայացնել ԱՃԹՆ-ի Խորհրդին:

ԱՃԹՆ-ն իրականացնող երկրի անդամակցության կասեցումը ժամանակավոր մեխանիզմ է և գործում է թեկնածության համար սահմանված առավելագույն ժամանակահատվածի ընթացքում: ԱՃԹՆ-ի Խորհուրդն ԱՃԹՆ-ն իրականացնող երկրի համար սահմանում է ժամանակային սահմանափակում՝ ԱՃԹՆ-ի ստանդարտի դրույթների խախտումները վերացնելու համար: Երկրի անդամակցության կասեցման ժամանակահատվածի ընթացքում երկրի կարգավիճակը կլինի «կասեցված»: Այն դեպքում, երբ հարցը լուծվում է մինչև վերջնաժամկետի լրանալը՝ ԱՃԹՆ-ի Խորհրդի պահանջների բավարարմամբ, երկրի կարգավիճակը և առաջընթացի մակարդակը կվերականգնվի: Եթե հարցը չի լուծվել մինչև վերջնաժամկետի լրանալը՝ ԱՃԹՆ-ի Խորհրդի պահանջների բավարարմամբ, ԱՃԹՆ-ի Խորհուրդը տվյալ երկրին կգրկի անդամակցությունից:

4. ԱՃԹՆ-ի իրականացման նկատմամբ ԱՃԹՆ-ի հստիսրդի վերահսկողությունը

բ) Երկրի անդամակցության կասեցումը քաղաքական անկայունության կամ հակամարտության պատճառով

ԱՃԹՆ-ի հստիսրդը կարող է որոշել կասեցնել երկրների անդամակցությունն այն դեպքերում, երբ քաղաքական անկայունությունը կամ հակամարտությունն ակնհայտորեն խոչընդոտում են երկրի կողմից ԱՃԹՆ-ի սկզբունքների և պահանջների զգալի մասի պահպանմանը: Արտակարգ քաղաքական անկայունության կամ հակամարտության իրավիճակում հայտնված երկրները կարող են նաև կամավոր դիմել իրենց անդամակցությունը կասեցնելու համար: Այս իրավիճակում կառավարությունը պետք է ԱՃԹՆ-ի հստիսրդը ներկայացնի դիմում երկրի անդամակցությունը կամավոր կասեցնելու համար: Կառավարության դիմումի մեջ պետք է նշված լինեն բազմաշահառու խմբի տեսակետները:

Այն դեպքերում, երբ երկրների անդամակցությունը կասեցվում է քաղաքական անկայունության կամ հակամարտության պատճառով, երկրի՝ անդամակցության կասեցման տվյալ ժամանակահատվածը չի հաշվարկվի որպես թեկնածության համար սահմանված առավելագույն ժամանակահատվածի մաս: ԱՃԹՆ-ի հստիսրդը կանոնավոր կերպով կդիտարկի և կուսումնասիրի իրավիճակը և, իրեն վերապահված իրավունքով, կերկարաձգի երկրի անդամակցության կասեցման ժամանակահատվածը կամ երկրին կզրկի անդամակցությունից:

գ) Երկրի անդամակցության կասեցումը վերացնելը

Կառավարությունը կարող է ցանկացած ժամանակ դիմել՝ երկրի անդամակցության կասեցումը վերացնելու համար: Դիմումի մեջ պետք է արձանագրված լինեն շահագրգիռ կողմերի՝ ԱՃԹՆ-ի իրականացման և վավերացման գործընթացները վերսկսելու համար համաձայնեցված քայլերը, ինչպես նաև ԱՃԹՆ-ի ստանդարտի բավարարմանն ուղղված աշխատանքային ծրագիրը: Եթե ԱՃԹՆ-ի հստիսրդի համար երկրի անդամակցության կասեցման պատճառների վերացումը բավարար է, ապա երկրի անդամակցության կասեցումը կհանվի: Երկրի անդամակցության կասեցումը վերացնելուց հետո ԱՃԹՆ-ի հստիսրդը, ըստ անհրաժեշտության, կքննարկի հաշվետվությունների ներկայացման և վավերացման համար նոր վերջնաժամկետներ սահմանելու հարցը: Գործընթացի բոլոր փուլերում ԱՃԹՆ-ի հստիսրդն ապահովում է իր մտահոգությունների և որոշումների հստակ հաղորդումը իրականացնող երկրին:

Հոդված 9: Անդամակցությունից զրկելը

Անդամակցությունից զրկելը, այսինքն՝ երկրի կարգավիճակը որպես իրականացնող երկիր չեղարկելը, տեղի կունենա, եթե.

4. ԱՃԹՆ-ի իրականացման նկատմամբ ԱՃԹՆ-ի հոորհրդի վերահսկողությունը

- (1) իրականացնող երկրի անդամակցությունը ենթակա է եղել կասեցման, և հարցը չի լուծվել ԱՃԹՆ-ի հոորհրդի բավարարմամբ՝ մինչև համաձայնեցված վերջնաժամկետի լրանալը:
- (2) ԱՃԹՆ-ի հոորհուրդը եզրահանգել է, որ երկիրը հաստատված ժամկետներում ԱՃԹՆ-ի իրականացման գործընթացում չի արձանագրել բավարար առաջընթաց:


Այն դեպքում, երբ ակնհայտ է, որ իրականացնող երկրի կողմից չեն պահպանվել ԱՃԹՆ-ի սկզբունքների և պահանջների զգալի մասը, ԱՃԹՆ-ի հոորհուրդն իրեն իրավունք է վերապահում տվյալ երկրին զրկելու անդամակցությունից: Անդամակցությունից զրկված երկիրը կարող է ցանկացած ժամանակ կրկին հայտ ներկայացնել՝ որպես ԱՃԹՆ-ի անդամ երկիր ընդունվելու համար: ԱՃԹՆ-ի հոորհուրդը կկիրառի ԱՃԹՆ-ի անդամ երկրի հայտերի գնահատմանն առնչվող համաձայնեցված ընթացակարգերը: Խորհուրդը նաև կգնահատի ԱՃԹՆ-ի իրականացման նախորդ փորձը, ներառյալ՝ արդյունավետ իրականացման նախորդ խոչընդոտները, ինչպես նաև ուղղիչ միջոցառումների իրականացումը:

Հոդված 10: Բողոքարկումները

Խնդրո առարկա ԱՃԹՆ-ն իրականացնող երկիրը կարող է միջնորդություն ներկայացնել ԱՃԹՆ-ի հոորհուրդ՝ երկրի անդամակցության կասեցման, անդամակցությունից զրկելու կամ վավերացման գործընթացից հետո երկիրը որպես նշանակալի կամ բավարար առաջընթաց գրանցած ճանաչելու մասին հոորհրդի որոշումը վերանայելու նպատակով: Նման միջնորդություններին պատասխանելիս ԱՃԹՆ-ի հոորհուրդը կքննարկի գործի հանգամանքները, ԱՃԹՆ-ի ամբողջականությունը պահպանելու անհրաժեշտությունը և երկրներին միասնական վերաբերմունք ցուցաբերելու սկզբունքը: ԱՃԹՆ-ի հոորհրդի որոշումը վերջնական է: Համապատասխան երկիրը կարող է, նախքան Կանոնադրության 7-րդ հոդվածով ամրագրված ծանուցման ժամանակահատվածները, բողոքարկել ԱՃԹՆ-ի հոորհրդի որոշումը անդամների հաջորդ հերթական ժողովի ժամանակ:

4. ԱՃԹՆ-Ի իրականացման նկատմամբ ԱՃԹՆ-ի հտորհրդի վերահսկողությունը

Վավերացման արդյունքները և հետևանքները



5. Վավերացման գործընթացի ամփոփ նկարագիրը

5. Վավերացման գործընթացի ամփոփ նկարագիրը

Այս բաժինը վերաբերում է ԱՃԹՆ-ի վավերացմանը: Վավերացման նպատակն է՝ գնահատել 3-րդ բաժնում սահմանված ԱՃԹՆ-ի պահանջների բավարարումը:

Վավերացման նպատակները

Վավերացումը ԱՃԹՆ-ի գործընթացի էական բաղադրիչներից է: Վավերացումը կիրառվում է երկրի մակարդակում կատարողականը գնահատելու և երկխոսությունն ու իմացությունը խթանելու նպատակով: Վավերացումը նաև երաշխավորում է ԱՃԹՆ-ի միասնականությունը՝ իրականացնող երկրների կողմից նույն համաշխարհային չափորոշիչի պահպանման միջոցով: Վավերացումը նպատակ ունի բոլոր շահագրգիռ կողմերին տրամադրելու անկողմնակալ գնահատական այն մասին, թե տվյալ երկրում ԱՃԹՆ-ի իրականացումը համապատասխանո՞ւմ է արդյոք ԱՃԹՆ-ի ստանդարտի դրույթներին: Հավելումն, վավերացման հաշվետվությունը կանդադառնա վավերացման գործընթաց անցնող երկրում ԱՃԹՆ-ի ազդեցությանը, ԱՃԹՆ-ի ստանդարտով խրախուսվող գործողությունների իրականացմանը, ԱՃԹՆ-ի իրականացման ընթացքում քաղված դասերին, ինչպես նաև շահագրգիռ կողմերի արտահայտած բոլոր մտահոգություններին և ԱՃԹՆ-ի հետագա իրականացման վերաբերյալ առաջարկներին:

Վավերացման մեթոդաբանությունը

Վավերացման գործընթացի միջոցով գնահատվում է 3-րդ բաժնում սահմանված ԱՃԹՆ-ի պահանջների բավարարումը: Մեթոդաբանությունը սահմանված է «Վավերացման ուղեցույց»-ում, որը բովանդակում է ԱՃԹՆ-ի ստանդարտի յուրաքանչյուր դրույթի կատարումը գնահատելու ցուցումներ: Որոշ դեպքերում «Վավերացման ուղեցույց»-ում նշվում են այն ապացույցները, որոնք պետք է օգտագործվեն վավերացնողի կողմից՝ որևէ դրույթի պահանջը բավարարված լինելու մեջ հավաստիանալու համար: Մյուս դեպքերում գոյություն ունեն տարբեր մոտեցումներ, որոնք կարող են կիրառվել երկրի կողմից՝ ԱՃԹՆ-ի դրույթի կատարումը գնահատելու համար, և «Վավերացման ուղեցույց»-ում ներկայացված են ապացույցների այն տեսակների օրինակները, որոնք կարող են քննության առնվել վավերացնողի կողմից:

Վավերացման ընթացակարգը

Հաշվի առնելով ԱՃԹՆ-ի բազմաշահառու բնույթը և երկխոսության կարևորությունը, վավերացման ընթացակարգում շեշտադրում է կատարվում շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցության վրա: Վավերացումն իրականացվում է չորս փուլով:

1. **Վավերացման նախապատրաստումը:** Խրախուսվում է, որ վավերացման մեկնարկից առաջ բազմաշահառու խումբն իրականացնի ԱՃԹՆ-ի ստանդարտին

5. Վավերացման գործընթացի ամփոփ նկարագիրը

համապատասխանության ինքնագնահատում: Վավերացման ուղեցույցը ներառում է մի դրույթ, համաձայն որի՝ «եթե բազմաշահառու խումբը ցանկանում է, որ վավերացումը հատուկ ուշադրություն դարձնի որոշակի նպատակների կամ գործողությունների գնահատմանը՝ բազմաշահառու խմբի աշխատանքային ծրագրի համաձայն, ապա այդ նպատակները կամ գործողությունները պետք է համառոտ նկարագրվեն՝ բազմաշահառու խմբի խնդրանքով»: Ազգային քարտուղարությանը խնդրվում է համադրել փաստաթղթերը և այլ աղբյուրներ, որոնք ցուցադրում են ԱՃԹՆ-ի պահանջները բավարարելու գործում արձանագրած առաջընթացը, այդ թվում՝ բազմաշահառու խմբի նիստերի արձանագրությունները: Շահագրգիռ կողմերին նաև առաջարկվում է պատրաստել ցանկացած այլ փաստաթուղթ, որ նրանք կհամարեն վերաբերելի: Առկա է վավերացմանը նախապատրաստվելու վերաբերյալ ուղղորդիչ փաստաթուղթ⁵:

2. **Նախնական տվյալների հավաքումը և շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունն իրականացվում են ԱՃԹՆ-ի Միջազգային քարտուղարության կողմից:** Միջազգային քարտուղարությունն ուսումնասիրում է համապատասխան փաստաթղթերը, այցելում է տվյալ երկիր և խորհրդակցում է շահագրգիռ կողմերի հետ: Սա ներառում է բազմաշահառու խմբի, Անկախ Ադմինիստրատորի և այլ հիմնական շահագրգիռ կողմերի հետ հանդիպումները, այդ թվում՝ այն շահագրգիռ կողմերի հետ, որոնք ներկայացված են բազմաշահառու խմբում, սակայն անմիջականորեն չեն մասնակցում խմբի քննարկումներին: Խորհուրդը պահպանում է տվյալների հավաքագրման ստանդարտացված ընթացակարգ՝ անդրադառնալով շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցություններին և նախնական գնահատումն ավարտելու վերջնաժամկետներին:

Այս խորհրդակցությունների հիման վրա Միջազգային քարտուղարությունը կկազմի հաշվետվություն՝ «Վավերացման ուղեցույց»-ի համաձայն իրականացնելով պահանջների կատարման ուղղությամբ գրանցված առաջընթացի նախնական գնահատում: Նախնական գնահատման մեջ չի ներառվի առաջընթացի ընդհանուր գնահատումը:

Հաշվետվությունը ներկայացվում է վավերացնողին: Ազգային համակարգողը կստանա մեկ օրինակ: Փաստերի վերաբերյալ դիտարկումները ողջունելի են, սակայն խրախուսվում է, որ Ազգային համակարգողները և բազմաշահառու խումբը հետաձգեն ցանկացած կարևոր դիտարկում՝ մինչև վավերացնողի հաշվետվության նախագիծն ստանալը:

3. **Անկախ վավերացում:** ԱՃԹՆ-ի Խորհուրդը կնշանակի Անկախ վավերացնողներին՝ բաց, մրցակցային մրցութային գործընթացի միջոցով: Վավերացնողը հաշվետու կլինի

⁵ Հասանելի է Միջազգային քարտուղարությունից և citi.org/guide կայքից (ուղղորդիչ փաստաթուղթ թիվ 23):

5. Վավերացման գործընթացի ամփոփ նկարագիրը

Խորհրդին՝ Վավերացման հանձնաժողովի միջոցով:

Վավերացնողը գնահատում է, թե Քարտուղարության կողմից կատարված նախնական գնահատումն իրականացվել է արդյոք «Վավերացման ուղեցույց»-ի համաձայն: Դա կներառի յուրաքանչյուր պահանջի համար համապատասխան փաստաթղթերի մանրամասն ուսումնասիրությունը և յուրաքանչյուր պահանջի առումով Քարտուղարության նախնական գնահատումը, ինչպես նաև ընտրանքային ստուգումների ժամանակ ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառումը և շահագրգիռ կողմերի հետ անցկացվող լրացուցիչ խորհրդակցությունները: Խորհուրդը կարող է պահանջել, որ վավերացնողն առանձին պահանջների վերաբերյալ կատարի տեղում իրականացվող ստուգումներ:

Վավերացնողը ներկայացնում է Քարտուղարության նախնական գնահատման վերաբերյալ իր դիտարկումները և կազմում է վավերացման հաշվետվության նախագիծը: Բազմաշահառու խմբին առաջարկվում է ներկայացնել դիտարկումներ վավերացման զեկույցի նախագծի վերաբերյալ: Հաշվի առնելով բազմաշահառու խմբի դիտարկումները, Վավերացնողը կազմում է վավերացման վերջնական զեկույց: Վավերացնողը գրում է բազմաշահառու խմբին՝ բացատրելու, թե ինչպես է հաշվի առել վերջինիս դիտարկումները: Բազմաշահառու խումբը ստանում է վավերացման վերջնական զեկույցի մեկ օրինակ:

Վավերացման վերջնական զեկույցը կներառի վավերացնողի գնահատականը յուրաքանչյուր դրույթի բավարարման հարցում առաջընթացի վերաբերյալ, բայց չի ներառի առաջընթացի ընդհանուր գնահատականը: Վավերացնողին կառաջարկվի վավերացումից պարզված արդյունքները ներկայացնել Վավերացման հանձնաժողովին:

4. **Խորհրդի կողմից վերանայում:** Վավերացման հանձնաժողովը կուսումնասիրի վավերացման վերջնական հաշվետվությունը և հիմնավորող փաստաթղթերը (ներառյալ բազմաշահառու խմբի դիտարկումները): Այնուհետև Վավերացման հանձնաժողովը առաջարկ կներկայացնի ԱՃԹՆ-ի Խորհրդին՝ ԱՃԹՆ-ի ստանդարտի բավարարման ուղղությամբ երկրի գրանցած առաջընթացի և, կիրառելիության դեպքում, պահանջվող ուղղիչ գործողությունների վերաբերյալ:

ԱՃԹՆ-ի Խորհուրդը վերջնական որոշում կկայացնի այն մասին, թե պահանջները բավարարված են, թե՝ բավարարված չեն, ինչպես նաև երկրի առաջընթացի ընդհանուր մակարդակի վերաբերյալ՝ ԱՃԹՆ-ի իրականացման նկատմամբ ԱՃԹՆ-ի Խորհրդի վերահսկողության ընթացակարգերի 6-րդ հոդվածի համաձայն:

Նախնական գնահատումը, վավերացման հաշվետվությունը և բազմաշահառու խմբի առնչվող դիտարկումները համարվում են խորհրդապահ, քանի դեռ Խորհուրդը որոշում չի կայացրել:

6. Արձանագրություն. Քաղաքացիական հասարակության մասնակցությունը

6. Արձանագրություն. Քաղաքացիական հասարակության մասնակցությունը

1. Ներածություն

Քաղաքացիական հասարակության մասնակցությունը էական նշանակություն ունի ԱՃԹՆ-ի նպատակների, այդ թվում՝ 4-րդ սկզբունքի իրականացման հարցում, որի համաձայն՝ «կառավարության եկամուտների և ծախսերի հանրային ընկալումը ժամանակի ընթացքում կարող է նպաստել հանրային երկխոսությանը և կայուն զարգացմանն ուղղված նպատակահարմար և իրատեսական տարբերակների իրազեկ ընտրությանը»: ԱՃԹՆ-ի գործընթացում քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունն առանցքային դերակատարում ունի, ինչի շնորհիվ ապահովվում է, որ ԱՃԹՆ-ի ստեղծած թափանցիկությունը հանգեցնի առավել բարձր հաշվետվողականության: ԱՃԹՆ-ի ստանդարտն ընդունելու հիմնական շարժիչ ուժն ավելի էական, ավելի հուսալի և ավելի գործածելի տեղեկություններ ստանալու, ինչպես նաև այդ տեղեկություններն ավելի արդյունավետ կերպով արդյունահանող ոլորտի կառավարման կամ հանրային հաշվետվողականության և եկամուտների կառավարման բնագավառներում իրականացվող ավելի լայնածավալ բարեփոխումների հետ կապելու ցանկությունն է: Հետևաբար, ԱՃԹՆ-ի իրականացման արդյունքում գոյացած տեղեկություններն օգտագործելու համար քաղաքացիների ավելի ակտիվորեն գործելու կարողությունը ԱՃԹՆ-ի իրականացման և ԱՃԹՆ-ի գործընթացում քաղաքացիական հասարակության մասնակցության վճռորոշ բաղադրիչներից է:

ԱՃԹՆ-ի գործընթացում քաղաքացիական հասարակության մասնակցությունը պաշտոնապես գնահատվում է ԱՃԹՆ-ի իրականացման երկու փուլերում՝ թեկնածության գնահատման ընթացքում և վավերացման գործընթացի ընթացքում: Քաղաքացիական հասարակության մասնակցության գնահատումը կարող է նաև կատարվել յուրաքանչյուր առանձին դեպքի համար՝ ի պատասխան կոնկրետ իրականացնող երկրներում առկա իրավիճակի վերաբերյալ Խորհրդի կողմից արտահայտված առանձին մտահոգություններին: Սույն արձանագրությունում ներկայացված են այն հարցերը, որոնք պետք է քննարկվեն ԱՃԹՆ-ի Խորհրդի (ներառյալ՝ հանձնաժողովների) և վավերացնողների կողմից՝ քաղաքացիական հասարակության մասնակցությանն առնչվող դրույթների (պահանջ 1.3) կատարումը գնահատելիս, ինչպես նաև ապացույցների այն տեսակները, որոնք պետք է օգտագործվեն՝ այդ հարցերին պատասխանելիս: Թեև ԱՃԹՆ-ի գործընթացում քաղաքացիական հասարակության մասնակցությանն առնչվող դրույթներն ԱՃԹՆ-ի իրականացման բոլոր փուլերում կայուն են, դրույթների կատարումը գնահատելու համար ԱՃԹՆ-ի Խորհրդի կողմից օգտագործվող ապացույցները, անհրաժեշտությունից ելնելով, կարող են տարբեր լինել՝ կախված տվյալ երկրի հանգամանքներից, իրականացման փուլից և տեղեկությունների առկայությունից: Հարկ է նշել, որ ստորև՝ 2.1-2.5 կետերում ներկայացված

6. Արձանագրություն. Քաղաքացիական հասարակության մասնակցությունը

հարցերը և ապացույցների առաջարկված տեսակները դրույթները չեն հանդիսանում, և ներկայացված ցանկը սպառիչ չէ: Այդուհանդերձ, դա գնահատման շրջանակ է ապահովում քաղաքացիական հասարակությանն առնչվող դրույթների կատարման համար:

2. ԱՃԹՆ-ի՝ քաղաքացիական հասարակության վերաբերյալ դրույթների մեկնաբանությունը

Սույն արձանագրության իմաստով՝ «քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ» հասկացությունը կներառի քաղաքացիական հասարակության այն ներկայացուցիչներին, ովքեր էապես ներգրավված են ԱՃԹՆ-ի գործընթացում, ընդգրկելով բազմաշահառու խմբի անդամներին, սակայն չսահմանափակվելով նրանցով: «ԱՃԹՆ-ի գործընթաց» հասկացությունը կներառի այն գործողությունները, որոնք առնչվում են ԱՃԹՆ-ին միանալու նախապատրաստման, բազմաշահառու խմբի նիստերի, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) խմբակցությունների՝ ԱՃԹՆ-ի վերաբերյալ լրացուցիչ հանդիպումների, այդ թվում՝ բազմաշահառու խմբի ներկայացուցիչների հետ փոխգործակցության, ԱՃԹՆ-ի զեկույցների կազմման, ԱՃԹՆ-ի զեկույցների վերաբերյալ նյութերի նախապատրաստման կամ վերլուծության իրականացման, ԱՃԹՆ-ի գործունեության մասին տեսակետների արտահայտման, ինչպես նաև բնական ռեսուրսների կառավարման վերաբերյալ տեսակետների արտահայտման հետ:

Քաղաքացիական հասարակությանն առնչվող դրույթների կատարումը գնահատելիս հորիզոնորդ և վավերացնողները կկիրառեն հետևյալ ստուգումները.

2.1 Արտահայտվել. քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կարող են մասնակցել ԱՃԹՆ-ի գործընթացի վերաբերյալ հանրային բանավեճին և ԱՃԹՆ-ի գործընթացի վերաբերյալ արտահայտել կարծիքներ՝ առանց սահմանափակման, հարկադրանքի կամ ճնշման:

ԱՃԹՆ-ի հորիզոնորդ և վավերացնողները քննության կառնեն հետևյալ դրույթները.

- քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կարողանում են ազատորեն և հրապարակայնորեն խոսել ԱՃԹՆ-ի գործընթացի մասին, այդ թվում, օրինակ՝ բազմաշահառու խմբի նիստերի և ԱՃԹՆ-ի միջոցառումների, ներառյալ՝ ԱՃԹՆ-ի Ջեկույցների տարածման նպատակով իրականացվող միջոցառումների, հանրային միջոցառումների ժամանակ, լրատվամիջոցներով և այլն,
- փաստացի գործելակերպերը, այդ թվում՝ շահագրգիռ կողմերի բազմազան տեսակետները կամ անկախ երրորդ կողմերի տրամադրած էական ապացույցները վկայում են այն մասին, որ ԱՃԹՆ-ի գործընթացի առնչությամբ՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մոտ դիտարկվել է ինքնագրաքննություն կամ ինքնահարկադրված սահմանափակումներ՝ ճնշման ենթարկվելու վախի

6. Արձանագրություն. Քաղաքացիական հասարակության մասնակցությունը

պատճառով, և թե արդյոք նման խոչընդոտներն ազդել են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից ԱՃԹՆ-ի գործընթացի վերաբերյալ տեղեկությունների տարածման և հանրային դիտարկումների վրա:

2.2 Գործելը. քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կարող են ազատորեն գործել ԱՃԹՆ-ի գործընթացի առնչությամբ:

ԱՃԹՆ-ի Խորհուրդը և վավերացնողները կքննարկեն, թե որքանով է իրավական, կարգավորիչ, վարչական և փաստացի միջավայրն ազդել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ՝ ԱՃԹՆ-ի գործընթացին մասնակցելու կարողության վրա: Սա, օրինակ, կարող է ներառել հետևյալ դրույթները.

- Իրավական, կանոնակարգման կամ վարչական խոչընդոտներն ազդում են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ՝ ԱՃԹՆ-ի գործընթացին մասնակցելու կարողության վրա: Սա կարող է ներառել ՔՀԿ-ների գրանցման հետ կապված այն իրավական կամ վարչական ընթացակարգերը, որոնք բացասաբար են ազդել ԱՃԹՆ-ի գործընթացին մասնակցելու նրանց կարողության վրա, ֆինանսավորման հասանելիության հետ կապված այն իրավական կամ վարչական սահմանափակումները, որոնք խոչընդոտել են ՔՀԿ-ների կողմից ԱՃԹՆ-ի գործընթացի հետ կապված աշխատանքների իրականացմանը, այն իրավական կամ վարչական հարցերը, որոնք խոչընդոտել են ՔՀԿ-ների կողմից ԱՃԹՆ-ի գործընթացի հետ կապված հանդիպումների անցկացմանը, ինչպես նաև ԱՃԹՆ-ի գործընթացի վերաբերյալ տեղեկությունների տարածման և հանրային դիտարկումների կատարման խոչընդոտները և այլ հարցեր:
- Որևէ ապացույցի առկայությունը, որը վկայում է այն մասին, որ սահմանափակվել են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների՝ ԱՃԹՆ-ի գործընթացի իրականացման հետ կապված այնպիսի հիմնարար իրավունքներ, ինչպիսիք են արտահայտվելու կամ տեղաշարժի ազատությունը:

2.3 Միավորումներ կազմելը. քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կարող են ԱՃԹՆ-ի գործընթացի առնչությամբ հաղորդակցվել և գործակցել միմյանց հետ:

ԱՃԹՆ-ի Խորհուրդը և վավերացնողները քննության կառնեն հետևյալ դրույթները.

- բազմաշահառու խմբի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կարող են ներգրավել բազմաշահառու խմբի մաս չկազմող այլ ՔՀԿ-ներին և որևէ կերպ սահմանափակված չեն դրանում, այդ թվում՝ նրանցից ստացված տեղեկությունները բազմաշահառու խմբի քննարկումներին արձանագրելու և

6. Արձանագրություն. Քաղաքացիական հասարակության մասնակցությունը

բազմաշահառու խմբի խորհրդակցությունների արդյունքները նրանց հաղորդելու հարցում:

- Քաղաքացիական հասարակության բազմաշահառու խմբի անդամների և քաղաքացիական հասարակության ավելի լայն խմբակցությունների միջև պաշտոնական կամ ոչ պաշտոնական հաղորդակցության ուղիները չեն սահմանափակվել:
- բազմաշահառու խմբի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար չի սահմանափակվել քաղաքացիական հասարակության ավելի լայն շերտերի իրազեկման միջոցառումներում, այդ թվում՝ բազմաշահառու խմբում ներկայացվածության և ԱՃԹՆ-ի գործընթացի մասին քննարկումներում ներգրավվելը:

2.4 Ներգրավվածությունը. քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կարող են լիարժեք կերպով, ակտիվորեն և արդյունավետորեն ներգրավվել ԱՃԹՆ-ի գործընթացի մշակման, իրականացման, մոնիթորինգի և գնահատման փուլերում:

ԱՃԹՆ-ի խորհուրդը և վավերացնողները քննության կառնեն հետևյալ դրույթները.

- Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կարող են լիարժեք կերպով աջակցություն և ներդրում ունենալ ԱՃԹՆ-ի գործընթացում: Սա կարող է ներառել, օրինակ՝ կատարված ներդրումների և իրականացված քարոզչություն մասին վկայող ապացույցները՝ կապված բազմաշահառու խմբի հիմնական քննարկումների հետ այնպիսի խնդիրների շուրջ, ինչպիսիք են աշխատանքային ծրագրի նպատակները և գործողությունները, ԱՃԹՆ-ի զեկույցի շրջանակը, ԱՃԹՆ-ի զեկույցների հաստատումը, տարեկան հաշվետվությունների միջոցով ԱՃԹՆ-ի գործընթացի տարեկան ինքնագնահատումը, վավերացումը և այլն: Այն կարող է նաև ներառել ապացույցներ այն մասին, որ քաղաքացիական հասարակությունը կանոնավոր կերպով մասնակցում է բազմաշահառու խմբի նիստերին, ներգրավված է բազմաշահառու խմբի աշխատանքային խմբերում ու ԱՃԹՆ-ի այլ միջոցառումներում, և որ ՔՀԿ-ների տեսակետները հաշվի են առնվում ու գրանցվում բազմաշահառու խմբի նիստերի արձանագրություններում:
- Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները գտնում են, որ իրենք ունեն ԱՃԹՆ-ի գործընթացին մասնակցելու բավարար կարողություն: Սա կարող է ներառել ապացույցներ այն մասին, որ քաղաքացիական հասարակության վրա ազդող տեխնիկական, ֆինանսական կամ կարողությունների այլ սահմանափակումները քննարկվել են, և որ համաձայնեցվել ու (կամ) իրականացվել են այդպիսի սահմանափակումները վերացնելու ուղղությամբ

6. Արձանագրություն. Քաղաքացիական հասարակության մասնակցությունը

մշակված ծրագրերը, այդ թվում՝ կարողությունների զարգացման կամ ռեսուրսների հասանելիություն ապահովելու միջոցով:

2.5 Հասանելիությունը հանրային որոշումների կայացմանը. քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կարող են ազատորեն խոսել թափանցիկությանը և բնական ռեսուրսների կառավարմանն առնչվող հարցերի մասին և ապահովել, որ ԱՃԹՆ-ն նպաստում է հանրային երկխոսությանը:

ԱՃԹՆ-ի Խորհուրդը և վավերացնողները քննության կառնեն հետևյալ դրույթները.

- Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կարող են ԱՃԹՆ-ի գործընթացի միջոցով խթանել հանրային երկխոսությունը, օրինակ՝ ԱՃԹՆ-ի գործընթացի և արդյունքների մասին իրազեկման նպատակով քաղաքացիական հասարակության կողմից կամ նրանց մասնակցությամբ կազմակերպված հանրային միջոցառումների, աշխատաժողովների և խորհրդաժողովների միջոցով:
- Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կարող են ներգրավվել բնական ռեսուրսների կառավարմանն առնչվող գործողություններում և բանավեճերին, այդ թվում, օրինակ՝ իրականացնելով վերլուծություն և քարոզչություն բնական ռեսուրսներին առնչվող հարցերի, ԱՃԹՆ-ի տվյալների օգտագործման, զանգվածային լրատվամիջոցների հետ փոխգործակցության, ԱՃԹՆ-ի Ձեկույցներից ստացված տվյալների հաղորդման գործիքների մշակման վերաբերյալ և այլ թեմաներով:

2.6 Վերոնշյալ ապացույցները հավաքագրելիս պետք է հաշվի առնվեն ԱՃԹՆ-ի գործընթացում ներգրավված ՔՀԿ-ների և բազմաշահառու խմբի կողմից տրամադրված փաստաթղթերը, ինչպես նաև համապատասխան շահագրգիռ կողմերի հետ անցկացված անմիջական խորհրդակցությունների արդյունքները՝ ներառելով, սակայն չսահմանափակվելով բազմաշահառու խմբի անդամներով: Համատեքստից ելնելով՝ ԱՃԹՆ-ի Խորհուրդը կուսումնասիրի ԱՃԹՆ-ի իրականացման առավել լայն միջավայրը, օրինակ՝ հղում կատարելով վերոնշյալ 2.1-2.5 կետերում քննարկված հարցերի համապատասխան ցուցանիշներին կամ այլ տիպի գնահատականներին:

3. Հատուկ (ad hoc) սահմանափակումները քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների նկատմամբ

3.1 ԱՃԹՆ-ն իրականացնող պետություններում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների նկատմամբ հավանական կամ փաստացի սահմանափակումների մասին հատուկ (ad hoc) հայտարարությունները կամ հաղորդումները, նախևառաջ, պետք է քննարկվեն և պետք է դրանց հետ կապված քայլեր ձեռնարկվեն բազմաշահառու խմբի կողմից՝ հաշվի առնելով անվտանգությանն առնչվող որևէ

6. Արձանագրություն. Քաղաքացիական հասարակության մասնակցությունը

մտահոգություն, որը տվյալ երկրի ներսում այդպիսի հարցերն ուղղակիորեն բարձրաձայնելու արդյունքում կարող է ունենալ ազդեցության ենթարկված կողմը:

- 3.2** ԱՃԹՆ-ի Խորհրդի Արագ արձագանքման կոմիտեի միջոցով կարելի է դիմել ԱՃԹՆ-ի Խորհուրդ՝ առանձին դեպքերը քննելու և, անհրաժեշտության դեպքում, ԱՃԹՆ-ի սկզբունքների և դրույթների հայտարարված խախտումների առնչությամբ քայլեր ձեռնարկելու նպատակով: ԱՃԹՆ-ի Խորհուրդը կքննարկի նման հայցերը՝ հաշվի առնելով դեպքի առնչությամբ առկա փաստերը, ԱՃԹՆ-ի սկզբունքները, ինչպես նաև երկրներին միասնական վերաբերմունք ցուցաբերելու սկզբունքը պահպանելու անհրաժեշտությունը: Համաձայն 4-րդ բաժնի 8-րդ հոդվածի ա) կետի, «այն դեպքում, երբ ԱՃԹՆ-ի Խորհուրդը մտահոգություն է հայտնում այն մասին, որ ԱՃԹՆ-ի սկզբունքների և Դրույթների պահպանումը հարցականի տակ է, այն կարող է Միջազգային քարտուղարությանը հանձնարարել տեղեկություններ հավաքագրել իրավիճակի վերաբերյալ և հաշվետվություն ներկայացնել ԱՃԹՆ-ի Խորհուրդ»:
- Այն դեպքում, երբ մտահոգություններ են արտահայտվում քաղաքացիական հասարակության մասնակցության առնչությամբ, անհրաժեշտության դեպքում ԱՃԹՆ-ի Խորհուրդը կձգտի պարզել, թե կա՞րողք անմիջական կապ դրանց և ԱՃԹՆ-ի գործընթացի միջև, այդ թվում՝ (i) արձանագրելով դեպքի առնչությամբ առկա փաստերը, (ii) հավաքելով շահագրգիռ կողմերի տեսակետները և (iii) իրականացնելով վերոբերյալ 2-րդ բաժնում սահմանված ստուգումը:

- 3.3** Կախված դեպքի հանգամանքներից, այդ թվում՝ այն փաստից, թե որքանով է հնարավոր պարզել արտահայտված մտահոգությունների և ԱՃԹՆ-ի գործընթացի միջև անմիջական կապի առկայությունը, Խորհուրդը քննության կառնի համապատասխան արձագանքը: Սա կարող է ներառել, օրինակ՝ Նախագահի կամ ԱՃԹՆ-ի Խորհրդի՝ շահագրգիռ կառավարությանը հասցեագրված նամակը, ԱՃԹՆ-ի Խորհրդի կամ Միջազգային քարտուղարության առաքելությունները տվյալ երկիր, անկախ գնահատումներ իրականացնելու հանձնարարությունը, Խորհրդի հայտարարությունների հրապարակումը, թերությունների վերացման ուղղությամբ գործողությունների, այդ թվում՝ դրանց իրականացման մոնիտորինգ անցկացնելու համաձայնեցումը կամ երկրի կողմից տվյալ դրույթները պահպանելու վերաբերյալ վավերացում իրականացնելու կոչը: Համաձայն 4-րդ բաժնի 8-րդ հոդվածի ա) կետի, «այն դեպքում, երբ ակնհայտ է, որ իրականացնող երկրի կողմից չի պահպանվել ԱՃԹՆ-ի սկզբունքների և դրույթների զգալի մասը, ԱՃԹՆ-ի Խորհուրդը կկասեցնի տվյալ երկրի անդամակցությունը կամ կզրկի անդամակցությունից»:
- Այն դեպքերում, երբ Խորհուրդը եզրակացնում է, որ դիտարկված մտահոգություններով որևէ դրույթ չի խախտվում, կամ դրանք էապես կապված չեն ԱՃԹՆ-ի գործընթացի հետ, իր հայեցողությամբ որոշում կկայացնի որևէ գործողություն իրականացնելու վերաբերյալ՝ առաջնահերթությունը տալով ԱՃԹՆ-ի սկզբունքների պահպանման և երկրների նկատմամբ միասնական վերաբերմունք ապահովելու անհրաժեշտությանը:

7. Ակնկալիքները ԱՃԹՆ-ին աջակցող ընկերություններից

7. Ակնկալիքները ԱՃԹՆ-ին աջակցող ընկերություններից

ԱՃԹՆ-ին աջակցող բոլոր ընկերություններից ակնկալվում է.

- Հրապարակայնորեն հայտարարել աջակցություն ԱՃԹՆ-ի սկզբունքներին և, խթանելով թափանցիկությունը բոլոր արդյունահանող ճյուղերում, օգնել հանրային բանավեճին և հնարավորություններ տրամադրել կայուն զարգացման համար:
- Որպես առաջնորդող սկզբունք, աջակցող ընկերություններից ակնկալվում է հրապարակայնորեն բացահայտել հարկերը և վճարումները: Եթե ընկերությունները նախընտրում են այդպես չվարվել, պետք է նշեն, թե ինչու:
- Ապահովել ԱՃԹՆ-ի իրականացնող բոլոր երկրներին վճարված հարկերի և կատարված վճարումների համակողմանի բացահայտումը:
- ԱՃԹՆ-ի՝ իրական սեփականատերերի վերաբերյալ պահանջների համաձայն, հրապարակայնորեն բացահայտել իրական սեփականատերերին և քայլեր ձեռնարկել անմիջիական բիզնես գործընկերների, այդ թվում՝ համատեղ ձեռնարկությունների և կապալառուների իրական սեփականատերերին պարզելու ուղղությամբ: Ցուցակված ընկերությունները կկատարեն այն, ինչ պահանջվում է կիրառելի կանոնակարգերով և ցուցակման պահանջներով:
- Ներգրավվել գնումների մանրակրկիտ գործընթացներում, այդ թվում՝ դրսևորել պատշաճ ջանադրություն՝ գործընկերների և վաճառորդների (առևտրականների) նկատմամբ:
- Աջակցել երկրների՝ նավթի, գազի և պինդ օգտակար հանածոների հետախուզումն ու շահագործումը կառավարող ապագա լիցենզիաները և կնքված պայմանագրերը բացահայտելու որոշումների օպերացիոնալացմանը՝ ԱՃԹՆ-ի ստանդարտում տրամադրված առաջարկների համաձայն: Ընկերություններն ընդունում են, որ ավելի մեծ թափանցիկության ապահովումը պետք է իրականացվի պայմանագրային իրավունքի և օրենքների պահպանման համատեքստում՝ ԱՃԹՆ-ի սկզբունքների համաձայն:
- Ընկերությունները, որոնք գործակցում են կառավարությունների հետ, պետք է մատակարարեն բնական պաշարներն այնպես, որ դա օգուտ բերի հասարակություններին և համայնքներին:
- Ապահովել, որ ընկերությունների՝ հաշվետվողականության բարձր չափորոշիչների պահպանման համար պահանջվող տվյալների ներկայացման գործընթացները լինեն պատշաճ:

8. Բաց տվյալների քաղաքականությունը

Նախաբան

1. Այս քաղաքականությունը բովանդակում է առաջարկներ ազգային մակարդակում ԱՃԹՆ-ի իրականացման համաձայնեցված շրջանակում ԱՃԹՆ-ի իրականացման գործընթացում բաց տվյալների վերաբերյալ: Քաղաքականությունը լրացնում է բաց տվյալներին վերաբերող պահանջները համաձայն պահանջ 7-ի: Քաղաքականությունը մշակվել է ազգային մակարդակում իրականացման արդյունքում քաղված դասերի, միջազգային նորահայտ լավագույն փորձի⁶ հիման վրա և խրախուսում է համակարգային բացահայտումը⁷:
2. ԱՃԹՆ-ի սկզբունքներով հայտարարվում է, որ «կառավարության եկամուտների և ծախսերի մասին հանրային ընկալումը ժամանակի ընթացքում կարող է նպաստել կամ նպաստում է հանրային երկխոսությանը և կայուն զարգացմանն ուղղված՝ առավել նպատակահարմար և իրատեսական տարբերակների իրազեկ ընտրությանը» (ԱՃԹՆ-ի 4-րդ սկզբունք): Հետևաբար, ԱՃԹՆ-ի ստանդարտը պահանջում է, որ ԱՃԹՆ-ի բացահայտումները լինեն «համակողմանի, ակտիվորեն խթանվի դրանց հրապարակայնությունը, հանրության համար հասանելի և նպաստեն հանրային բանավեճին» (ԱՃԹՆ-ի պահանջ 7.1): Այս նպատակներն իրականացնելու հարցում էական նշանակություն ունի ԱՃԹՆ-ի տվյալների հասանելիության, հուսալիության, պատեհության, արդիականության և համեմատելիության բարելավումը:
3. ԱՃԹՆ-ի սկզբունքների իրագործմանն օժանդակելու նպատակով ԱՃԹՆ-ի Խորհուրդը համաձայնել է, որ ԱՃԹՆ-ի տվյալների համակարգային բացահայտումը պետական և ընկերությունների համակարգերի միջոցով ներկայումս նախադրված ակնկալիքն է⁸: ԱՃԹՆ-ը խրախուսում է պլանային բացահայտում հաշվետու ընկերությունների կողմից ազգային մակարդակում բաց ձևաչափերով՝ ԱՃԹՆ-ի իրականացման համաձայնեցված շրջանակում⁹:
4. ԱՃԹՆ-ն ընդունում է, որ յուրաքանչյուր իրականացնող երկրում հանգամանքները տարբեր են, որ ոչ բոլոր երկրները կկարողանան նույն արագությամբ անցնել բաց

⁶ Այդ թվում՝ «Բաց կառավարման գործընկերությունը», «Մեծ ութնյակի Բաց տվյալների կանոնադրությունը և տեխնիկական հավելվածը», «Բաց տվյալների կանոնադրությունը» (<http://opendatacharter.net/>), «Բաց» եզրի սահմանումը (<http://opendefinition.org/>) և Տվյալների մշակման Համաշխարհային ցանցի կոնսորցիումը (W3C) (<https://www.w3.org/Consortium/>):

⁷ Տես <https://eiti.org/BD/2018-8>

⁸ Նույն տեղում:

⁹ Տես պահանջ 4:

8. Բաց տվյալների քաղաքականությունը

տվյալների, և ֆինանսական հետևանքները պետք է հաշվի առնվեն ինչպես մոտակա, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարում: Հարկավոր է հաշվի առնել հանրային պահանջը և տվյալների օգտագործումը հանրային քաղաքականության հիմնահարցերին անդրադառնալու նպատակով¹⁰: Պետք է հաշվի առնվեն նաև հասանելիության մարտահրավերները տարբեր գեներների ու ենթախմբերի քաղաքացիների համար և նրանց տեղեկատվական կարիքները:

Բաց տվյալների նպատակները

5. ԱՃԹՆ-ի իրականացման ընթացքում հրապարակված բաց տվյալները կարող են բարձրացնել կառավարության ու բիզնես գործունեության թափանցիկությունը, ինչպես նաև իրազեկվածությունն այն մասին, թե ինչպես են կառավարվում երկրների բնական ռեսուրսները: Դրանք կարող են լույս սփռել այն բանի վրա, թե ում են պատկանում արդյունահանող ընկերությունները, ովքեր ունեն լիցենզիաներ և թույլտվություններ, ինչպիսին են համապատասխան ֆիսկալ պայմանները, և արդյունահանող ոլորտից ստացվող ինչպիսի եկամուտները են գանձվում ու ծախսվում: Նման բացահայտումներն ապահովում են լուրջ խթաններ՝ այդ գումարը առավելագույնս արդյունավետ օգտագործելու համար:
6. Բաց տվյալներն արդյունավետ են և օգտակար, երբ պատեհաժամ են, որակյալ և անդրադառնում են շահագրգիռ կողմերի կարիքներին ու ակնկալիքներին: ԱՃԹՆ-ի իրականացումը պետք է խթանի հաշվետվողականությունը և արդյունավետ կառավարումը, ընդլայնի հանրային բանավեճերը և քաղաքացիների ներգրավումը, օգնի պայքարել կոռուպցիայի դեմ՝ կառավարության ավելի բարձր հաշվետվողականության միջոցով, և բարելավի կառավարության կողմից ծառայությունների մատուցումը: Համակողմանի տվյալներին հասանելիության ապահովումը կարող է ուժեղացնել անհատներին, լրատվամիջոցներին, քաղաքացիական հասարակությանը և բիզնեսին՝ իրենց տրամադրվող ծառայությունների ու իրենց ակնկալած չափորոշիչների վերաբերյալ ավելի իրազեկ ընտրություններ կատարելու հարցում: Բաց տվյալները նաև կարող են արժեքավոր գործիք լինել կառավարության համար՝ քաղաքականության մշակումը և ոլորտի կառավարումը բարելավելու գործում:
7. Բաց տվյալների ազատ հասանելիությունը և հետազայում դրանց վերաօգտագործումը էական նշանակություն ունեն հասարակության և տնտեսության համար: Դրանք կարող են լինել տեղեկությունների արժեքավոր աղբյուր ԱՃԹՆ-ն իրականացնող երկրների բազմաշահառու խմբերի համար:
8. Տվյալների նորահայտ չափորոշիչները կարող են նպաստել տվյալները փոխգործելի

¹⁰ Էականը «որոշակի նպատակով հրապարակվել է», ինչը նշանակում է, որ տվյալների հրապարակումը պետք է ներառվի քաղաքականության առանձին հիմնախնդիրների լուծման գործում:

8. Բաց տվյալների քաղաքականությունը

դարձնելուն: Տվյալների չափորոշիչներ¹¹ ընդունելը նաև նպաստում է տվյալների հրապարակման կայունությանը, սատարում է կառավարությունների, ոլորտի և քաղաքացիական հասարակության կարողություններին՝ պատրաստելու և հրապարակելու տվյալներ՝ գոյություն ունեցող գործիքակազմի և ռեսուրսների օգտագործմամբ, և կարող է սատարել տվյալների օգտագործմանն ու վերլուծությանը, եթե չափորոշիչները մշակված են մտածված կերպով, և դրանց շուրջ ձևավորվում են օգտագործողների հանրույթներ:

Բաց տվյալները ԱԾԹՆ-ի իրականացման գործընթացում

9. Խրախուսվում է, որ ԱԾԹՆ-ն իրականացնող երկրները.

- ա) պարբերաբար հրապարակեն բաց տվյալներ՝ ԱԾԹՆ-ի հաշվետվությունների կազմման և ներկայացման գործում ներգրավված ընկերություններում արմատավորելով բաց տվյալների քաղաքականությունները և ռազմավարությունները՝ պատեհաժամ և որակյալ տվյալներ, տվյալների հասանելիությունը և տվյալների տրամադրման ծախսարդյունավետությունն ապահովելու նպատակով,
- բ) աշխատեն տվյալներն օգտագործողների¹² հետ՝ բացահայտելու տվյալների գերակա հավաքակազմերը և տվյալների տրամադրման ձևը,
- գ) հաշվի առնեն օգտագործողների տարբեր կարիքները և տվյալների մատչելիության մարտահրավերները՝ ելնելով գենդերային, էթնիկական և աշխարհագրական ներկայացուցչությունից,
- դ) ապահովեն, որ տվյալները տրամադրվեն առանձին մանրամասնություններով, մեքենայով ընթերցելի ձևաչափով և լիարժեք նկարագրությամբ, որպեսզի դրանցից օգտվողներն ունենան բավարար տեղեկություններ՝ հասկանալու դրանց ուժեղ և թույլ կողմերը, վերլուծության հետ կապված սահմանափակումները և անվտանգության պահանջները, ինչպես նաև հասկանան, թե ինչպես մշակեն այդ տվյալները,
- ե) տվյալները հրապարակեն հնարավորինս վաղ՝ օգտագործողներին տրամադրելով հետադարձ կարծիքի հնարավորություն, այդուհետև շարունաբար կատարեն վերանայումներ՝ բաց տվյալների որակի ամենաբարձր չափորոշիչներ ապահովելու նպատակով,

¹¹ Օրինակներ. իրական սեփականատերերի համար՝ իրական սեփականատերերի չափորոշիչն ի հայտ է գալիս որպես բաց տվյալների չափորոշիչ (<http://standard.openownership.org>), պայմանագրերի համար ընդունվում է «Պայմանագրերի կնքման բաց տվյալների չափորոշիչ» (<http://standard.open-contracting.org>):

¹² «Օգտագործողներ»՝ կարող է նշանակել քաղաքացիներ, լրատվամիջոցներ, գիտաուսումնական ոլորտի ներկայացուցիչներ և, իհարկե, այլ պետական մարմիններ, որոնք օգտագործում են այլ մարմինների վերաբերող տվյալներ՝ իրենց ծառայությունների մատուցման նպատակով:

8. Բաց տվյալների քաղաքականությունը

- զ) տվյալները հրապարակեն բաց լիցենզիայով, նախընտրելի է՝ CC 4.0¹³-ով, ինչը օգտագործողներին հնարավորություն է տալիս ազատորեն ձեռք բերել և հեշտությամբ վերաօգտագործել դրանք¹⁴,
- է) տեխնիկական հմտությունները և փորձը փոխանակեն այլ երկրների հետ՝ բաց տվյալների ներուժը սոցիալապես ներառական կերպով առավելագույնի հասցնելու նպատակով,
- ը) աշխատեն բաց տվյալների վերաբերյալ գրագիտության մակարդակի բարձրացման ուղղությամբ և խրախուսեն բաց տվյալների խթանման բնագավառում աշխատողներին՝ օրինակ, հավելվածներ մշակողներին և քաղաքացիական հասարակության կազմակերպություններին՝ բացահայտելու բաց տվյալների արժեքավոր դերը,
- թ) ապահովեն, որ տվյալները լինեն ազգային և միջազգային չափորոշիչների¹⁵ հետ փոխգործելի, այդ թվում՝ ընդունելով ԱՃԹՆ-ի Խորհրդի կողմից հաստատված տվյալների վերաբերյալ չափորոշիչները և ԱՃԹՆ-ի Միջազգային քարտուղարության կողմից տրամադրված լրացուցիչ ցուցումները,
- ժ) հնարավորության դեպքում սատարեն տվյալների խաչաձև հղումները այլ տվյալների հավաքակազմերին՝ օգտագործելով եզակի, հետևողական և հանրային նույնացուցիչներ (identifiers) առևտրային և պետական կազմակերպությունների համար,
- ժա) հաշվի առնեն բաց տվյալների մատուցման և օգտագործման տեխնիկական ենթակառուցվածքը¹⁶,
- ժբ) հաշվի առնեն բաց տվյալների քաղաքականության ղեկավարումը և կայունությունը՝ ապահովելու, որ հաշվետու կազմակերպություններն ունենան էլեկտրոնային տվյալների կառավարիչ, տվյալները պահպանվեն, ինչպես նաև գործեն անվտանգության չափորոշիչներ:

Բաց տվյալների հանրայնի ներգրավումը

10. Կառավարության բաց տվյալներից սովորելու և լավագույն գործելակերպեր ձևավորելու նպատակով խրախուսվում է, որ ԱՃԹՆ-ի երկրները հաստատեն Բաց տվյալների

¹³ Տես <https://creativecommons.org/licenses/by/4.0/> և <https://creativecommons.org/licenses/by/4.0/legalcode>

¹⁴ Տես «Մուգջարկներ լիցենզավորման վերաբերյալ», որը պատրաստել է «Օփըն նոլիջ ինիթիեթևս» (Open Knowledge International) կազմակերպությունը՝ <https://research.okfn.org/avoiding-data-use-silos/#the-licensing-process>

¹⁵ Տես, օրինակ, բաց տվյալների չափորոշիչների տեղեկատու՝ <http://datastandards.directory/>

¹⁶ Տեխնիկական ենթակառուցվածքը վերաբերում է տեղեկատվական տեխնոլոգիային և հմտություններին, որոնք անհրաժեշտ են տվյալների հավաքումը, մաքրումը, այլ տվյալների հավաքակազմերի հետ կապը և հրապարակումը հնարավոր դարձնելու համար: Տվյալների էկոհամակարգերի քարտեզագրումը կարող է ծառայել որպես տվյալների հավաքման, բնորոշման (կոդացիայի) և հրապարակման հետ կապված տեխնիկական ենթակառուցվածքի և դերակատարների գծագրման միջոց: Տես, օրինակ, Բաց տվյալների ինստիտուտի (Open Data Institute's) ուղեցույցը՝ <https://theodi.org/project/mapping-data-ecosystems/> և Միացյալ Թագավորության Միջազգային զարգացման նախարարության (U2L/DFID) թվային մշակման սկզբունքները՝ <https://digitalprinciples.org/principle/understand-the-existing-ecosystem/>

8. Բաց տվյալների քաղաքականությունը

կանոնադրությունը¹⁷ և այլ համապատասխան նախաձեռնություններ¹⁸,

ԱՃԹՆ-ի երկրներից քաղված դասերը փոխանցելու և միջազգային փորձից օգտվելու նպատակով ԱՃԹՆ-ի Միջազգային քարտուղարությունը պետք է, այն դեպքում, երբ դա կհամարի փոխլրացնող միջոցառում, ներգրավի աշխատանքային խմբերի, որոնք կենտրոնանում են բաց տվյալների վրա¹⁹:

¹⁷ Տես բաց տվյալների կանոնադրությունը՝ <https://opendatacharter.net/endorse-the-charter/>

¹⁸ Օրինակ, «Թվային մշակման սկզբունքները» ուղեցույցը՝ <https://digitalprinciples.org/>

¹⁹ Օրինակ, Բաց տվյալների կանոնադրության աշխատանքային խումբը, որը մշակում է գործիքակազմեր և ռեսուրսներ՝ աջակցելու կառավարություններին բաց տվյալների քաղաքականության իրականացման գործում, և խթանում ու ոլորացնում է նույն ոլորտի ներկայացուցիչներին՝ մեկը մյուսից սովորելու գործընթացը տարբեր երկրներում և կազմակերպություններում: Լրացուցիչ նախապատմության համար այցելեք <https://opendatacharter.net/who-we-are>

ԳԼՈՒԽ II

ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ և ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

ԱՃԹՆ-ն զարգացել-վերածվել է գլոբալ ստանդարտի, որը հարթակ է ապահովում ավելի լայնածավալ բանավեճի և բարեփոխումների իրականացման համար: ԱՃԹՆ-ի ղեկավարումը և կառավարումը ևս զարգացման փուլեր են անցել: ԱՃԹՆ-ն ղեկավարվում է շահույթ չհետապնդող՝ Անդամների ասոցիացիայի կողմից՝ Նորվեգիայի օրենսդրության համաձայն: ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի Կանոնադրությունն ապահովում է ԱՃԹՆ-ի կառավարման շրջանակը:

Առնվազն երեք տարին մեկ անգամ ԱՃԹՆ-ն կազմակերպում է գլոբալ համաաժողով՝ նպատակ ունենալով միջազգային հարթակ ապահովել ԱՃԹՆ-ի շահագրգիռ կողմերի համար ԱՃԹՆ-ի նպատակների իրականացմանն օժանդակելու հարցում: Այս համաժողովների անցկացմանը զուգահեռ՝ տեղի են ունենում ավելի փոքրամասշտաբ՝ Անդամների ժողովներ երեք խմբակցությունների՝ երկրների (իրականացնող և աջակցող), ընկերությունների (այդ թվում՝ ֆինանսական հաստատություններ) և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ: Երեք խմբակցությունների ծայերը բաշխված են հավասար համամասնությամբ: Անդամների ժողովի հիմնական խնդիրը ԱՃԹՆ-ի հորհրդի անդամների նշանակումն է: Խմբակցություններն իրենց միջև համաձայնության են գալիս Ասոցիացիային իրենց անդամակցության վերաբերյալ և այն հարցի շուրջ, թե ում են ցանկանում նշանակել ԱՃԹՆ-ի հորհրդում:

Այս համաաժողովների և Անդամների ժողովների միջև ընկած ժամանակահատվածում ԱՃԹՆ-ի հորհուրդը վերահսկում է ԱՃԹՆ-ի գործունեությունը հորհրդի կանոնավոր հանդիպումների, հանձնաժողովի հանդիպումների և հորհրդի պարբերական շրջաբերականների միջոցով: ԱՃԹՆ-ի հորհուրդն ունի տարբեր խմբակցությունների ներկայացուցիչներից բաղկացած 21 անդամ:

ԱՃԹՆ-ի Միջազգային քարտուղարությունը պատասխանատու է ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի ամենօրյա գործունեության համար: ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներին տրամադրվում է մեծածավալ փորձագիտական օժանդակություն ԱՃԹՆ-ի Միջազգային քարտուղարության և այլ բազմակողմ, երկկողմ և ոչ-կառավարական (հասարակական) կազմակերպությունների կողմից:

Այս բաժինը բովանդակում է միջազգային մակարդակում ԱՃԹՆ-ի կառավարմանն առնչվող հետևյալ հիմնական փաստաթղթերը.

- Ասոցիացիայի Կանոնադրությունը,
- Հրապարակայնության քաղաքականությունը, որով սահմանվում է, թե ինչպես պետք է ԱՃԹՆ-ն ապահովի իր գործունեության թափանցիկությունը,
- ԱՃԹՆ-ի խմբակցությունների ուղեցույցները, որոնք հասանելի են eti.org/governance հղմամբ,
- ԱՃԹՆ-ի վարքի կանոնները:



9. Ասոցիացիայի կանոնադրություն

Համաձայնեցվել է ԱՃԹՆ-ի անդամների ժողովում՝ 2019 թ. հունիսի 17-ին:

ՀՈՂՎԱԾ 1. ԱՆՎԱՆՈՒՄԸ

1. Ասոցիացիայի անվանումն է՝ «Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ-ի) ասոցիացիա» (այսուհետ՝ «ԱՃԹՆ-ի Ասոցիացիա»):

ՀՈՂՎԱԾ 2. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

1. ԱՃԹՆ-ի Ասոցիացիան միջազգային բազմաշահառու նախաձեռնություն է, որին մասնակցում են կառավարությունների և դրանց գործակալությունների ներկայացուցիչներ, նալթի և գազի արդյունահանման ու հանքարդյունահանող ընկերություններ, ակտիվների կառավարմամբ զբաղվող ընկերություններ և կենսաթոշակային հիմնադրամներ (այսուհետ՝ «ինստիտուցիոնալ ներդրողներ») և տվյալ երկրի քաղաքացիական հասարակության խմբեր ու միջազգային հասարակական կազմակերպություններ:
2. ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի նպատակն է ԱՃԹՆ-ի սկզբունքները և ԱՃԹՆ-ի Պահանջները դարձնել նալթի, գազի արդյունահանման և հանքարդյունահանման ոլորտներում թափանցիկության ապահովման միջազգայնորեն ընդունելի ստանդարտ՝ ճանաչելով, որ բնական պաշարներից ստացվող եկամուտների թափանցիկության ապահովման բարելավումը կարող է նվազեցնել կոռուպցիան, իսկ արդյունահանող ճյուղերից ստացվող եկամուտները բնական պաշարներով հարուստ երկրներում կարող են վերափոխել տնտեսությունները, կրճատել աղքատությունը և բարձրացնել ամբողջ բնակչության կենսամակարդակը:

ՀՈՂՎԱԾ 3. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ, ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. ԱՃԹՆ-ի Ասոցիացիան Նորվեգիայի օրենսդրության համաձայն հիմնադրված՝ շահույթ չհետապնդող ասոցիացիա է (forening):
2. ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի անդամները, առանձին-առանձին կամ հավաքականորեն, պատասխանատու չեն ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի պարտքերի, պարտավորությունների և պարտականությունների համար:

9. Ասոցիացիայի կանոնադրություն

ՀՈԴՎԱԾ 4. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌԱՅՎԱԾՔԸ

1. ԱՃԹՆ-ի ասոցիացիայի մշտական ինստիտուցիոնալ մարմիններն են՝
 - i. ԱՃԹՆ-ի անդամների ժողովը, որն անցկացվում է ԱՃԹՆ-ի համաժողովի հետ միաժամանակ,
 - ii. ԱՃԹՆ-ի Խորհուրդը, որը ղեկավարում է ԱՃԹՆ-ի Նախագահը,
 - iii. ԱՃԹՆ-ի քարտուղարությունը, որը ղեկավարում է Գործադիր տնօրենը:
2. ԱՃԹՆ-ի Խորհուրդը 13-րդ հոդվածի համաձայն կարող է ստեղծել հանձնաժողովներ,
3. ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի կազմակերպական կառուցվածքը գործում է թափանցիկության սկզբունքով և խրախուսում է բազմազանությունը՝ գենդերի, ազգությունների և մշակույթի առումով:

ՀՈԴՎԱԾ 5. ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի անդամը երկրի (այսինքն՝ պետության), ընկերության, կազմակերպության կամ իրավաբանական անձի ներկայացուցիչն է, որը նշանակվել է խմբակցության կողմից՝ հոդվածներ 5 (2) և (3)-ում սահմանված դրույթների համաձայն:
2. Գոյություն ունեն անդամներից կազմված երեք խմբակցություններ, որոնք են.
 - i. երկրների խմբակցությունը, որը ներառում է՝
 - ա) ԱՃԹՆ-ն իրականացնող երկրները, այսինքն՝ այն պետությունները, որոնք ԱՃԹՆ-ի Խորհրդի կողմից դասակարգվել են որպես այդպիսիք, և
 - բ) աջակից երկրները, այսինքն՝ այն պետությունները կամ պետությունների միությունները, որոնք աջակցում են ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի նպատակի իրականացմանը, ինչպես դա սահմանված է ԱՃԹՆ-ի Խորհրդի կողմից:
 - ii. ընկերությունների խմբակցությունը, որը ներառում է՝
 - ա) արդյունահանող ոլորտի այն ընկերությունները, որոնք հանձն են առել աջակցել ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի նպատակի իրականացմանը, ինչպես դա սահմանված է ԱՃԹՆ-ի Խորհրդի կողմից, և այդ ընկերությունները ներկայացնող ասոցիացիաները, և
 - բ) ինստիտուցիոնալ ներդրողները, որոնք հանձն են առել աջակցել ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի նպատակի իրականացմանը, ինչպես դա սահմանված է ԱՃԹՆ-ի Խորհրդի կողմից,
 - գ) ապրանքների առևտուր իրականացնողները, որոնք հանձն են առել աջակցել ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի նպատակի իրականացմանը, ինչպես դա սահմանված է ԱՃԹՆ-ի Խորհրդի կողմից:

9. Ասոցիացիայի կանոնադրություն

- iii. քաղաքացիական հասարակության կազմակերպությունների խմբակցությունը, որը ներառում է այն հասարակական կազմակերպությունները, համաշխարհային գործողության ցանցերը կամ կոալիցիաները, որոնք աջակցում են ԱՃԹՆ-ի ասոցիացիայի նպատակի իրականացմանը, ինչպես դա սահմանված է ԱՃԹՆ-ի հտորհրդի կողմից:
3. Յուրաքանչյուր խմբակցություն որոշում է կայացնում ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի անդամների նշանակումները կարգավորող իր կանոնների վերաբերյալ: Անդամակցության համար կիրառվում են հետևյալ սահմանափակումները.
 - i. երկրների խմբակցությունից՝ մինչև մեկ ներկայացուցիչ յուրաքանչյուր իրականացնող երկրից և յուրաքանչյուր աջակցող երկրից (կամ դրանց միություններից),
 - ii. ընկերությունների խմբակցությունից՝ մինչև մեկ ներկայացուցիչ յուրաքանչյուր ընկերությունից ու ընկերությունները ներկայացնող ասոցիացիաներից, և առավելագույնը հինգ ներկայացուցիչ ինստիտուցիոնալ ներդրողներից,
 - iii. քաղաքացիական հասարակության կազմակերպությունների խմբակցությունից՝ մինչև մեկ ներկայացուցիչ քաղաքացիական հասարակության յուրաքանչյուր կազմակերպությունից:
4. Խմբակցությունը կարող է իր կողմից նշանակված անդամին ցանկացած ժամանակ փոխարինել այլ անդամով: Խմբակցությունը ԱՃԹՆ-ի քարտուղարությանը մշտապես տեղեկություններ է հաղորդում իր անդամների մասին:
5. ԱՃԹՆ-ի հտորհուրդը կարող է դադարեցնել ԱՃԹՆ-ի Ասոցիացիային ցանկացած անդամի անդամակցությունը, եթե՝
 - i. այդ անդամը կամ նրա ներկայացրած երկիրը կամ կազմակերպությունը չի համապատասխանում սույն Կանոնադրությամբ ամրագրված դրույթներին, կամ՝
 - ii. այդ անդամը կամ նրա ներկայացրած երկիրը կամ կազմակերպությունն իր գործողություններն իրականացնում է՝ ԱՃԹՆ-ի սկզբունքները խախտելով կամ դրանց հակասելով:
6. Ցանկացած անդամ կարող է բողոքարկել հոդված 5 (5)-ի համաձայն կայացված ԱՃԹՆ-ի հտորհրդի որոշումը, որի վերաբերյալ վերջնական որոշում ընդունում է Անդամների ժողովը:

ՀՈՂՎԱԾ 6. ԱՃԹՆ-Ի ՀԱՄԱԺՈՂՈՎ

1. ԱՃԹՆ-ի համաժողովն անցկացվում է առնվազն երեք տարին մեկ անգամ՝ նպատակ ունենալով հարթակ ապահովել ԱՃԹՆ-ի շահագրգիռ կողմերի համար՝ հաշվի առնելով ԱՃԹՆ-ի Ասոցիացիայով նրանց բոլորի հետաքրքրվածությունը՝ ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի նպատակի իրականացմանն օժանդակելու, ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի քաղաքականությունների և ռազմավարությունների վերաբերյալ իրենց տեսակետներն արտահայտելու հարցում: ԱՃԹՆ-ի Նախագահը հանդես է գալիս որպես համաժողովի նախագահող: ԱՃԹՆ-ի համաժողովը չի հանդիսանում

9. Ասոցիացիայի կանոնադրություն

ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի կառավարման մարմին:

2. ԱՃԹՆ-ի անդամները, ԱՃԹՆ-ի Խորհուրդը և ԱՃԹՆ-ի քարտուղարությունը կամ դրանց ներկայացուցիչներն իրավունք ունեն ներկա գտնվելու կամ ներկայացված լինելու ԱՃԹՆ-ի համաժողովին: ԱՃԹՆ-ի մյուս շահագրգիռ կողմերը նույնպես պետք է հրավիրվեն՝ յուրաքանչյուր անգամ ԱՃԹՆ-ի Խորհրդի որոշմամբ ապահովելով մասնակիցների այնպիսի թվաքանակ, որ գործնականում հնարավոր լինի իրականացնել կազմակերպական աշխատանքները:
3. ԱՃԹՆ-ի համաժողովը հրավիրվում է ԱՃԹՆ-ի Խորհրդի կողմից ԱՃԹՆ-ի կայքէջում հայտարարություն տեղադրելու և անդամներին ու խմբակցություններին առնվազն չորս շաբաթ առաջ ուղարկված գրավոր ծանուցման միջոցով: Գրավոր ծանուցումը ներառում է ԱՃԹՆ-ի համաժողովի օրակարգը:
4. ԱՃԹՆ-ի համաժողովը պետք է.
 - i. ապահովի կարևոր և տեսանելի հարթակ բանավեճի, քարոզչության, միջոցների շարունակական հայթայթման և ԱՃԹՆ-ի նոր շահագրգիռ կողմերի ներառման համար,
 - ii. ուսումնասիրի գրանցված առաջընթացը՝ Անդամների նախորդ հերթական ժողովից հետո ընկած ժամանակահատվածի գործունեության մասին հաշվետվության հիման վրա,
 - iii. ԱՃԹՆ-ի Խորհրդին տրամադրի առաջարկություններ մինչև անդամների հաջորդ հերթական ժողովը ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի գործողությունների վերաբերյալ,
 - iv. ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի նպատակն իրականացնելու համար կենտրոնացնի և պահպանի համակարգման բարձր մակարդակը, քաղաքական հանձնառությունը և թափը, և
 - v. ապահովի ոչ պաշտոնական հաղորդակցության ուղիներ ԱՃԹՆ-ի այն շահագրգիռ կողմերի համար, որոնք որևէ կերպ պաշտոնապես ներկայացված չեն ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի կառավարման կառուցվածքում:
5. 6 (4) հոդվածում ներկայացված հարցերի վերաբերյալ տեսակետները կարող են արտահայտվել պարտադիր ուժ չունեցող՝ «Արդյունքների մասին» հայտարարության մեջ, որը կհամաձայնեցվի ԱՃԹՆ-ի համաժողովի կողմից և կհաղորդվի ԱՃԹՆ-ի Անդամների ժողովին ու ԱՃԹՆ-ի Խորհրդին: ԱՃԹՆ-ի համաժողովը պետք է ջանքեր չինայի որոշումները փոխադարձ համաձայնությամբ (կոնսենսուսով) ընդունելու համար: Հաշվի առնելով ԱՃԹՆ-ի շահագրգիռ կողմերի տեսակետները՝ ԱՃԹՆ-ի Նախագահը կարող է որոշել, որ հարկավոր է քվեարկություն անցկացնել: ԱՃԹՆ-ի յուրաքանչյուր շահագրգիռ կողմ, բացառությամբ ԱՃԹՆ-ի Խորհրդի անդամների, և Քարտուղարությունը ունի յուրաքանչյուրը մեկ ձայնի իրավունք: ԱՃԹՆ-ի համաժողովի որոշումներն ընդունվում են ներկա գտնվող և քվեարկությանը մասնակցող անձանց պարզ մեծամասնությամբ:

9. Ասոցիացիայի կանոնադրություն

ՀՈԴԿԱԾ 7. ԱՃԹՆ-Ի ԱՆԴԱՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

1. ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի կառավարման մարմինը ԱՃԹՆ-ի անդամների ժողովն է:
2. ԱՃԹՆ-ի անդամների ժողովը բաղկացած է ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի անդամներից:
3. ԱՃԹՆ-ի անդամների հերթական ժողովն անցկացվում է ԱՃԹՆ-ի համաժողովին զուգահեռ՝ առնվազն երեք տարին մեկ անգամ: ԱՃԹՆ-ի անդամների հերթական ժողովը գումարվում է ԱՃԹՆ-ի Խորհրդի կողմից՝ առնվազն չորս շաբաթ առաջ այդ մասին գրավոր ծանուցում ուղարկելով անդամներին:
4. Անդամների արտահերթ ժողովը կարող է գումարվել ԱՃԹՆ-ի Խորհրդի կողմից՝ այդ մասին առնվազն երեք շաբաթ առաջ գրավոր ծանուցում ուղարկելով անդամներին: ԱՃԹՆ-ի Խորհուրդն ապահովում է, որ անդամների արտահերթ ժողովն անցկացվի ԱՃԹՆ-ի Նախագահի կողմից անդամների արտահերթ ժողով անցկացնելու մասին հայցը ստանալուց հետո չորս շաբաթվա ընթացքում:
5. ԱՃԹՆ-ի անդամների ժողովին մասնակցել ցանկացող անդամները պետք է ԱՃԹՆ-ի քարտուղարությանը ծանուցեն այդ մասին մինչև ծանուցագրում նշված ամսաթիվը: Անդամը կարող է ԱՃԹՆ-ի անդամների ժողովին ներկայացված լինել գրավոր լիազորագրի միջոցով: Լիազորագիրը կարող է նաև բովանդակել քվեարկության հատուկ ցուցումներ:

ԱՃԹՆ-ի քարտուղարությունը պետք է ստանա պատշաճ կերպով ստորագրված լիազորագիրը մինչև ծանուցագրում նշված ամսաթիվը:

6. ԱՃԹՆ-ի Նախագահը հանդես է գալիս որպես ԱՃԹՆ-ի անդամների ժողովի նախագահող:
7. Անդամների ժողովի քվորումն ապահովված է, եթե ժողովին ներկա է անդամների առնվազն մեկ երրորդը, այդ թվում՝ պետք է ապահովվի յուրաքանչյուր խմբակցության անդամների առնվազն մեկ երրորդի ներկայությունը:
8. Անդամների ժողովը պետք է ջանքեր չինայի որոշումները փոխադարձ համաձայնությամբ (կոնսենսուսով) ընդունելու համար: Եթե պահանջվում է քվեարկության անցկացում, ապա որոշումներն ընդունվում են ձայների որակյալ մեծամասնությամբ, ինչի համար պահանջվում է տրված ձայների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդի աջակցությունը, այդ թվում՝ պետք է ապահովվի յուրաքանչյուր խմբակցությունը ներկայացնող անդամների կողմից տրված ձայների առնվազն մեկ երրորդի աջակցությունը: Յուրաքանչյուր խմբակցության անդամների համար ձայների ընդհանուր թիվը հավասար է և որոշվում է հետևյալ կերպ.
 - i. երկրների խմբակցության անդամներից յուրաքանչյուրն ունի մեկ ձայնի իրավունք, իսկ
 - ii. ընկերությունների խմբակցության և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների խմբակցության անդամների ձայները որոշվում են՝ երկրների ձայների ընդհանուր թիվը բաժանելով համապատասխանաբար

9. Ասոցիացիայի կանոնադրություն

ընկերությունների և քաղաքացիական հասարակության խմբակցությունների անդամների թվին:

- iii. ԱՃԹՆ-ի Նախագահը մինչև քվեարկության սկսվելը պետք է հայտարարի տարբեր խմբակցությունների յուրաքանչյուր անդամի ձայների թիվը:

ՀՈՂՎԱԾ 8. ԱՃԹՆ-Ի ԱՆԴԱՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

- 1. ԱՃԹՆ-ի անդամների ժողովը պետք է.
 - i. հաստատի գործունեության մասին հաշվետվությունը, ԱՃԹՆ-ի Խորհրդի ֆինանսական հաշվետվությունները և գործողությունների ծրագիրը,
 - ii. խմբակցությունների կողմից առաջադրված թեկածուներից ընտրի ԱՃԹՆ-ի Խորհրդի անդամներին և յուրաքանչյուր անդամին փոխարինողներին,
 - iii. ԱՃԹՆ-ի Խորհրդի առաջարկությամբ ընտրի ԱՃԹՆ-ի Նախագահին, և
 - iv. քննարկի այլ հարցեր՝ անդամներից ստացված հայցերի հիման վրա: Նման հայցերը պետք է ժամանակին գրավոր ներկայացվեն ԱՃԹՆ-ի Նախագահին՝ նման հարցերը ծանուցագրում տրամադրված՝ ԱՃԹՆ-ի անդամների ժողովի օրակարգում ներառելու համար:

ՀՈՂՎԱԾ 9. ԱՃԹՆ-Ի ԽՈՐՀՈՒՐԴԸ

- 1. ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի գործադիր մարմինը ԱՃԹՆ-ի Խորհուրդն է, որն ընտրվում է ԱՃԹՆ-ի անդամների ժողովի կողմից և գործում է ԱՃԹՆ-ի անդամների ժողովի ղեկավարության ներքո:
- 2. ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի բազմաշահառու բնույթն արտացոլելու համար ԱՃԹՆ-ի Խորհուրդը բաղկացած է 21 անդամներից («Խորհրդի անդամներ») և ունի հետևյալ կազմը.
 - i. Նախագահ,
 - ii. ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի անդամ հանդիսացող 9 Խորհրդի անդամներ՝ երկրների խմբակցությունից, որոնցից առավելագույնը 3 Խորհրդի անդամները պետք է ներկայացնեն աշակից երկրները, իսկ մյուսները պետք է ներկայացնեն ԱՃԹՆ-ն իրականացնող երկրները:
 - iii. ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի անդամ հանդիսացող 6 Խորհրդի անդամներ՝ ընկերությունների խմբակցությունից, որոնցից առավելագույնը մեկը պետք է ներկայացնի ինստիտուցիոնալ ներդրողներին,
 - iv. ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի անդամ հանդիսացող 5 Խորհրդի անդամներ՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների խմբակցությունից:
- 3. Խորհրդի բոլոր անդամների անդամակցությունը դադարում է իրենց թեկնածության

9. Ասոցիացիայի կանոնադրություն

առաջադրումից հետո անցկացվող ԱՃԹՆ-ի անդամների հերթական ժողովի եզրակացություն հիման վրա, սակայն ԱՃԹՆ-ի անդամների տվյալ ժողովին նրանք իրավունք ունեն նորից առաջադրել իրենց թեկնածությունը:

4. Խմբակցությունները կարող են առաջադրել, իսկ ԱՃԹՆ-ի անդամների ժողովը կարող է ընտրել խորհրդի մեկ փոխարինող անդամ («այլընտրանքային») խմբակցության կողմից առաջադրված յուրաքանչյուր խորհրդի անդամի համար: Փոխարինողը կարող է հանդես գալ որպես խորհրդի անդամ: Եթե փոխարինող անդամ չկա, ապա համապատասխան խմբակցությունն առաջադրում է թեկնածություններ խորհրդի նոր անդամի և փոխարինողի համար:
5. Խորհրդի նիստից խորհրդի անդամի բացակայության դեպքում տվյալ խորհրդի անդամին փոխարինողը կարող է ներկա լինել նիստին, մասնակցել քննարկումներին, քվեարկել և, ընդհանուր առմամբ, իրականացնել խորհրդի նիստի ժամանակ տվյալ խորհրդի անդամին վերապահված բոլոր գործառույթները:
6. Այն դեպքում, երբ ԱՃԹՆ-ի անդամների երկու ժողովների միջև ընկած ժամանակահատվածում ԱՃԹՆ-ի խորհրդում թափուր տեղ է առաջանում, այդ թափուր տեղը համալրում է անդամակցությունից հրաժարվող խորհրդի անդամին փոխարինողը, միևնույն ժամանակ, տվյալ խմբակցությունն առաջադրում է նոր փոխարինող անդամի թեկնածու, որն ընտրվում է խորհրդի կողմից: Մեկ այլ տարբերակ է այն, որ տվյալ խմբակցությունը կարող է առաջադրել խորհրդի նոր անդամի թեկնածու, որին պետք է ընտրի խորհուրդը:
7. ԱՃԹՆ-ի Ասոցիացիան խորհրդի անդամների համար ձեռք է բերում պարտավորության ապահովագրություն: Դրա ժամկետները և պայմանները հաստատում է ԱՃԹՆ-ի խորհուրդը:
8. ԱՃԹՆ-ի խորհուրդը կարող է որոշել, որ խորհրդի այն անդամը, որին ներկայացրած ԱՃԹՆ-ն իրականացնող երկրի անդամակցությունը կասեցվել է նրա պաշտոնավարման ժամկետի ընթացքում, կարող է պահպանել խորհրդի անդամի կարգավիճակը, սակայն կասեցման ժամանակահատվածի ընթացքում նա պետք է գերծ մնա խորհրդի գործունեությանը ներգրավվելուց: Այն դեպքում, երբ երկրի անդամակցության կասեցումը շարունակում է ուժի մեջ մնալ մեկ տարուց ավելի երկար, ԱՃԹՆ-ի խորհուրդը կարող է որոշել, որ անդամի խորհրդին անդամակցությունը պետք է դադարեցվի:

ՀՈԴՎԱԾ 10. ԱՃԹՆ-Ի ԴԻՏՈՐԴՆԵՐԸ

1. ԱՃԹՆ-ի խորհուրդը, հնարավորության դեպքում, պետք է համապատասխան միջազգային կազմակերպությունների, օրինակ, Համաշխարհային Բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի և այլ համապատասխան շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներին հրավիրի՝ որպես դիտորդներ ներկա գտնվելու ԱՃԹՆ-ի խորհրդի նիստերին և Անդամների ժողովներին: Նրանք չունեն ձայնի իրավունք, սակայն կարող են հրավիրվել՝ առանձին հարցերի վերաբերյալ իրենց տեսակետներն արտահայտելու համար: ԱՃԹՆ-ի խորհուրդը կարող է որոշել, որ որոշ հարցեր պետք է քննարկվեն առանց դիտորդների ներկայության:

9. Ասոցիացիայի կանոնադրություն

ՀՈԴՎԱԾ 11. ԱՃԹՆ-Ի ՆԱԽԱԳԱՀԸ

2. ԱՃԹՆ-ի Նախագահն ընտրվում է ԱՃԹՆ-ի անդամների հերթական ժողովի ժամանակ: ԱՃԹՆ-ի Խորհուրդը ԱՃԹՆ-ի անդամների յուրաքանչյուր հերթական ժողովից առաջ առաջարկում է ԱՃԹՆ-ի Նախագահի թեկնածու: ԱՃԹՆ-ի անդամների այդ ժողովին հաջորդող ժամանակահատվածի համար: ԱՃԹՆ-ի Նախագահի պաշտոնավարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ:
3. ԱՃԹՆ-ի Նախագահը.
 - i. հանդես է գալիս որպես ԱՃԹՆ-ի անդամների ժողովի նախագահող,
 - ii. հանդես է գալիս որպես ԱՃԹՆ-ի Խորհրդի նիստի նախագահող,
 - iii. ներկայացնում է ԱՃԹՆ-ի Խորհրդի հաշվետվությունը ԱՃԹՆ-ի համաժողովի և ԱՃԹՆ-ի անդամների ժողովի ժամանակ,
 - iv. ներկայացնում է ԱՃԹՆ-ի Խորհուրդը արտաքին հարթակներում,
 - v. իրականացնում է ԱՃԹՆ-ի քարտուղարության գործունեության հսկողություն՝ կապված ԱՃԹՆ-ի Խորհրդի որոշումների կատարման հետ,
 - vi. ձգտում է խթանել գործակցային հարաբերություններ ԱՃԹՆ-ի շահագրգիռ կողմերի միջև:
4. Եթե ԱՃԹՆ-ի Նախագահը չի կարող նախագահել Խորհրդի նիստի ժամանակ, ապա հանդիպմանը ներկա Խորհրդի անդամները կարող են այդ հանդիպման համար նախագահող նշանակել Խորհրդի մեկ այլ անդամի:

ՀՈԴՎԱԾ 12. ԱՃԹՆ-Ի ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

1. ԱՃԹՆ-ի Խորհուրդը մշտապես գործում է՝ ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի շահերից ելնելով: ԱՃԹՆ-ի Խորհուրդն իրականացնում է ԱՃԹՆ-ի անդամների ժողովի որոշումներով սահմանվող՝ ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի գործադիր լիազորությունները, ներառյալ հետևյալ առանցքային գործառույթները.
 - i. ԱՃԹՆ-ի Ասոցիացիային հուզող՝ քաղաքականության ընդհանուր և առանձին հարցերի քննարկում,
 - ii. ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի աշխատանքային ծրագրերի և բյուջեի համաձայնեցում,
 - iii. ԱՃԹՆ-ի համաժողովների և ԱՃԹՆ-ի անդամների ժողովների համար պայմանավորվածությունների համաձայնեցում,
 - iv. գործունեության մասին հաշվետվության և գործողությունների ծրագրի ներկայացում (ԱՃԹՆ-ի Նախագահի միջոցով) ԱՃԹՆ-ի համաժողովի ժամանակ, և ԱՃԹՆ-ի անդամների ժողովի կողմից դրանց հաստատման ստացում,
 - v. տարեկան \$ինանսական հաշվետվությունների ու աուդիտի

9. Ասոցիացիայի կանոնադրություն

հաշվետվությունների ներկայացում (ԱՃԹՆ-ի Նախագահի միջոցով) ԱՃԹՆ-ի անդամների վերջին հերթական ժողովից հետո ընկած հաշվարկային ժամանակահատվածների համար,

- vi. Գործադիր տնօրենի ներգրավում,
- vii. ԱՃԹՆ-ի քարտուղարության աշխատանքի վերահսկում և ղեկավարում (ԱՃԹՆ-ի Նախագահի միջոցով),
- viii. ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի բոլոր մակարդակներում, այդ թվում՝ դրա հանձնաժողովներում ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի բազմաշահառու բնույթի պահպանման և լիարժեք արտացոլման ապահովում,
- ix. իրականացնող երկրներում ԱՃԹՆ-ի իրականացման մոնիթորինգ և աջակցություն, վավերացման գործընթացի, այդ թվում՝ բողոքների, անհամաձայնությունների կարգավորման, երկրին անդամակցությունից զրկելու հարցի և բողոքարկման վերաբերյալ իր ընթացակարգերի սահմանում,
- x. ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի կառավարման և գործունեության առավել մանրամասն ընթացակարգերի և կանոնների ընդունում, այդ թվում՝ երկրի և ընկերությունների աշխատանքային ծրագրերի բովանդակությունները, վավերացման գործընթացը, հիմնադրամների կառավարումը, նախագծերի, ապրանքների և ծառայությունների համար վճարումները, աուդիտի անցկացումն ու հաշվետվությունների ներկայացումը և նախագծերի հաստատումը,
- xi. ԱՃԹՆ-ի անդամների յուրաքանչյուր հերթական ժողովից առաջ ԱՃԹՆ-ի Նախագահի թեկնածուի առաջարկում, և
- xii. վարքի կանոնների ընդունում:

ՀՈՂՎԱԾ 13. ԱՃԹՆ-Ի ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

1. ԱՃԹՆ-ի Խորհուրդը կարող է ստեղծել հանձնաժողովներ՝ առանձին հարցերի լուծմանն օժանդակելու նպատակով: Ցանկացած նման հանձնաժողով պետք է բաղկացած լինի Խորհրդի երկու կամ ավելի անդամից կամ նրանց փոխարինողներից, իսկ դրա կազմը պետք է, ողջամտության սահմաններում, արտացոլի ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի բազմաշահառու բնույթը: Նման հանձնաժողովների գործունեության պայմանները պետք է գրանցվեն արձանագրությունների մատյանում:

ՀՈՂՎԱԾ 14. ԱՃԹՆ-Ի ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

1. ԱՃԹՆ-ի Խորհուրդը պետք է հանդիպի տարեկան առնվազն երկու անգամ: Անհրաժեշտության դեպքում, հանգամանքներից ելնելով, ԱՃԹՆ-ի Խորհրդի հանդիպումները կարող են անցկացվել հեռախոսային խորհրդակցության ձևաչափով: ԱՃԹՆ-ի Խորհրդի հանդիպումներից տարեկան կտրվածքով առնվազն

9. Ասոցիացիայի կանոնադրություն

մեկն անցկացվում է հանդիպման մասնակիցների փաստացի ներկայությամբ:

2. Խորհրդի նիստը գումարվում է ԱՀԹՆ-ի Նախագահի կողմից առնվազն 14 օր առաջ ուղարկված գրավոր ծանուցմամբ: Ծանուցման ավելի կարճ ժամանակահատված կիրառելու համար պահանջվում է Խորհրդի բոլոր անդամների գրավոր համաձայնությունը:
3. Խորհրդի անդամները պետք է ջանքեր չխնայեն որոշումները փոխադարձ համաձայնությամբ (կոնսենսուսով) ընդունելու հարցում: Հաշվի առնելով Խորհրդի անդամների տեսակետը՝ ԱՀԹՆ-ի Նախագահը կարող է որոշել, որ անհրաժեշտ է քվեարկություն անցկացնել: ԱՀԹՆ-ի Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Քվեարկությունը կարող է կատարվել գրավոր լիազորագրի միջոցով:
4. Խորհրդի նիստի ընթացքում որևէ որոշում չի կարող կայացվել, եթե որոշման ընդունման պահին քվորումն ապահովված չէ: Քվորումն ապահովվում է, եթե ներկա են Խորհրդի անդամների առնվազն երկու երրորդը, որոնցից առնվազն երկու Խորհրդի անդամ՝ երկրների խմբակցությունից (մեկ իրականացնող պետության և մեկ աջակից երկրի ներկայացուցիչ), մեկ Խորհրդի անդամ՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների խմբակցությունից և մեկ Խորհրդի անդամ՝ ընկերությունների խմբակցությունից:
5. Եթե պահանջվում է քվեարկության անցկացում, ապա որոշումներն ընդունվում են ձայների որակյալ մեծամասնությամբ, ինչի համար պահանջվում է որոշմանը կողմ քվեարկած 13 ձայնի առկայություն, այդ թվում՝ պետք է ապահովվի յուրաքանչյուր խմբակցությունը ներկայացնող Խորհրդի անդամների կողմից տրված ձայների առնվազն մեկ երրորդի աջակցությունը:
6. Խորհրդի անդամը չի մասնակցում այն հարցի կամ կարգավորման շուրջ անցկացվող քվեարկությանը, որում նա ունի անմիջական շահ կամ, եթե առկա են այլ հատուկ հանգամանքներ, որոնք կարող են խաթարել նրա անկողմնակալության հանդեպ վստահությունը: Նման շահերի մասին տեղեկանալուց հետո Խորհրդի անդամը դրանց մասին գրավոր իրազեկում է ԱՀԹՆ-ի Խորհրդին հնարավորինս վաղ: Խորհրդի անդամի ներկայությունը չի հաշվարկվում քվորումի մեջ այն ժամանակ, երբ կայացվում է որոշում այնպիսի հարցի շուրջ, որի քվեարկությանը մասնակցելու իրավասություն Խորհրդի տվյալ անդամը չունի:
7. ԱՀԹՆ-ի Խորհուրդը կարող է հաստատել ընթացակարգեր Խորհրդի նիստերից դուրս որոշումների կայացման գործընթացների վերաբերյալ: Այդ ընթացակարգերին համապատասխան Խորհրդի նիստերից դուրս կայացված բոլոր որոշումները, դրանք ընդունելուց հետո, գրանցվում են Խորհրդի նիստի արձանագրության մեջ:
8. ԱՀԹՆ-ի Ասոցիացիայի որոշումները կարող են հաստատվել արտաքին միջամտությամբ՝ Խորհրդի բոլոր անդամների համատեղ ստորագրությամբ: ԱՀԹՆ-ի Խորհուրդը կարող է ինքն ընտրել Նախագահ միանձնյա, կամ Խորհրդի երկու կամ մի քանի անդամի կարող է շնորհվել ստորագրման իրավունք, որի դեպքում կարող են դրվել ցանկացած երկուսի ստորագրությունները:

9. Ասոցիացիայի կանոնադրություն

ՀՈԴ-ՎԱԾ 15. ԱՃԹՆ-Ի ՔԱՐՏՈՒԴԱՐՈՒԹՅՈՒՆ

1. ԱՃԹՆ-ի քարտուղարությունը («Քարտուղարությունը») բաղկացած է Գործադիր տնօրենից և աշխատակազմի մյուս անհրաժեշտ անդամներից: Քարտուղարության անդամներն աշխատում են ուղղակիորեն կամ միջնորդավորված՝ ԱՃԹՆ-ի անդամների կողմից կնքված պայմանագրով:
2. Քարտուղարությունը պատասխանատու է ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի ամենօրյա աշխատանքի, այդ թվում՝ իրականացնող երկրներին ցուցաբերվող աջակցության համար՝ ԱՃԹՆ-ի Խորհրդի ղեկավարության ներքո, Խորհրդի Նախագահի միջոցով:
3. Քարտուղարությունը մշտապես վարում է անդամների թարմացված ռեգիստր:
4. Քարտուղարությունն իրականացնում է սույն Կանոնադրության և դրանում կատարված ցանկացած փոփոխության հաշվառում:
5. Քարտուղարությունը կազմում է ԱՃԹՆ-ի Խորհրդի բոլոր նիստերի, Անդամների ժողովների և ԱՃԹՆ-ի համաժողովի հանդիպումների արձանագրությունները և դրանք գրանցում Արձանագրությունների մատյանում: Այդ բոլոր արձանագրությունները հրապարակվում են ԱՃԹՆ-ի կայքէջում: Այդ արձանագրություններում նշվում են հանդիպումներին ներկա գտնված անձանց անունները, դրանց ժամանակ ընդունված որոշումները և, նպատակահարմարության դեպքում, այդ որոշումներն ընդունելու հիմնավորումները:

ՀՈԴ-ՎԱԾ 16. ԱՃԹՆ-Ի ՔԱՐՏՈՒԴԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԸ

1. Քարտուղարությունը ղեկավարում է լրիվ դրույքով աշխատող Գործադիր տնօրենը, որը կազմակերպում է ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի ամենօրյա աշխատանքը, այդ թվում՝ անհրաժեշտ աշխատակազմի ընտրությունը, վերահսկում է ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի զարգացումը և տրամադրում է աջակցություն ԱՃԹՆ-ի Խորհրդին: Քարտուղարության Գործադիր տնօրենը ԱՃԹՆ-ի Խորհրդին հաշվետվություններ է ներկայացնում Նախագահի միջոցով և պատասխանատու է Քարտուղարության գործունեության համար:
2. Քարտուղարության Գործադիր տնօրենը կամ Քարտուղարության կազմից նրա նշանակած անձը ԱՃԹՆ-ի Խորհրդի բոլոր նիստերի, ԱՃԹՆ-ի անդամների ժողովների և ԱՃԹՆ-ի համաժողովների ժամանակ հանդես է գալիս որպես քարտուղար:

ՀՈԴ-ՎԱԾ 17. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

1. ԱՃԹՆ-ի Ասոցիացիան շահույթ չհետապնդող ասոցիացիա է: ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի ֆինանսական միջոցները գոյանում են ԱՃԹՆ-ի նվիրատուների կատարած կամավոր նվիրատվություններից և երկկողմ ու բազմակողմ դոնորների, միջազգային ֆինանսական հաստատությունների, այլ գործակալությունների, կազմակերպությունների և կառույցների կողմից տրամադրված դրամաշնորհներից,

9. Ասոցիացիայի կանոնադրություն

ինչպես դա կորոշի ԱՃԹՆ-ի Խորհուրդը:

2. ԱՃԹՆ-ի Ասոցիացիան կարող է գործել նաև բնաիրային տեսքով տրամադրված կամավոր նվիրատվություններով:

ՀՈԴՎԱԾ 18. ԱՃԹՆ-Ի ՀԱՇԻՎՆԵՐԸ, ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ

1. ԱՃԹՆ-ի Ասոցիացիան ունի «ԱՃԹՆ-ի միջազգային կառավարման հաշիվ» անվանումով առանձին բանկային հաշիվ: ԱՃԹՆ-ի միջազգային կառավարման հաշիվը կարող է օգտագործվել ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի նպատակների իրագործման և ԱՃԹՆ-ի Խորհրդի կողմից հաստատված աշխատանքային ծրագրերի շրջանակներում իրականացվող ցանկացած գործողության համար: Ֆինանսական միջոցները կարող են օգտագործվել վարչական և կառավարման ծախսերի վճարման, առանձին երկրի և մի քանի երկրների շրջանակներում իրականացվող գործողությունների իրականացման նպատակով:
2. ԱՃԹՆ-ի Խորհուրդը նշանակում է արտաքին անկախ աուդիտոր՝ ԱՃԹՆ-ի միջազգային կառավարման հաշվի տարեկան աուդիտի անցկացման և ԱՃԹՆ-ի Խորհրդին աուդիտի գրավոր հաշվետվության ներկայացման նպատակով:
3. ԱՃԹՆ-ի Խորհուրդը մշակում է ԱՃԹՆ-ի միջազգային կառավարման հաշվին առնչվող հաշվետվությունների ներկայացման և աուդիտի անցկացման պայմանավորվածությունները, որոնք սահմանվում են ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի լրացուցիչ գործառնական կանոններում և ընթացակարգերում:

ՀՈԴՎԱԾ 19. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն Կանոնադրությունում կարող են փոփոխություններ կատարվել 7-րդ հոդվածի համաձայն գումարված և անցկացված ԱՃԹՆ-ի անդամների ժողովի կողմից՝ ներկա անդամների առնվազն երկու երրորդի հաստատմամբ:

Փոփոխություն կատարելու մասին առաջարկությունը գրավոր ուղարկվում է ԱՃԹՆ-ի բոլոր անդամներին՝ համապատասխան որոշումն ընդունելուց 4 շաբաթ առաջ:

ՀՈԴՎԱԾ 20. ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

1. ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի կառավարման պայմանավորվածությունների վերանայումը պետք է իրականացվի ԱՃԹՆ-ի Խորհրդի կողմից՝ Ասոցիացիայի կազմավորումից հետո երկու տարվա ընթացում:

ՀՈԴՎԱԾ 21. ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ ԵՎ

ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

1. Ցանկացած անդամ ցանկացած պահի կարող է դադարեցնել ԱՃԹՆ-ի Ասոցիացիային իր անդամակցությունը: Անդամակցության նման դադարեցումը գործողության մեջ է մտնում անդամակցության դադարեցման մասին գրավոր

9. Ասոցիացիայի կանոնադրություն

ծանուցումը Քարտուղարության Գործադիր տնօրենի ստանալու պահից:

2. ԱՃԹՆ-ի Ասոցիացիան կարող է լուծարվել Անդամների ժողովի կողմից՝ 7-րդ հոդվածի դրույթների համաձայն: Լուծարելու մասին առաջարկությունը գրավոր ուղարկվում է ԱՃԹՆ-ի բոլոր անդամներին՝ համապատասխան որոշումն ընդունելուց 4 շաբաթ առաջ:
3. Լուծարման դեպքում ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի բոլոր ակտիվներն օգտագործվում են ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի նպատակներին համանման նպատակներով և ԱՃԹՆ-ի Խորհրդի որոշմամբ, ինչը պետք է հաստատվի ԱՃԹՆ-ի անդամների ժողովի կողմից:

ՀՈԴՎԱԾ 22. Ուժի ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

1. Սույն Կանոնադրությունն ուժի մեջ է մտնում ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի կազմավորման պահից:

ՀԱՎԵԼՎԱԾ Ա. ԱՃԹՆ-ի սկզբունքները

ԱՃԹՆ-ի ստանդարտի 1-ին բաժնում նշվածին համապատասխան:

ՀԱՎԵԼՎԱԾ Բ. ԱՃԹՆ-ի անվանման և պատկերանշանի օգտագործում

ԱՃԹՆ-ի անվանումը և պատկերանշանը ԱՃԹՆ-ի սեփականությունն են: Որպես կանոն՝ *ԱՃԹՆ-ի անվանման*՝ այսինքն, «ԱՃԹՆ» կամ «Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն», հարակից նյութերի կամ թարգմանությունների և *պատկերանշանի* կամ դրա տեղական ածանցյալների օգտագործումը խրախուսվում և թույլատրվում է՝ ենթարկվելով <https://eiti.org/logo-policy> հասցեում նշված սահմանափակումներին:

10. ԱՃԹՆ-ի հրապարակայնության քաղաքականությունը

1. **ԱՃԹՆ-ի փաստաթղթերը հրապարակային են՝ բացառությամբ ստորև նախատեսված դեպքերի:**
2. Հրապարակման ենթակա չեն գործառնական կամ բիզնեսին առնչվող հարցերի վերաբերյալ ԱՃԹՆ-ի բացահայտված այն փաստաթղթերը, որոնց դեպքում կարևոր է գաղտնիության պահպանումը **մրցակցային նկատառումներով՝** ելնելով այն անձի շահերից, ում վերաբերում է այդ տեղեկությունը:

Օրինակ, բիզնես գաղտնիքը սովորաբար հրապարակման ենթակա չէ, եթե բացահայտումը կարող է ազդել տվյալ ընկերության մրցակցային դիրքի վրա:

3. **Հրապարակման ենթակա չեն երրորդ կողմից** ստացված տեղեկություններ բացահայտող փաստաթղթերը, **եթե հավանական է, որ բացահայտումը կազդի այդ երրորդ կողմի օրինական շահերի վրա:**

Օրինակ՝ փաստաթղթերին հասանելիությունը չի թույլատրվի, եթե կարող է վտանգվել տվյալ երրորդ կողմի և (կամ) նրա ընտանիքի և (կամ) երրորդ կողմի հետ սերտորեն առնչվող որևէ անձի անձնական անվտանգությունը: Ավելին, անձնական կյանքի անձեռնմխելիությունը ևս համարվում է օրինական շահ և, հետևաբար, այդպիսի տեղեկությունը հրապարակման ենթակա չէ:

4. Հրապարակման ենթակա չեն ԱՃԹՆ-ի **ներքին աշխատանքային փաստաթղթերը:**

Օրինակ՝ Միջազգային քարտուղարությունից ԱՃԹՆ-ի հսրհուրդ և նրա հանձնաժողովներ ուղարկվող փաստաթղթերը, որպես կանոն, համարվում են ներքին փաստաթղթեր, հետևաբար, հրապարակման ենթակա չեն: Բացառությունը կիրառվում է, եթե Միջազգային քարտուղարությունը, ԱՃԹՆ-ի հսրհուրդ, ներկայացնելու համար գործը նախապատրաստելու ընթացքում, կազմել կամ որևէ արտաքին աղբյուրից պատվիրել է վերլուծություն կամ հաշվետվություն կամ նմանատիպ որևէ փաստաթուղթ: Ի հակադրություն նշվածի՝ ԱՃԹՆ-ի հսրհրդի նիստերի, ինչպես նաև կոմիտեների և աշխատանքային խմբի հանդիպումների վերջնական արձանագրությունները չեն համարվում ներքին փաստաթղթեր: ԱՃԹՆ-ի գործընկերների միջև էլեկտրոնային նամակները, որպես կանոն, համարվում են ներքին աշխատանքային փաստաթղթեր:

5. Հրապարակման ենթակա չեն ԱՃԹՆ-ի աշխատակազմին առնչվող **անձնական** տեղեկությունները:

Օրինակ՝ հրապարակման ենթակա չեն աշխատանքի ընդունմանը կամ աշխատանքից ազատմանն առնչվող գնահատումների վերաբերյալ փաստաթղթերը և (կամ) աշխատակազմի կատարողականի գնահատումների

10. ԱՃԹՆ-ի հրապարակայնության քաղաքականությունը

վերաբերյալ փաստաթղթերը և (կամ) անձնական բնույթի, ինչպես օրինակ՝ աշխատակազմի անդամների առողջության մասին տեղեկությունները: Մյուս կողմից՝ բոլոր պայմանագրերը, աշխատավարձերը, փոխհատուցումները և ծախսերի հաշվարկները հրապարակային են:

11. ԱՃԹՆ-ի խմբակցությունների ուղեցույցները

11. ԱՃԹՆ-ի խմբակցությունների ուղեցույցները

2006 թվականի հոկտեմբերին Օսլոյում կայացած համաժողովի կողմից ընդունված Միջազգային խորհրդատվական խմբի զեկույցում առաջարկվում է, որ «խմբակցություններից յուրաքանչյուրը պետք է համաձայնության գա այն հարցի շուրջ, թե ինչպես է ցանկանում ներկայացված լինել առաջարկված խորհրդում: Դրա համար պահանջվում է յուրաքանչյուր խմբակցության նախնական քննարկումն այն մասին, թե ինչպես պետք է սահմանվեն այդ պահանջներին համապատասխանող անձինք՝ (i) որպես ներկայացուցիչներ ընտրվելու համար, և (ii) ընտրության գործընթացում ներգրավվելու համար»:

Խմբակցությունները սահմանված են ԱՃԹՆ-ի կանոնադրության մեջ, ինչը ևս որոշում է Ասոցիացիայում խմբակցությունների անդամակցության չափը և ԱՃԹՆ-ի խորհրդում տեղերի քանակը: ԱՃԹՆ-ի մի քանի խմբակցություններ ոչ պաշտոնապես բաժանված են ենթախմբակցությունների:

Խմբակցությունների և ենթախմբակցությունների համար թարմացված ուղեցույցները հասանելի են ԱՃԹՆ-ի հետևյալ կայքէջում՝ eiti.org/governance:

12. ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի վարքի կանոնները

12. ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի վարքի կանոնները**1. Շրջանակը**

ԱՃԹՆ-ի հսորհորդի բոլոր անդամները, նրանց փոխարինողները, ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի անդամները, Քարտուղարության աշխատակազմը (տեղացի ու միջազգային) և բազմաշահառու խմբերի անդամները (ստորև՝ «ԱՃԹՆ-ի պաշտոնատար անձինք») պահպանում են սույն վարքի կանոնները:

2. Անձնական վարքագիծը, բարեվարքությունը և արժեքները

ԱՃԹՆ-ի պաշտոնատար անձինք պահպանում են բարեվարքությունը և էթիկական վարվելակերպի բարձրագույն չափորոշիչները և գործում են ազնվորեն ու պատշաճ կերպով: ԱՃԹՆ-ի պաշտոնատար անձանց անձնական և մասնագիտական վարվելակերպը պետք է մշտապես հարգանք և վստահություն ներշնչի նրանց՝ որպես թափանցիկության և հաշվետվողականության միջազգային ստանդարտ խթանող Ասոցիացիայի պաշտոնատար անձանց կարգավիճակի հանդեպ և պետք է նպաստի ԱՃԹՆ-ի արդյունավետ կառավարմանը:

ԱՃԹՆ-ի պաշտոնատար անձինք պետք է նվիրվեն՝ օրինակ ծառայելով առաջնորդելու իրենց գործին և պետք է ներկայացնեն ԱՃԹՆ-ի շահերն ու առաքելությունը՝ դրսևորելով բարեխղճություն և ազնվություն, բարեվարքություն, պատշաճ ջանադրություն և ողջամիտ բանիմացություն այնպես, որ դրա արդյունքում ամրապնդվի հանրային վստահությունն իրենց բարեվարքության և ԱՃԹՆ-ի բարեվարքության հանդեպ, ինչպես նաև ապահովվի, որ ԱՃԹՆ-ի հետ նրանցից յուրաքանչյուրի զուգորդումը մշտապես ուղեկցվի բարի համբավով:

3. Համապատասխանությունը

ԱՃԹՆ-ի պաշտոնատար անձինք ԱՃԹՆ-ի շրջանակներում ստանձնած իրենց պարտականությունները կատարում են ազգային օրենքներին և կանոնակարգերին, ինչպես նաև ԱՃԹՆ-ի կանոններին, շահերին և նպատակներին համապատասխան:

4. Հարգանքն այլ անձանց նկատմամբ

ԱՃԹՆ-ի պաշտոնատար անձինք հարգում են այլ անձանց արժանապատվությունը, նրանց՝ ԱՃԹՆ-ի հետ առնչվող կարիքներն ու անձնական կյանքը և պատշաճ կերպով իրականացնում են իրենց իրավասություններն ու կայացնում արդար որոշումներ իրենց գործընկերների, ԱՃԹՆ-ի այլ մարմինների անդամների, աշխատակազմի անդամների, լայն հասարակության, ինչպես նաև ԱՃԹՆ-ի շրջանակներում ստանձնած իրենց պարտականությունների կատարման ընթացքում իրենց հետ շփվող ցանկացած անձի հետ իրենց գործնական հարաբերություններում:

5. Արհեստավարժությունը

ԱՃԹՆ-ի պաշտոնատար անձինք պետք է արհեստավարժ կերպով ու ժամանակին կատարեն իրենց ստանձնած պարտականությունները և պետք է ներդնեն

12. ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի վարքի կանոնները

առավելագույն ջանքեր մասնագիտական զարգացմանն ուղղված միջոցառումներին կանոնավոր կերպով մասնակցելու համար:

6. Խտրականությունը

ԱՃԹՆ-ի պաշտոնատար անձինք ԱՃԹՆ-ի շրջանակներում ստանձնած իրենց պարտականությունների կատարման ընթացքում իրենց հետ շփվող որևէ անձի նկատմամբ չեն իրականացնում որևէ խտրական կամ անհանգստություն պատճառող գործողություն կամ աջակցում նման գործողության իրականացմանը:

7. Գաղտնիությունը

ԱՃԹՆ-ի պաշտոնատար անձինք որևէ կերպ չեն օգտագործում որպես ԱՃԹՆ-ի պաշտոնատար անձ իրենց դերակատարման շրջանակներում տրամադրված որևէ տեղեկություն և դեռևս չհանրայնացված տեղեկություններ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է իրենց պարտականությունների հետագա կատարման նպատակով: ԱՃԹՆ-ի պաշտոնատար անձինք շարունակում են կրել այս պարտավորությունն իրենց մանդատի ավարտից հետո երկու տարվա ընթացքում:

8. ԱՃԹՆ-ի ռեսուրսների ծախսումը և ԱՃԹՆ-ի գույքի օգտագործումը

ԱՃԹՆ-ի պաշտոնատար անձինք հարգում են միջոցների արդյունավետ օգտագործման սկզբունքը և պատասխանատու են ԱՃԹՆ-ին հատկացված ֆինանսական միջոցների օգտագործման համար: ԱՃԹՆ-ի որևէ պաշտոնատար անձ չի չարաշահում ԱՃԹՆ-ի գույքի կամ ռեսուրսների օգտագործումը և մշտապես հուսալիորեն պահպանում է ԱՃԹՆ-ի գույքը, ինչպես նաև չի թույլատրում ոչ պատշաճ կերպով լիազորված որևէ անձի վերցնել կամ օգտագործել այդ գույքը:

ԱՃԹՆ-ի պաշտոնատար անձինք հաշիվ են ներկայացնում միայն իրական ճանապարհածախսերի, գործառնական կամ որպես ԱՃԹՆ-ի պաշտոնատար անձ իրենց պարտականությունների կատարման հետ կապված ծախսերի վճարման համար: ԱՃԹՆ-ի պաշտոնատար անձինք ԱՃԹՆ-ին ապրանքներ կամ ծառայություններ են տրամադրում որպես ԱՃԹՆ-ի վարձատրվող մատակարարներ միայն ԱՃԹՆ-ի հորիզոնի կամ ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբին կատարվող ամբողջական բացահայտումից հետո կամ նրանց նախնական հաստատմամբ:

9. Շահերի բախումը և պաշտոնի չարաշահումը

ԱՃԹՆ-ի պաշտոնատար անձինք մշտապես գործում են՝ ելնելով ԱՃԹՆ-ի շահերից, այլ ոչ այնպիսի շահերից, ինչպիսիք են՝ անձնական կամ մասնավոր շահերը կամ ֆինանսական հարստացումը:

ԱՃԹՆ-ի պաշտոնատար անձինք խուսափում են մասնավոր շահերի բախումից: Սույն կանոններում օգտագործված իմաստով՝ «շահերի բախումը» իրավիճակ է, երբ ԱՃԹՆ-ի պաշտոնատար անձանց շահերն ազդում կամ կարող են ազդել ԱՃԹՆ-ի շրջանակներում իրենց ստանձնած պաշտոնական պարտականությունների անաչառ և անկողմնակալ կատարման վրա: Այս առումով, մասնավոր շահերը ներառում են իրենց, իրենց ընտանիքների կամ անձնական ծանոթների համար ստացած ցանկացած առավելությունը:

12. ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի վարքի կանոնները

Նման իրավիճակում հայտնված ԱՃԹՆ-ի պաշտոնատար անձինք պետք է հրաժարական տան և ԱՃԹՆ-ի Խորհրդին կամ բազմաշահառու խմբին տեղեկացնեն հրաժարականի մասին: ԱՃԹՆ-ի Խորհրդի անդամների համար կիրառվում են ԱՃԹՆ-ի կանոնադրության 5.6 հոդվածում սահմանված կանոնները:

Մասնավորապես՝ ԱՃԹՆ-ի պաշտոնատար անձինք պետք է հետևեն այս ուղեցույցներին.

- Խուսափել սեփական կամ որևէ երրորդ կողմի շահը ԱՃԹՆ-ի շահերից վեր դասելուց (և խուսափեք վեր դասելու դեպքերի առաջացումից). թեև կողմնակի անձնակազմ կամ երրորդ կողմի օգուտ ստանալը կարող է անհրաժեշտաբար ծագել ԱՃԹՆ-ի հետ կապված որոշակի գործողություններից, նման օգուտը պետք է պարզապես ստորադասվի ԱՃԹՆ-ի և վերջինիս նպատակների համար առաջնային օգուտին: Ցանկացած սահմանված, վճարված կամ ստացված օրապահիկ պետք է հիմնված լինի ողջամիտ իրական ծախսերի և միջազգային լավագույն գործելակերպի վրա²⁰:
- Ջերժ մնալ վերապահված լիազորությունների սահմանն անցնելուց: Պաշտոնատար անձինք չպետք է չարաշահեն ԱՃԹՆ-ի շրջանակներում ստանձնած պաշտոնը՝ անհարկի կերպով օգտագործելով ԱՃԹՆ-ի Ասոցիացիան կամ ԱՃԹՆ-ի աշխատակազմը, ծառայությունները, սարքավորումները, ռեսուրսները կամ գույքը՝ ի նպաստ անձնական կամ երրորդ կողմի օգուտի կամ հաճույքի. ԱՃԹՆ-ի պաշտոնատար անձինք չպետք է երրորդ կողմերին ներկայացնեն, որ, որպես ԱՃԹՆ-ի պաշտոնատար անձ, իրենց իրավասությունների շրջանակն ընդգրկում է ավելին, քան փաստացի ընդգրկում է:
- Չներգրավվել ԱՃԹՆ-ից դուրս իրականացվող այնպիսի անձնական բնույթի գործողություններում, որոնք կարող են, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, էականորեն բացասաբար ազդել ԱՃԹՆ-ի վրա:

10. Նվերները, ուղևորությունները և ներկայացուցչական ծախսերը

ԱՃԹՆ-ի պաշտոնատար անձինք չպետք է որևէ անձից կամ կազմակերպությունից պահանջեն կամ նրանցից ընդունեն այնպիսի նվերներ, դրամական նվերներ, անվճար ուղևորություններ, հոսնորարներ, անձնական գույք կամ այլ արժեքավոր իրեր, որոնք նախատեսված են եղել, կամ որոնք, հիմնավոր կերպով, կարող են ընկալվել որպես նման դոնորի նկատմամբ ԱՃԹՆ-ին առնչվող հարցերի հետ կապված հատուկ վերաբերմունք ցուցաբերելու ուղղակի կամ անուղղակի խթան:

ԱՃԹՆ-ի շրջանակներում ստանձնած պարտականությունների կատարման հետ

²⁰ Առաջարկվում է, որ ողջամիտ իրական ծախսերը և միջազգային լավագույն գործելակերպը սահմանելիս շահագրգիռ կողմերը հաշվի առնեն Միջազգային թարուտարության գործելակերպերը: Երբ Քարտուղարությունը տրամադրում է օրապահիկներ (ինչը չի ածում իր աշխատակազմի դեպքում), հաճախ հետևում է ԱՄՆ Պետդեպարտամենտի օտարերկրյա օրապահիկների դրույքապահիերին (https://aoprals.state.gov/content.asp?content_id=184&menu_id=78): Օրապահիկները սահմանելիս պետք է, անշուշտ, պահպանվեն ազգային օրենքները և կանոնակարգերը:

12. ԱՃԹՆ-ի Ասոցիացիայի վարքի կանոնները

ուղղակի կամ անուղղակի առնչվող նվերներ, անվճար ուղևորություններ կամ 100 ԱՄՆ դոլար արժեքը գերազանցող որևէ այլ փոխհատուցում առաջարկելու կամ ստանալու ցանկացած դեպքի մասին պետք է հայտնել ԱՃԹՆ-ի Խորհրդին կամ ԱՃԹՆ-ի համապատասխան բազմաշահառու խմբին (միջազգային կամ ազգային քարտուղարությունների միջոցով): Պետք է մերժել սահմանված արժեքը գերազանցող նվերներ առաջարկելը կամ ընդունելը: Նվերի՝ սահմանված արժեքը գերազանցելու կասկածի դեպքում պետք է խորհրդակցել ԱՃԹՆ-ի քարտուղարության կամ բազմաշահառու խմբի հետ: Այն դեպքում, երբ նպատակահարմար չէ մերժել առաջարկվածը՝ հատկապես այն պատճառով, որ նման մերժման պատճառով դոնորը կարող է անհարմար իրադրության մեջ հայտնվել, նվերը պետք է հանձնվի ԱՃԹՆ-ի քարտուղարությանը կամ բազմաշահառու խմբին:

11. Իրականացումը

ԱՃԹՆ-ի Խորհուրդը, ԱՃԹՆ-ի համապատասխան շահառու խմբերը, միջազգային կամ ազգային քարտուղարությունները պատասխանատու են ԱՃԹՆ-ի պաշտոնատար անձանց սույն վարքի կանոնների հետ ծանոթացնելու և դրանց մեկնաբանման ու իրականացման վերաբերյալ խորհրդատվություն և, անհրաժեշտության դեպքում, վերապատրաստման դասընթացներ տրամադրելու համար: ԱՃԹՆ-ի պաշտոնատար անձանց սույն վարքի կանոնների հետ ծանոթացնելու համար պատասխանատուները, այդ թվում՝ ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբերը պետք է յուրաքանչյուր տարի հաստատեն ԱՃԹՆ-ի պաշտոնատար անձանց՝ վարքի կանոններին ծանոթ լինելու փաստը և Միջազգային քարտուղարության միջոցով Խորհուրդ դրա իրականացման վերաբերյալ ներկայացնեն հաշվետվություն:

12. Հաշվետվությունների ներկայացումը

Սույն վարքի կանոնների մեկնաբանման, իրականացման կամ հավանական խախտման հետ կապված մտահոգություն ունեցող ԱՃԹՆ-ի պաշտոնատար անձինք նման հարցերը ներկայացնում են ԱՃԹՆ-ի լիազոր մարմնի ուշադրությանը: Այն դեպքերում, երբ խնդիրները ներկայացվում են ԱՃԹՆ-ի Խորհրդի ուշադրությանը, Խորհուրդը քննում է հանգամանքները և քննարկում, թե անհրաժեշտ է արդյոք միջոցներ ձեռնարկել՝ ԱՃԹՆ-ի սկզբունքների, ԱՃԹՆ-ի ստանդարտի և Կանոնադրության համաձայն: Նման մտահոգությունները ԱՃԹՆ-ի լիազոր մարմնի առջև բարձրաձայնելու անհարմարություն զգացող ցանկացած անձ կարող է իր մտահոգություններն ԱՃԹՆ-ի Խորհրդի ուշադրությանը ներկայացնել Կառավարման հանձնաժողովի և վերջինիս նախագահի միջոցով:





Ղեկավարվելով այն համոզմունքով, որ երկրի բնական պաշարները պատկանում են իր քաղաքացիներին, ԱՃԹՆ- ն ստեղծել է **գլոբալ ստանդարտ**՝ նավթի, գազի և պինդ օգտակար հանածոների պաշարների բաց և հաշվետու կառավարումը խթանելու համար:

ԱՃԹՆ-ի ստանդարտը պահանջում է արդյունահանող ոլորտի արժեքային շղթայի վերաբերյալ տեղեկությունների բացահայտում՝ սկսած այն բանից, թե ինչպես են տրամադրվում արդյունահանման իրավունքները, մինչև այն թե ինչպես է կառավարությունը կառավարում և բաշխում եկամուտները:

Դրանով ԱՃԹՆ-ն ծգտում է խթանել բազմաշահառու գործակցությունը՝ նպաստելով ավելի առողջ և հաշվետու ոլորտի ծնավորմանը, որը կարող է դրական դեր խաղալ զարգացման գործում:



Արդյունահանող ճյուղերի
թափանցիկության նախաձեռնություն

eiti.org